

ԷԶՄԻԱԾԻՆ



1965

196



ՌԼԺԵ
ԻԲ ՏԱՐԻ
Հոկտեմբեր

ԷԶՄԻԱԾԻՆ


հի 59-III

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ժ

1965





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Քառասունհինգ տարի	3
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը	6
Մեծ ովստավություն Մայր Աթոռում	8
Սրբազ քարզմանչադ տներ Մայր Աթոռում	10
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ	15
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին հետ	17
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ—Գրիգոր Տղա	26
Բ. ՏԱՎՈՒՇԵՑԻ—Նահատակ հայ մտավորականների ծածկանուններ	31
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Պրաֆ.-դոկտ. Արամ Մ. Յրենկյան	37
Ա. Խ. ՍԱՖՐԱՍՅԱՆ—Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի կողմից Քուրդիայի արդարադատության և դավաճանների միևնույնության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու քաֆրները	43
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	49
Ն. Մ. ՊԱՊՈՒՅԱՆ—Քաղաքաշինարարությունը միջնադարյան Սյունիքում	53
Ցուցակ Մայր Աթոռ Ա. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	59



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.
Մայր Աթոռ Ա. Էջմիածնի տպարան, 1965 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Ռ Ա Ս ՈՒ Ն Հ Ի Ն Գ Տ Ա Ր Ի

Նոյեմբերին լրանում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակը:

Հայ ժողովուրդը ամենուրեք, համազգային մեծ ոգևորությամբ, նորանոր նվաճումներով և աշխատանքային սխրանքներով է դիմավորում իր հայրենիքի ազատության, անկախության և ազգային վերածննդյան նշանակալից տարեդարձը:

Վերածնված հայ ժողովուրդը համազգային այս մեծ հանգրվանին հպարտ է և ուրախ երանությամբ այն ժողովրդի, որ երկար դարերի ստրկությունից, թշվառությունից, անարև կյանքից հետո, հերոսական և համառ պայքարով, նվաճել է իր ազատությունը, և արդարորեն հպարտ է իր հայրենիքով, իր մշակույթով, իր նվաճումներով և իր պայծառ ապագայով:

Այս տարի մանավանդ բացառիկ նշանակություն է ստանում Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակի հանդիսությունը այն իմաստով, որ հայ ժողովուրդը, Մայր Հողի վրա թե Սփյուռքի բոլոր հորիզոնների տակ, ազգային գիտակցության, արժանապատվության խորունկ պգացումով և սրտառու միասնությամբ նշեց իր ազգային նահատակության 50-ամյակը:

1915 թվականի ապրիլ 24....:

«Ահավոր բան մը այնտեղ կկատարվի

մուրձին մեջ,

Կսպանեն Ազգ մը այնտեղ, որ կկանք ուներ և շնորհ» (Վ. ԹԵՔԵՅԱՆ):

Հիսուն տարի առաջ, թշնամին փորձում էր հայ ժողովրդի վրա արձակել «ամբողջ չարիքն աշխարհի» և ողջ-ողջ գերեզմանել հայությունը, ոչնչացնել նրա մշակույթն ու ջնջել նրա անունը պատմության էջերից:

1920 թվականի նոյեմբերի 29:

Մի բուռ հայ ժողովուրդ, հյուծված և արյունաքամ, տարագրության մռայլ ճանապարհներից անցած, մահվան անդունդի եզրին հասած, աշխարհի մեծ տերությունների կողմից չարաչար խաբված և դաժանորեն լքված, ոտքի էր կանգնում վիրավոր, բլկտված, բայց արի ու աննկուն և գրում իր պատմության հերոսական էջերից մեկը, երբ

«Հազար տարի էդ երկրում արևն ելավ

արյունոտ

Եվ մայր մտավ արյունոտ, որպես թրով

զարկած աչք,

Երկիրը ծով էր արյան, երզը երկրում՝

մահվան բոթ» (Ե. ՉԱՐԵՆՑ):

Այո՛, կջնջվե՞ր հայ ժողովուրդը նաև հայրենիքում իսպառ ապրիլյան եղեռնից հետո, եթե չծագեր նոյեմբերյան կենսատու այգաբացը:

Այսօր, եղեռնից հիսուն տարի հետո, կա, ապրում և ստեղծագործում է մեր ժողովուրդը:

Դարեր շարունակ, մեր ժողովրդի կենսափիլիսոփայությունն է եղել նահատակությունը վերածել հաղթանակի, խաչելությունը՝ հարության, եղեռնը՝ վերածննդի:

Երբե՛ք, երբե՛ք չի ընկճվել հայ ժողովուրդը ճակատագրի հարվածներից: Մեր ժողովրդի ուժի և հավերժության գաղտնիքը այս գիտակցության մեջ է:

1920 թվականի նոյեմբերի 29-ին, մեր բազմաչար ժողովուրդը վերջապես գտնում էր իր ազգային վերածննդյան ճշմարիտ ուղին, իր պատմության ամենամռայլ և ճգնաժամային պահին:

Շատ բարբարոսներ, դահիճներ անցել են Արարատյան դաշտով, մեր սրտերի վրայով,

տրորել մեր հայրենի սրբազան հողը իրենց ձիերի սմբակների տակ, ավերել, կողոպտել, սպանել գաղանալին ատելությամբ և արյան ծարավով, բայց երբեք և երբեք չեն կարողացել իրենց խավար հոգին հանել, հասցնել Արարատի բարձունքին:

Եկել ու անցել են փոշու նման: Մնացել է սակայն հայ ժողովուրդը, ազատության, լույսի, բարձունքի ձգտող մեր նահատակ, հերոս ժողովուրդը:

Պատմությունը մեր ճակտին գրել էր ոչ թե նահատակությամբ սպառվել, այլ մահվամբ մահը հաղթել:

1920 թվականի նոյեմբերին վերածնվում էր մեր երկիրը, իբրև ազգային պետություն:

Պայծառանում էր հայոց երկինքը, փարատվում էր ահեղ մղձավանջը: Մեր ազգային ճշմարիտ վերածննդյան հուսալի սկիզբն էր դրվում խաղաղության, ապահովության, առաջադիմության պայմաններում:

Այդ ծանր, օրհասական պահին, եղբայրական օգնության ձեռք էր երկարում մեզ բարեկամ ռուս ժողովուրդը:

1920 թվականի նոյեմբերի 29-ից հետո, հայ ժողովուրդը իր բախտը, իր փրկության հույսը ընդմիջտ կապում էր ռուս մեծ ժողովրդի հետ:

Նոյեմբերի 29-ը կռեց, կոփեց մեր ժողովրդի ազգային, հայրենասիրական միասնությունը: Իրականացավ մեր նահատակների երազը: Հայ ժողովուրդը տիրացավ իր հողին, իր ազատության, ստեղծեց հայրենիք, պետություն:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հայ ժողովրդին տվեց այն, ինչը պակասել էր նրան հազարամյակներով— խաղաղություն, ապահովություն, ազգային վերածննդյան հնարավորություն:

Իր ապատագրված հողում և ստեղծված նոր պայմանների մեջ, հայ ժողովուրդը սկսում էր կառուցել իր նոր կյանքը, վերաշինել հայրենի իր բույնը և բուժել իր անցյալի վերքերը:

Զառասուռնիմեզ տարի է անցել ընդամենը, և որքի ու ողբի հայրենիքը դարձել է լույսի և հույսի, հպոր և նոր հայրենիք՝ բովանդակ հայության համար: Հրաշքի համապոր նվաճումներ է կատարել մեր ժողովուրդը:

Այսօր Հայաստանը իր վիթխարի արդյունաբերությամբ, ծաղկուն գյուղատնտեսությամբ, գիտության և մշակույթի բնագավառներում ձեռք բերած աննախընթաց նվաճումներով ոչ միայն արդար, հայրենասիրական հպարտության զգացումներով է լցրել բովանդակ հայ ժողովրդի սիրտը, այլ նաև նվաճել ողջ բաղաբակիր աշխարհի հիացմունքն ու գնահատանքը:

Հայ գիտական միտքը այսօր համաշխարհային ճանաչում է ստացել: Հայ մշակույթի՝ ար-

վեստի, ճարտարապետության, երաժշտության, գրականության, նկարչության նվաճումները տարածում են գտել ամեն տեղ: Մեր հայրենական արդյունաբերության արտադրանքը առաքվում է ավելի քան 65 երկիր, իսկ Հայաստանի գյուղատնտեսական մթերքները միջազգային տոնավաճառներում և ցուցահանդեսներում արժանանում են մրցանակների:

Այդ, երբեմնի հետամնաց, քայքայված ու ավերակ Հայաստանը դարձել է շեն ու ծաղկուն հանրապետություն, իսկ մեր սիրելի քաղաքամայր Երևանը՝ հայ մշակույթի, լուսավորության և հայ նոր կյանքի կենտրոն, իր համալսարանով, բարձրագույն ուսումնական հաստատություններով, գիտահետազոտական հիմնարկներով:

Միայն 1965—1966 ուսումնական տարում Հայաստանում բացվեց 41 նոր դպրոց 22 000 աշակերտական տեղով: Միջնակարգ դպրոցների թիվը 407 է: Հանրակրթական 1277 դպրոցներում այժմ աշխատում են 26 000 ուսուցիչներ, իսկ աշակերտների թիվը հասնում է շուրջ կես միլիոնի:

11 ուսումնական բարձրագույն հաստատություններում և 37 տեխնիկումներում սովորում է 35 000 երիտասարդություն: Միայն այս տարի շուրջ 8000 հոգի ընդունվել է ինստիտուտներում:

Ստեղծագործական բուռն վերելքով է ապրում նաև հայ արվեստը—թատրոն, երաժշտություն, նկարչություն, կերպարվեստ, գրականություն:

Անցնող 45 տարիների ընթացքում Հայաստանը ծածկվել է գրադարանների և ակումբների լայն ցանցով: Գործում են 2800 գրադարաններ, որոնցում ամփոփված են 16 600 000 գրքեր: Վիթխարի վերելք է ապրում գրատպությունը: Միայն այս տարի լույս է տեսել 101 անուն դասագիրք՝ 3,5 միլիոն տպաքանակով:

Տարեցտարի անձանաչելիորեն փոխվում է մեր հանրապետության քարտեզը, ծնունդ են առնում նոր քաղաքներ, ավաններ, որոնց մեջ ապրում և ստեղծագործում են ապագային վառ հույսերով նայող հայ նոր սերունդներ:

Մեր երկիրն իր հազարամյակների պատմության ընթացքում չի տեսել երբեք բնակչության այնպիսի աճ, ինչպիսին ունի այժմ: 1920 թվականին 700 000, իսկ այսօր, Հայաստանի սահմաններում, ավելի քան 2 միլիոն:

Այս բոլորը յուրաքանչյուր հայ մարդու սիրտը լցնում է ազգային հպարտության ամենաամուշ զգացմունքներով:

1920 թվականից հետո, հայրենիքը բացել է իր մայրական գիրկը նաև 1915 թվականի ազգակործան եղեմնից մազապուրծ ազատած, աշխարհի չորս ծագերին ցրված իր հայրենապուրկ զավակների առաջ և կանչում է նրանց բոլորին դեպի տուն, դեպի հայրենի օջախ:

վերջին քսան տարիներին ավելի քան 200 000 արևմտահայեր է ընդունել հայրենիքն իր գրկում, ու քայլում են դեռ քարավանները օտար ավերից դեպի հայրենի փրկարար եկերքը: Այսօր մեծագույն փաստը, որով նշանավորվում է մեր ժողովրդի ազգային վերածնունդը, կոտորակված հայության վերամիավորման փաստն է, հայ պետականության գոյության փաստը հայրենի հողի վրա:

Մայր Հողի հայությունը բառասունհինգ տարիներից ի վեր իր ազգային վերածնության, պետականության, իր պայծառ ապագայի հիմքերն է ամրապնդում օրերի հետ և շենացնում համայն հայության հայրենիքը:

**«Ծաղկի՛ր, ապատ իմ հայրենիք,
Երջանկության դու իմ բևեռ»:**

Այսօր Սովետական Հայաստանը հսկա փարոսի նման լուսավորում է բովանդակ հայության հաղթական երթուղին:

Ինչ ստեղծվել է հայ ժողովրդի բառասունհինգ տարվա ջանքերով, դա անկողոպտելի սեփականությունն է հայ ժողովրդի:

Այսօր Արարատի դիմաց, Արարատի խորհրդով, հայրենի հողի վրա, հայ ժողովուրդը վառել է իր հավերժության խարույկը և իր ձեռքն է վերցրել իր ճակատագիրը, և եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում, վառ հավատով է նայում դեպի իր պայծառ ապագան:

«Ծաղկի՛ր, ապատ իմ Հայրենիք»:


Հայ ժողովուրդը արդար հպարտությամբ նշանավորում է իր ազգային մեծ տոնը՝ Նոյեմբերի 29-ը:

Համազգային այս մեծ տոնի երջանիկ առիթով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հայ հավատացյալ ժողովուրդը, իր հայրենանվեր Հայրապետի շրթունքներով, աղոթում է սրտեռանդն, որ «նախախնամեալ պահեսցի արևելեան կողմն աշխարհիս և Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»:

Հավերժական փառք ապրիլյան եղեռնից հրաշափառապես հարություն առած մեր ժողովրդին:

Հավերժական փառք մեր վերածնված Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, նրա փառապանծ բառասունհինգամյակի առթիվ:





ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 9-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1965—1966 ուսումնական տարեշրջանի բացումը:

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության եպիսկոպոս անդամներով:

Ճեմարանի բացման հանդիսության ներկա էին միաբան հայրեր, դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և ողջ ուսանողությունը:

Որոշյալ ժամին Վեհափառ Հայրապետը մուտք է գործում Հոգևոր Ճեմարանի հանդիսությունը սրահը, մինչև ուսանողական երգչախումբը, ղեկավարությամբ հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանի, հոգեկան բարձր տրամադրությամբ երգում է «Աշակերտք Քրիստոսի» շարականը:

Հոգևոր Ճեմարանի նորընտիր վերակացու արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը Մատթեոսի Ավետարանից ընթերցում է սերմնացանի առակը (ԺԳ 4—9):

Գլխարանի ուսանող բարեշնորհ Գրիգոր սարկավազ Բունիաթյանը ներշնչված ընթերցում է «Աղբիս առ Ս. Հոգին» Նարեկացու հոյակապ էջը (Բան ԶԴ):

Ճեմարանի երգչախումբը կատարում է թարգմանչաց շարականը՝ «Որք զարդարեցին», որպեսզի ուսանողության սրտի և մտքի անդաստանները զարդարվեն «տնօրինաբար» Անեղի բազմապիսի շնորհներով և իմաստություններով:

Հոգևոր Ճեմարանի նորընտիր վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողա-

պալյանը ուսումնական նոր տարվա սկզբնավորության բարեբաստիկ առթիվ ուխտի, ծառայության, ողջույնի և բարի գալստյան քերթ խոսքեր է ուղղում դասախոսական կազմին և ողջ ուսանողության:

«Վեհափառ Տեր:

Աստուծո օգնականությամբ և Ձերդ Ս. Օծության օրհնությամբ, սեպտեմբերյան այս առավոտյան, Հոգևոր Ճեմարանի դռները դարձյալ բացվում են, դիմավորելու համար 1965—1966 ուսումնական տարեշրջանը:

Անցյալ տարիները դարձան պատմություն: Նորը հավատում ենք որ լինելու է է՛լ ավելի արդյունավետ, նամանավանդ երբ Ձերդ Սրբությունը, ինչպես միշտ, այս տարի էլ Իր հայրական հոգատարությամբ միացնի նաև Իր խրատներն ու օրհնությունը, այս դժվարին նպատակի իրագործման ի խնդիր:

Հոգևոր Ճեմարանը շատ հին կրթական հաստատություն է: Դարեր շարունակ նա լուսավորել է Եկեղեցու սպասավորության կոչված հոգիների սիրտն ու միտքը: Երանելի վարդապետներ և եռամեծ սուրբեր են դաստիարակվել ու աճել նրա հովանու տակ:

Տարեմտի այս օրը սրբազան է ուսանողության համար: Ամառային կաղզուրիչ հանգըստից հետո կազմակերպյալ աշխատանքի ծարավն ունեն բոլորը, և գիտեմ, թե ինչպիսի՛ հույզերով և ակնկալություններով սպասում են աշխատանքի պահին:

Բոլոր ճեմարանականների առաջ դրվել է մի սրբազան նպատակ: Այս ասպարեզը սուրբ է, որովհետև ծառայության ասպարեզ է և իրագործելի միայն ու միայն աստվածային կոչմամբ և ծառայության ճանապարհով: Վստահ ենք բոլորս, որ դուք՝ ուսանող-

ներդ եկել եք այստեղ անսալով ձեր ներքին կանչին, որպեսզի մոտիկ ապագային նվիրվեք ծառայության գործին մեր Եկեղեցու անդամատանում:

Հայ հոգևորականի և հատկապես նվիրյալ կուսակիցների կարիքը մեր օրերում ամեն տեղ զգացվում է: Գո՛ւր, մատղաշ հոգիներ, վաղը ատորացած հասկեր պիտի դառնաք Տիրոջ այգու համար և հոգևոր կարյաց մեր ժողովրդի: Անձնապես առիթն եմ ունեցել գտնվելու մի շարք հայկական գաղթօջախներում և գիտեմ, թե ինչքա՛ն սրբազան է ու անհրաժեշտ հայ հոգևորականի ծառայությունը:

Տարիներ առաջ ես էլ այս գրասենյակների առաջ գլուխ եմ խոնարհել, հավաքելու համար հոգևոր, իմացական, բարոյական և հայրենասիրական պաշար: Այսօր սակայն ինձ համար պատկերը տարբեր է: Երեկ ուսանող, այսօր՝ ուսուցանող: Սակայն ուսուցանելուն և ուսանելուն մեջ գրեթե տարբերություն գոյություն չունի: Կյանքը, սկզբից մինչև վախճանը, ուսանելու մի շրջան է, մեծի և փոքրի համար:

Այս մտածումներից հետո, ջերմապես շնորհավորում եմ Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և օգնական վերակացու հայրերին: Ձեռք-ձեռքի տված և միախոհ, բոլորս պետք է ձգտենք մի նպատակի. դա այս նոր սերնդի հոգևոր դաստիարակության հարցն է:

Միրելի՛ ուսանողներ, բարի եկաք բոլորդ ի Հոգևոր Ճեմարան, Ս. Էջմիածին: Թո՛ղ քիչ առաջ ընթերցված Ավետարանի ոգին սերմնացանի առակով իրանականա արդյունավետությամբ, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, դասախոսական կազմի նվիրյալ աշխատանքով և ձեր ժրջանությամբ:

Ահա բացված են դռները ձեր առաջ Հոգևոր Ճեմարանի ուսումնական նոր՝ 1965—1966 տարվա:

Վեհափա՛ռ Տեր, բաշխեցեք Ձեր օրհնությունները մեզ բոլորիս: Օրհնեցեք այս լույսի վառարանը, ջերմացրեք Ձեր հայրական շնչով մեր հոգիները, որպեսզի բացվեն մեր աչքերը՝ ճանաչելու համար ճշմարտությունն ու լույսը:

«Մեք աշակերտիմք և հետևիմք»:

Այնուհետև, հանդիսավոր լուծյան մեջ, Վեհափառ Հայրապետը խոսք է առնում: Նորին Ս. Օծովյունը շնորհավորում է Հոգևոր Ճեմարանի վերամուտը, օրհնում է դասախոսական կազմին և ուսանողությանը, խոսելով գեղեցիկ և իմաստալից մի խրատական՝ ուղղված ուսանողության, ճեմարանականի կողման, Հոգևոր Ճեմարանի առաքելության և նպատակների մասին, հորդորելով, որ ուսանողությունն իր քրտնաջան աշխատանքով, կարգապահությամբ, ծառայության և նվիրման ոգով արդարացնի Հայոց Հայրապետի հույսերն ու հայ հավատացյալ ժողովրդի ակնկալությունները:

Նորին Ս. Օծովյունն իր հայրական ջերմ խրատականը՝ վերջացնում է բուռն ծափահարությունների ներքո, օրհնելով բոլորին:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ից և խմբովին երգված «Հայր մեր»-ից հետո, տեսչական ու դասախոսական կազմը և ուսանողությունը մոտեցան ի համբույր Նորին Ս. Օծովյան Աջին:

Այնուհետև, ժամը 12-ին, Վեհարանում տեղի ունեցավ մանկավարժական խորհուրդ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, որտեղ Նորին Ս. Օծովյունը, ուսումնական նոր տարվա առթիվ, շնորհավորելով դասախոսական կազմին, արեց մեթոդական մանկավարժական թելադրություններ:

Նորհրդակցությունում ելույթ ունեցան Գեղազույն Հոգևոր Նորհրդի անդամներ պրոֆեսոր Ա. Առաքելյանը, Գ. Հակոբյանը, Ճեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետը, դասախոսներ Ա. Հատիտյանը և Ս. Անթոսյանը:

Սեպտեմբերի 9-ին ցնծագին հնչեց Ճեմարանում 1965—1966 ուսումնական տարվա առաջին զվարթ զանգը:

Սեպտեմբերի 10-ից սկսվեցին կանոնավոր դասախոսությունները Հոգևոր Ճեմարանում:

Այս տարի Հոգևոր Ճեմարանի ուսանողության թիվը 27 է, բաշխված հետևյալ դասարանների վրա. Ա դասարան 7, Բ դասարան 5, Գ դասարան 7, Ա լսարան 4, Գ լսարան 4:

Ուսումնական այս տարվա համար արտասահմանից սպասվում են շուրջ 7—10 ուսանողներ:





ՄԵԾ ՈՒՆՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Կիրակի, 3 հոկտեմբերի 1965 թ.:

Վեհափառ Հայրապետի գահակալության 10-րդ տարեդարձի պաշտոնական հանդիսությունները թեև հետաձգվել են մեկ ամիս ժամանակով, այնուամենայնիվ սրտագին ուրախությամբ և գոհունակությամբ պետք է արձանագրել, որ հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, որպես նախատոն, սկսվեցին տասնամյակի հոբելյանական հանդիսությունները, բոլորովին ինքնարուխ և համաժողովրդական բնույթով:

Հայրենի ոսկե աշունը իջել է Արարատյան դաշտի վրա:

Պայծառ, ջերմ, արևոտ օր, Հայաստանի ջինջ և բուրումնավետ աշնան օրերից մեկը:

Մայրաքաղաքից, շրջաններից, մոտ ու հեռու վայրերից հոսում է ուխտավորների շարանը դեպի Մայր Աթոռ:

Մայր Տաճարը, մայրավանքի շրջափակը լիքն են հավատացյալների: Սփյուռքի շատ վայրերից՝ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից, Պարսկաստանից և Իտալիայից եկած ավելի քան 250 ուխտավորներն Մայր Տաճարի երկու դասերում գրավել են իրենց տեղերը և աղոթում են երկյուղածորեն, ուխտավորի հատուկ հուզումով և խորին ապրումով:

Մայր Տաճարի զանգերը ղողանջում են ուրախ և տոնական:

Ժամը 12-ին, Նորին Ս. Օծությունը եկեղեցական թափորով մուտք է գործում Մայր

Տաճար: Մայրավանքի բակում հավաքված բազմությունը խանդավառ արտահայտություններով կանգնել է երկշարք Վեհարանից Մայր Տաճար տանող շքերթի ճանապարհի վրա, տեսնելու Հայոց Հայրապետին, ստանալու Նրա օրհնությունը:

Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Կիզիրյանը՝ ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդական փոխանորդը:

Հնչում են հայոց սուրբ պատարագի մեղեդիները, Մայր Տաճարի երգեցիկ խմբի անթերի կատարումով:

«Հայր մեր»-ից առաջ Ավագ Սեդան է բարձրանում Հայոց Հայրապետը:

«Ի վերայ Աշոյն և էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան» բնաբանով ոգեշունչ և հայրենասիրական քարոզ է ասում Վեհափառ Հայրապետը, բոլոր ուխտավորների և հավատացյալների սրտերը լցնելով հավերժական Ս. էջմիածնի լույսով, խորհրդով և փառքով ու վերածնված հայրենի երկրի պայծառ տեսիլքով: Հայոց Հայրապետի պատգամն է դա, իր գահակալության տարեդարձի երջանիկ առիթով:

Ուրախ է Հայոց Հայրապետը, որ այսօր պայծառ է բովանդակ հայության Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. էջմիածինը, որն իր մայրական թևերի տակ խնամում է ողջ հայությունը, ինչպես «հալ զձագս իւր ընդ

թևերն իւրովը», երեկ, այսօր և հավիտյան: Ուրախ է Հայոց Հայրապետը, որ ապրիլյան եղեռնից հիսուն տարի հետո, կենդանի է հայ ժողովուրդը, իր հայրենի հողի վրա վերածնված, և Սփյուռքի բոլոր հորիզոնների տակ, համախմբված իր Մայր Եկեղեցու հովանու տակ, կանգուն իր հավատով, իր հայրենասիրությամբ:

Հայոց Հայրապետի պատգամ-բարոգր լսվում է հափշտակությամբ, արցունքով:

«Երանի ձեզ, որ Ս. էջմիածինն ունիք»:

Քարոզի մեջ հայտնված այս միտքը ոչ միայն սրտագին վկայությունն է օտարների մեր մասին, այլ նաև ապրումը յուրաքանչյուր հայի, Առաքել Դավրիժեցու օրերից մինչև այսօր, վաղը և գալիք օրերին:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգիստ խարբերդցի ուխտավորների խնդրանքով, եղեռնին զոհ գնացած ավելի քան երկու հարյուր հազար խարբերդցի նահատակների հիշատակին:

Ժամը 2-ին, եկեղեցական արարողության ավարտին, Հայոց Հայրապետը հանդիսավոր թափոռով առաջնորդվում է Վեհարանի գահասրահը:

Հանուն ամերիկահայ երիտասարդաց միության, Վեհափառ Հայրապետի տոնը շնորհավորում է հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Կիզիրյանը սրտագին և ջերմ բարեմաղթություններով:

Այս երջանիկ առթիվ, Նորին Ս. Օծության տրվում են նվերներ:

Հանդիսության վերջում օրհնության և շնորհակալության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, կոչ ուղղելով բոլոր ուխտավորներին՝ վառ պահել օտար հորիզոնների տակ, մեր պապերի հավատի հուրը, բարեպաշտ ոգին, հայրենասիրական ավանդությունները: Նորին Ս. Օծության խոսքը հաճախ ընդհատվում է ծափահարություններով:

Հայրապետական օրհնության խոսքից հետո սկսվում է աջահամբույրը: Բոլոր ներկաները, համբույրի մեջ դրած իրենց պաշտամունքն ու սերը, ներկայացնում են Հայոց Հայրապետին, որպես որդիական հարգանաց տուրք և երախտագիտություն:

Այնուհետև, Վեհարանի հանդիսասարահում, ուխտավորների և հյուրերի պատվին, տրվում է համերգ Երևանի ֆիլհարմոնիայի լարային քառյակի կատարմամբ, մասնակցությամբ շնորհալի արվեստագետներ Լևոն Մամիկոնյանի (առաջին ջութակ), Մարտին Երեցյանի (երկրորդ ջութակ), Ռուբեն Ալթունյանի (ալթ) և Ֆելիքս Սիմոնյանի (թավջութակ):

Համերգի ծրագրում տեղ էին գտել Մոցարտի «Սոլ մաժյոր»-ը, է. Միքոյանի «Անտունի»-ն (վարիասիոն), Կոմիտաս վարդապետի «Ալ ալլուդ»-ը, «Երկինքն ամպել ա»-ն, «Էջմիածնի պար»-ը և «Գարուն ա»-ն:

Համերգը ջերմորեն ընդունվեց և ծափահարվեց բոլոր ներկաների կողմից:

Համերգից հետո, ներկաները հյուրասիրվեցին հայրենի աշխարհի քաղցրահամ խաղողով և դեղձով:





ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ, «Տօն սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրոպբայ, Նղիշէի, Մովսիսի Քերթովին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն»:

Հայ մշակութի մեծ տոնի առթիւ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և սարկավագական ձեռնադրութիւն է կատարում:

Հոգևոր ձեմարանի Գլխարանի երկու ուսանողներ՝ ուրարակիրներ Դավիթ Դիլանյանը և Հովհաննես Հակոբյանը, որոնք շուտով ավարտելու են ձեմարանի վեցամյա դասընթացը, սարկավագ են ձեռնադրվում:

Սուրբ պատարագի ընթացքում Հոգևոր ձեմարանի ողջ ուսանողութիւնը հաղորդվում է:

Սուրբ պատարագից հետո, նորընծա սարկավագները առաջնորդվում են Վեհարան՝ Նորին Ս. Օծության օրհնութիւնն ընդունելու:

Ժամը 12.30-ին, Հոգևոր ձեմարանի հանդիսությանց սրահում, տեղի է ունենում գրական ցերեկույթ՝ նվիրված թարգմանիչ վարդապետների հիշատակին և գործին:

Հանդիսության նախագահում է Վեհափառ Հայրապետը, ներկա են Մայր Աթոռի միաբանները, ձեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը, ուխտավորներ և հյուրեր:

Հանդիսութիւնը բացվում է «Որք դարձարեցին» թարգմանչաց շարականով, որից հետո բացման խոսք է ասում վերատեսուչ վարդապետը, վեր հանելով օրվա ազգային-եկեղեցական տոնի մեծ նշանակութիւնը:

Ա. լսարանի ուսանող Սարգիս Հալեպլյանը արտասանում է Սիամանթոյի «Գյուտին փառքը», Գլխարանի ուսանող Գրիգոր սարկավագ Բունիաթյանը՝ Հ. Ճ. Սիրունու «Խոսք լույսի տոնին» արձակ բանաստեղծութիւնը:

Ձեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Տ. Արսեն վարդապետ Բերբերյանի ղեկավարութեամբ, կատարում է «Աշակերտք

Քրիստոսի» և «Նմանեալ Մովսեսի» շարականները:

Գլխարանի ուսանող Արարատ Գալըստյանը դաշնամուրի վրա նվագում է Մոցարտի «Սոնատա»-ն:

Օրվա գլխավոր բանախոսն է ձեմարանի դասախոս պր. Գրիգոր Գյուլյանը, որն իր բովանդակալից ճառի մեջ ասում է.

«Ամեն տարի, հոկտեմբերին, երբ դեղնածամ շուշու աշունը իր ոսկիներն է շաղ տալիս Հայոց աշխարհի վրա, բնության խաղաղավետ լուսնյան մեջ, Հայ եկեղեցին վառում է իր կանթեղները, նշելու համար մեր թարգմանիչների սուրբ հիշատակը: Դարերից եկող, անուսանելիների միջով անցած, պատմութեան արհաւիրքները հաղթահարած մեր ժողովրդի հոգին ջահված երկնքի պես մի անհուն եկեղեցի է, որի կամարների տակ անմարելի կրակով վառված որպես կանթեղներ, առկայծում են մեր թարգմանիչների նվիրական անունները: Այդ նրանք էին, մեր թարգմանիչները, Մեսրոպի հոգու զավակները, մեր նորոգ գրականութեան առաջնեկները, որոնք երկրորդ անգամ հայացքին Հայոց աշխարհը, առարկայացրին Բանը, դաշնավորեցին մտածումը, կաղապարեցին ձեռքը, և, որպես երկրորդ հրաշք, մեզ մատուցեցին մեր լեզուն՝ իր արքայական մեծվայելչութեամբ: Մեր թարգմանիչները սոսկ թարգմանիչներ չէին, այլ ողջ մատակարարներ, ինքնամոռաց ոգևորութեան և նվիրման առաջամարտիկներ, որոնք ճանաչելով իմաստութիւնն ու խրատը, սովորելով հանճարի խոսքերը, լուսավորեցին մեր աշխարհը, ձեռնարկեցին ու պայծառացրին մեր ինքնագիտակցութիւնը, և դարձան այն գրանիտյա վեմը, որի վրա բարձրացավ մեր բարոյական միասնութեան և ազգային գոյութեան անխորտակ շենքը:

Մեր եկեղեցին իր հիմնադրման առաջին իսկ օրից իրեն նույնացրել է մեր ժողովրդի մայր զգացողութեան հետ, անսխալական բնազդով, հանճարեղ հեռատեսութեամբ սրբացրել, ազգային եկեղեցական տոնի է

վերածել այն ամենը, ինչ կենսական, բախտորոշ նշանակություն ունի մեր ժողովրդի համար: Այսօր Հայաստանյայց Ս. Եկեղեցին տոնում է իր թարգմանիչների հիշատակը:

Ովքե՞ր էին մեր թարգմանիչները: Դրանք թվով ոչ շատ, խոռվյալ, անհանգիստ հոգով այն երիտասարդներն էին, որոնց վարում, առաջ էր մղում մեր ժողովրդի ճակատագիրը մեր պատմության ամենամոռաց շրջանում: Դրանք ուսումնատենչ, լուսածախավ այն աշակերտներն էին, որոնք Միջագետքում, Մեսրոպի կարգադրությամբ, բաժանվեցին երկու խմբի. մի խումբը մնաց Մեսրոպի հետ Եղեսիա և Ամիդ քաղաքներում, իսկ մյուս խումբը գնաց Սամոսատ, տեղի ձեռագրերը ուսումնասիրելու և հունարենում կատարելագործվելու համար: Թարգմանիչները Ս. Մեսրոպի և Ս. Սահակի այն աշակերտներն էին, որոնք գրերի գյուտից հետո կարող էին գործակից լինել իրենց ուսուցիչներին, թե՛ ուսումնասիրության, թե՛ թարգմանությունների ժամանակ: Այս աշակերտներից մեկ հայտնի են Հովսեփ Վայոցձորեցին, Ղևոնդ երեց Վանանդեցին, ազգային-կրոնական պատերազմի երկու խոշոր ղեմերը, Եզնիկ Կողբացին, Կորյուն Սքանչելին, Հովսեփ Պաղնացին, Հովհան Եկեղեցացին, որոնք ընդհանուր անունով կոչվեցին առաջին աշակերտներ կամ թարգմանիչներ: Այս առաջին աշակերտները իրենց ուսուցիչների առաջնորդությամբ ցրվեցին Հայաստանի զանազան կողմերը, ժողովեցին բազմաթիվ «ուժեղ և քաջասուն, փափկաձայն, երկարողի» երիտասարդներ, և նորաբաց հայագիր դպրոցների մեջ նրանց մատակարարեցին ժամանակի առաջավոր կրթությունը: Այս երկրորդ աշակերտներից են Սովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, Գյուտ և Հովհան Մանդակունի կաթողիկոսները, ոսկեծղի Եղիշեն, Ղազար Փարպեցին և շատ ու շատ ուրիշներ, որոնք հայտնի են երկրորդ աշակերտների կամ կրտսեր թարգմանիչներ անվան տակ:

Մեր թարգմանիչների ամենամեծ գործը հանդիսացավ Աստվածաշնչի հայացումը: Այդ թարգմանությունը ներշնչման ուժով և իր վսեմ պարզությամբ հիացրել է շատ օտար բանասերների, որոնք այն անվանել են «թագուհի թարգմանություն»:

Աստծուն կարելի է հասնել միայն հզոր ներշնչմամբ և հավատով. ուրիշ ճանապարհ չկա: Մեր աննման, պաշտելի թարգմանիչները, իրենց հավատի ուժով և հզոր ներշնչմամբ Աստծուն, Քրիստոսին և մարգարեններին հարկադրեցին հայերեն խոսել: Քրիստոսը, իր սիրտ անհաս բարձունքից, առաջին անգամ հայերեն խոսեց իր նորադարձ հոտի,

քրիստոնյա հայության հետ: Աստվածաշնչի թարգմանությունից հետո միայն Հայաստանն իրապես քրիստոնյա դարձավ, քրիստոնեությունը վերափոխեց, բարեկրթեց, վեհացրեց հայ ժողովրդին: Ընդունելով քրիստոնեությունը, հայությունն իրեն վերագտավ իր ամենաբարձր որակի մեջ: Քրիստոնեությունը դարձավ մեր ազգային միության շաղախը, այն հզոր բուրան, որ դարբնվեց մեր ազգային ինքնագիտակցությունը: Պատահական է արդյոք, որ քրիստոնեական թարգմանական գրականությունից անմիջապես հետո, մեկ մոտ զարգացավ պատմագրությունը, այդ գերազանցապես հայրենասիրական գրական տեսակը: Մեր թարգմանիչներից Խորենացին և Եղիշեն անկրկնելի, եղակի անուններ են մեր ժողովրդի ոգու պատմության մեջ: Նրանց պատմությունները գրված են սրտի կրակով, արվեստի կախարհիչ ուժով: Նրանք պատմագիրներ չեն միայն, այլ ոգու ճարտարապետներ, որոնց ստեղծած ավանդական և պատմական կերպարների նմանողությամբ, դարերի ընթացքում, ձև է ստացել, կազմավորվել է մեր ազգային բնավորությունն ու նկարագիրը:

Թարգմանիչները Մեսրոպյան գործի շարունակությունն են և արդյունավորումը: Նրանք ծիածանեցին հանճարային ազաբացը մեր աշխարհի վրա և դարդարեցին դարը: Թարգմանիչներից ամենամեծը ինքը Մեսրոպն է, հավիտենական Ուսուցիչը: Մեսրոպը հայ արգանդից ծնված ամենամեծն է, եղակին, անկրկնելին, որի նմանը դեռ երկրորդ անգամ մեր աշխարհը չի ծնել:

Մեսրոպը իր թարգմանիչ աշակերտներով այն սահմանագիծն է, որից այս կողմ սկսվում է նոր հայությունը, իսկական, վավերական հայությունը, այն հայությունը, որի զավակներն ենք մենք: Հայությունը հայ դարձավ Մեսրոպից հետո միայն: Մեսրոպը և իր թարգմանիչ աշակերտներն էին, որ թե տվին մեր հոգուն, նոր երազ վառեցին մեր աչքերի մեջ, կույեցին հզորագոր բանականների ղեմ, և իրենց վանքերով, ուսումնարաններով, երկաթագիր, մագաղաթյա լույս մատյաններով հաղթեցին, ապահովելով իրենց փոքրիկ, բայց սիրեցյալ ժողովրդի հավիտենական գոյությունը: Ահա անկրկնելին Մեսրոպի, սուրբ Սահակի և նրանց թարգմանիչ աշակերտների գործի բուն արժեքն ու համազգային նշանակությունը: Նրանք չկան այսօր, բայց ապրում են մեր մեծասքանչ լեզվի ամեն մեկ խոսքի, ամեն մեկ վանկի լույս հնչյունների մեջ, վերանորոգվում, նոր կյանքով են ապրում ամեն մի նոր ծնված

հայ մանկան հայաշունչ առաջին թոթովանքի, առաջին ճիշի մեջ:

Փա՛ռք և օրհնություններ թարգմանիչներին հիշատակին:

Ապա խոսք է առնում հյուրաբար Մայր Աթոռում գտնվող ծանոթ մտավորական և «էջմիածին» ամսագրի աշխատակից Հ. Ծ. Սիրունին, որը հանդես է գալիս ուսանողության ուղղված հետևյալ գեղեցիկ ուղերձով.

«խոսք անոնց համար, որոնք լույս տվին մեզի

Այն օրերուն, երբ հայ Սփյուռքը, հեղեղեն քշված, լաստեր կփնտռեր կառչելու համար անոնց, փորձեց փարիլ նաև տոներուն՝ անոնց ուժովը կազդուրելու համար իր հոգին և դիմանալու համար վաղվան:

Այդ տոներեն մեկը, զոր ան նվիրագործեց շուրջ շորս տասնամյակ առաջ, Հայ Մշակույթի տոնն էր:

Եվ առանց պատճառի չէր, որ այդ տոնին համար ան որդեգրեց թարգմանչաց օրը:

Թարգմանչաց տոնը, մեզ համար, ոգեկոչումն էր այն մեծ սերունդին, որ ավելի քան տասնհինգ դար առաջ լույսի ճամբան բացեր էր հայ ժողովուրդին:

Ըմբռնելու համար դերը շքեզ այդ հույլին, պետք է միտք բերել դարը, զոր կապեր հայ ժողովուրդը քրիստոնյա դառնալի հետո:

Վորսնցուցած իր կապը իր հին ավանդությանց հետ, ան ի վիճակի չէր եղած նոր ավանդություն ստեղծելու իրեն: Քրիստոս չէր հայացած դեռ Զէր կրնար իր սեփական լեզվով աղոթել հայր իր նոր Աստուծուն:

Հույնն ու ասորին իրենց ափին մեջ էին առեր հայ հոգին: Անոնց լեզվով էր, որ Աստված կխոսեր հայ ժողովուրդին հետ, և անոնց լեզվով էր դարձյալ, որ հայ ժողովուրդը իր սիրտը իր Աստուծուն կբանար: Եվ ադի՛հ՝ Հայ Եկեղեցին խորթ էր հայ ժողովուրդին:

Ամբողջ դար մը մաքառեցավ Հայ Եկեղեցին՝ նույնանալու համար հայ ժողովուրդին հետ:

Բայց ան չկրցավ:

Հայ ժողովուրդը չկրցավ ճանչնալ իր նոր Աստվածը, ու չկրցավ հաղորդվիլ անոր շունչով, որովհետև անոր խոսքը չէր հասներ իրեն:

Ան իր Ս. Գիրքը չուներ, որովհետև դեռ իր հարազատ տառերը չուներ հայ լեզուն:

Ամբողջ հարյուրամյակ մը օտարին գերի մնաց ան այսպես:

Ու այդ գերութենեն ազատագրվելու ճիգն էր, որ պիտի ստեղծեր տառ ու գիրք, միտք ու ոսկեդար:

Թարգմանչաց տոնը խորհրդանշանն է ազատագրության այդ ճիգին:

Հայ ժողովուրդի հոգեկան այդ ճիգը հասունցավ բախտավոր պահու մը, երբ Հայոց աշխարհը կապեր խաղաղության բանի մը տարի, ու երբ, երկար շրջան մը խեթով դիտելի հետո դիրար, հայ արքունիքն ու Հայ Եկեղեցին հաշտ էին հիմա, ու բարյացակամ իրարու հանդիպ:

Հայ հոգին, ազատագրվելու իր այս ճիգին մեջ, վճարված էր ու Սահակը հովանավոր ունեցավ՝ արդարև իրեն: Բայց այդ փորձը հաջողությամբ պիտի չպսակվեր, եթե չհայտնվեր հանկարծ այն հսկան, որ Մեսրոպ Մաշտոցն էր:

Եվ ստուգվիլ, Մեսրոպ Մաշտոցին է, որ կպարտինք առաջին հաղթական գրոհը հայ հոգիին ազատագրության՝ տառերու գյուտը:

Տառերու գյուտը սակայն սկիզբն էր միայն: Դեռ շատ ճիգ պետք էր, որպեսզի հայ տառը իր փառքն ստեղծեր:

Պետք է հասուննար սերունդ մը երկու մեծ վարդապետներու կողքին, հայ մտքին հորիզոն բանալու համար, լույս սփռելու համար հայ աշխարհի մեջ:

Այդ սերունդին կպարտինք մեր ոսկեդարը: Թարգմանչի համեստ տիտղոսը միայն կրեց ան, որովհետև թարգմանություններով սկսավ իր տքնությունը:

Բայց իր թարգմանություններն էին, որ դարագլուխ բացին հայ հոգեկան աշխարհին: Աստվածություն թարգմանությունն ինքնին անկյունաքարն եղավ այդ մեծ տքնության, և իզուր չէր, որ «Թարգմանությանց թագուհի» որակեցին հայերեն Աստվածաշունչը:

Ու երկու սերունդ, կցված իրարու և մեր պատմության մեջ հավերժացած առաջին և երկրորդ թարգմանիչներ անունով, մեզ տվին հույլը մեր պատմաբաններուն, մտածողներուն և բանաստեղծներուն:

Հայ մշակույթը երկու մեծ վարդապետներով և անոնց ստեղծած զույգ սերունդով կսկսի այսպես:

Հայ լեզուն անոնց օրով էր, որ հասավ իր բարձունքին: Տարակույս չունենանք, որ ան արդեն իր դասական ձևը գտած էր դարերու ընթացքին և ոսկեդարը պատրաստ գտավ զայն իրեն: Բայց հիմա անոր գեղեցկությունը իր վերջնական ձևն առավ, և դարերու մեջն քայլեց այլևս հպարտ ու խոբխո:

Եվ այս հայ լեզուն խարիսխն եղավ հայ մշակութիւն և զայն դարերուն հանձնեց, որպեսզի անոր հետ հայ հոգին փոխանցվի սերունդն սերունդ:

Փոքր ժողովուրդը, որ մերն է, իր մշակույթով միայն մեծ եղավ:

Եվ իրավ ալ, հայ մշակույթն էր, որ զոգեց հայ ժողովուրդի բոլոր դարերը:

Հայ մշակույթն էր, որ դիմագիծ տվավ հայուն կրոնքին, ու դիմացուց զայն: Հայ մշակույթն էր, որ ստեղծեց հայրենիք ու հայրենասիրություն:

Տոնելով թարգմանչաց օրը, հայ ժողովուրդը իր մշակույթն է, որ կփառաբանե իր բովանդակ հանգրվաններուն մեջ, որովհետև սերունդը, որ Ոսկեդարը ստեղծեց, իր շունչն ու հոգին փոխանցեց նաև իր հաջորդներուն:

Եղիշեն ու Խորենացին, Եղնիկն ու Դավիթ Անհաղթը, Կորյունն ու Փարպեցին կղզիացած երևույթներ շմանցին մեր պատմության մեջ: Անոնց շունչը դարերի դար ուստոսանց, հասավ Անանիային ու առաջ քալեց, նարեկացիին մեջ գերագույն բարձունքն հասավ, ու հետո մեզ պարզեց Եկորձալին, ու գնաց կաթիլ-կաթիլ հոսելու սերունդներու հոգիին մեջ, լույս ստեղծելով իր ճամբուն վրա, ու կոթողներ ստեղծելով իր ամեն մեկ հանգրվանին:

Լույսի այդ սերմնացաններուն երկար շարանն է, որ կտոնախմբե այսօր Հայ Եկեղեցին հանձինս թարգմանիչներուն, ու տոնախմբելով զայն, անգամ մը ևս ծունկի կկանչե մեզ հիշատակին առջև դմալլեի այն մարդոց, որոնք իրենց հոգին քամեցին, որպեսզի լույս տան մեզի:



Հուլիս պատկերի մը ներկա եղանք մենք այսօր Մայր Տաճարին մեջ: Զեմարանը հաղորդվեցավ խմբովին: Հոգևոր խորհուրդի մը մատակարարությունն ավելի բան մը կար այդ ծիսակատարության մեջ: Ինձի այնպես թվեցավ, թե անոնք Տիրոջը Սեղանին կմոտենային ոչ միայն մաքրելու համար իրենց հոգին աշխարհի բոլոր գծուձ բաներին, այլ զայն բանալու համար սրբազան այն հուռութեան, զոր օրվան տունը կբաշխե, — հաղորդիլ լույսին, որ դարերու խորեն կուգար:

Հայ Եկեղեցին սուրբեր շատ ունի: Բայց այդ սուրբերուն մեջ անոնք եղան մեծ ու հավերժական, որոնք մեզի տվին լույս և իմաստություն, որովհետև այդ լույսն ու իմաստությունն էին, որ դիմացուցին մեզ, պաշտպանեցին մեր հոգին, անխոցելի դարձուցին Հայ Եկեղեցին:

Մերձենալ անոնց հիշատակին, կնշանակե դարերուն մեզ բերած լույսը ծծել, և ամրանալ հոգով: Կնշանակե նույնանալ հայ ժողովուրդի անցյալ փառքին հետ ու խառնվիլ վաղվան:

Հայ Եկեղեցին տոներ ևս շատ ունի: Բայց չկա ավելի մեծ տոն, բան այն մեծարանքը, զոր Հայ Եկեղեցին կընծայե հայ ժողովուրդի դարավոր ճիգին բարձունք հասնելու, որովհետև այդ ճիգն եղած է, որ զայն անհողող դարձուցած է դարերուն ու ցեղերուն դեմը, քաջ է բրած զայն մաքառումներու մեջ, դուրս ցազնական խոյանքներու մղած է զայն, իմաստ տված է իր իսկ գոյության:

Երիտասարդ սերունդ Հայ Եկեղեցվո.

Դուք կարոտ չեք թախամաններու՝ ավիշ ստեղծելու համար ձեր հոգիներուն մեջ: Հայրենի հողին վրա կանգնած ամուր, Արարատը ձեր դեմը, դարերը միշտ ներկա են ձեր ներսը: Փարեցեք անոնց և անոնց բերած ավանդություններուն, փարեցեք լույսին, զոր աշունք հասցուցած են ձեզ, ճմլեցեք ձեր հոգին դուք ալ, քալեցեք առաջ, ջահը ձեռքե-ձեռք տալով:

Դիտեցեք, որ հայ մտքի պատմությունը հսկաներ շատ ունի ցցած դարերուն դեմը, և անոնց մեծ մասը իր ծոցին է տված Հայ Եկեղեցին:

Անոնց բոլորին տոնն է այսօր, անոնց հոգիեն հաղորդվելու խորհրդավոր վալրկյանը: Տոները չեն եղած սակայն, որ սուրբերը ոգեկոչեն, պահ մը ոգևորվինք անոնց փառքով, ու հետո դարձյալ մեր պատյանները բաշխենք:

Ամեն մեկ տոն առիթ թող ըլլա մեզ, դաս բաղելու վաղվան համար, ինչպես և ուժ ու կորով:

Թարգմանչաց օրը մեծագույնն է տոներուն, որ մեզ այդ առիթը կուտա, և մանավանդ ձեզ, երիտասարդներ, որ ձեր կյանքը կուղեք կապիլ հայ ժողովուրդի սրբություններուն:

Սահակը թող ուսուցանե ձեզ, թե ի՞նչպես կարելի է մեծ ըլլալ և խոնարհ, իր հոգիեն կայծեր բաշխել ամենուն, ու մնալ ստվերի մեջ, հայուն պարգևել Աստուծո շունչը ու փառքը տալ բոլորին:

Մաշտոցը թող ուսուցանե ձեզ խութերեն երբեք չվախնալ, անհողող մնալ դժվարությանց մեջ և անսասան՝ տքնության պահուն, ու շմուռիլ, երբ կյանքի ծովը ձեզ ակեկոծե:

Եղնիկը թող ձեզ ուղեցուց ըլլա, երբ պահեք ձեր հավատքը պաշտպանելու մտքով: Կայծեր չեմ, սուրվեցնե որոմները ցորյանն զատել, աշխարհը դուրսը թողուլ երբ ձեր խուցը քաշվիք՝ անձնատուր ըլլալու համար մտածումներուն, մաքրել ձեր աչքերուն ճպուռը՝ ձեր գլուխը հակելու ատեն իմաստության գրքին:

Եղիշեն թող կրակ վառե ձեր հոգիներուն մեջ, երբոր ընկճվիք, թող ձեզ պատմե, թե

ինչպես հերոս կդառնան մարդիկ, հրքոր թշնամին իրենց հոգիին դպի, և ինչպես քաջութիւն կուտան բոլոր դարերուն, բոլոր սերունդներուն:

Խորենացին թող հպարտ ընե՛ծ ձեզ աշխարհի ապշած աչքերուն առջև փոքրիկ ժողովուրդի մը մեծ թռիչքը պատմելով, և առասպելներուն խորեն մեզ հասցնելով այնքան լույս և ճշմարտութիւն: Անանիան թող ձեզ մխրճե՛ք բնության գաղտնիքներուն մեջ, և իմաստության ջահը վառե՛ծ ձեզ:

Նարեկացին ուսուցանե՛ծ թող ձեզ համարձակ խոսիլ ձեր Աստուծուն հետ, անդունդ իջեցնե՛ծ ձեզ ու բարձունք հանե՛ծ, թող փոթորիկ ձեր հոգին հաւսովոր ալեկոծությամբ, և հետո պարզե՛ն ամպարագիծ խաղաղութիւնը:

Փարոս ունեցե՛ք և Շնորհալին, վերջինը Հայ Եկեղեցւոյ սյուներուն, որոնք հայ հավատքին բանաձև տվին և իմաստ, վերջինը հոգեւոր մեծ երգիչներուն, որոնք զմայլելի շարականներու մեջ Աստված մը ստեղծեցին հայուն, և հայ աղոթքը մարդոց տունները տարին:

Երկար է շարանը այն կարկառուն դժմբերուն, որոնք թարգմանալի դարուն հետեւեցան, հասնելու համար Շնորհալիին և շարունակելու համար անկե՛ն ալ հետո:

Անոնք, որ Մանդակունի, Օձնեցի և Տաթևացի կոչվեցան ու Հայ Եկեղեցիին ուրույն կերպարանք տվին եկեղեցիներու մեծ ընտանիքին մեջ:

Անոնք, որ հայոց պատմության սև ու ճերմակ էջերը ավանդեցին հաջորդ դարերուն, Ասողիկեն ու Սյունեցիեն մինչև Վարդան ու Գանձակեցի, և անոնցմե՛ն ալ մինչև Ուսմայեցի և Գավրիթեցի:

Անոնք, որ իմաստության վառարաններու վերածեցին հայոց վանքերը, ինչպիսիները եղան Սարկավազ վարդապետն ու Մխիթար Գոշը, և հայ հոգիին հորիզոն բացին:

Անոնք, որ գեղեցկութիւն տվին հայ պաշտամունքին, աղոթք ու շարական հորինեցին անոր, մատյան ծաղկեցին, քաղցրացուցին հայ ծեսը, և ըրին, որ Հայ Եկեղեցին անառիկ բերդը դառնա բոլոր դարերուն համար:

Անոնց բոլորին օրհնութիւնը ձեր վրա:

Եվ ինչո՞ւ չկեցի՛ւ այս մեծ համաստեղության և անոնք, որ տաճար կառուցին Աստուծո՛ւ համար, հայ ժողովուրդի ավանդությանց վրա կանգնեցին Քրիստոսի Տունը, Զվարթ-

նոցին ու Հովփսիմին, Գեղարդին ու Տեկորին նման հրաշակերտներ սփռեցին հայ հողի վրա, մարդոցմե՛ն հաճախ ծածկած իրենց անունը, բայց տքնելով, որ շփի՛ն երբեք անառիկ բերդը, նույնիսկ եթե ավերակներ մնան քարե շենքերին:

Անոնց բոլորին շուքը ձեր վրա:

Պատւոյտե՛մ մը կդառնամ: Գացե՛ր էի նվիրական վայրերն այցելել էջմիածնի շուրջ: Հովփսիմին եղավ վերջին սրբավայրը, ուր եղա, զմայլելի այդ կոթողը, ուր հայ ոճը կգագաթանա ու կբաշխվի ամենուն:

Դուրս ելած պահուս գլուխս դպավ դրան քարե երիզին, որովհետև էջի ծոեր դայն: Գլուխս վիրավոր է հայ:

Այսպես կպատմվին բոլոր անոնք, որ շեն խոնարհիք փառքին առջև, զոր հայ ժողովուրդի պատմութիւնը մեզի կբերե դարերուն մեջն, մեծությանց առջև, որոնք անմահութիւն կերտեցին հայ ժողովուրդի համար:

Երիտասարդնե՛ր, թող ձեր հոգիները ծնրադրեն անոնց առջև:

Եվ անոնց բոլորին շունչը ձեր վրա:

Այնուհետև օրհնության խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը: Նորին Ս. Օծութիւնը ոգեկոչեց հիշատակը թարգմանիչ վարդապետների, որոնց ոգու և գործի շարունակողներն են մեր այսօրվա մտավորականները, որոնք կոչված են ոչ միայն պահելու թարգմանիչների մշակութային մեծ գործը, այլև այն հասցնելու նոր նվաճումների քարձուքներին, ինչպես այդ արվում է այնքան փայլուն կերպով հայրենի հողի վրա: Խմբովին երգված տերունական աղոթքից հետո, հանդիսութիւնը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 3-ին, օրվա տոնի կրկնակի ուրախության առթիւ, դասախոսական կազմը սեղանակից եղավ ուսանողության:

Ճաշի ժամանակ, հանուն դասախոսական կազմի, ուսանողության ուղղված սրտադրին ճառով հանդես եկավ Ա. Հատիտյանը:

Ուսանողության շնորհավորեց նաև ուստավորաբար Մայր Աթոռում գտնվող Սոփիայի հայոց եկեղեցու հոգեւոր հովիւ, նախկին ճեմարանական արժանապատիւ Տ. Մեսրոպ քահանա Բենիյանը:

Ճաշը վերջացավ վերատեսուչ հոր խրատականով ու օրհնությամբ:

Հոկտեմբերի 4-ը հիշատակության արժանի մի նոր էջ ավելացրեց Հոգեւոր ճեմարանի պատմության մեջ:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Սեպտեմբերի 8-ին, չորեքշաբթի, Լիբանան մեկնեցին Հոգևոր Ծեմարանի դասախոսներ գերաշնորհ Տ. Վահան Եպիսկոպոս Տերյանը և Պարգե Շահբաղյանը, 1965—1966 ուսումնական տարվա համար ուսանողներ ընտրելու:

Սեպտեմբերի 10-ին, ուրբաթ, Հոռոմ մեկնեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգե Եպիսկոպոս Գևորգյանը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գրիգոր Բերմեյանը, որպես զիտորդ մասնակցելու Վատիկանի Ժողովի երրորդ նստաշրջանին:

Սեպտեմբերի 12-ին, կիրակի, «Խաչվերաց» Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց լուսաբարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ Եպիսկոպոս Սանթուրյանը:

Երեկոյան, ավանդական հանդիսությամբ կատարվեց Խաչվերացի մեծ թափորը, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց» Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը: Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ յայցելեցին սիրիահայ մի խումբ զբոսաշրջիկներ: Հյուրերը եղան Մայր Տաճարում և եկեղեցական հնությունների թանգարանում: Վեհափառ Հայրապետը բարեհաճեց

Վեհարանում ընդունել հյուրերին, որոնք մեկնեցին դո՛ւ տպավորությամբ:

Սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի, Մայր Աթոռ յայցելեց Անգլիայի կուլտուրայի մինիստր տիկին Զեննի Լին: Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում, եկեղեցական հնությունների թանգարանում և ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից:

Սեպտեմբերի 16-ին, հինգշաբթի, Մայր Աթոռ յայցելեց Ֆրանսիա—ՍՍՌՄ ընկերակցության քարտուղար, զրոգ Ժան Գալալյուն: Նույն օրը Մայր Աթոռ յայցելեցին նաև հայ ուխտավորներ Արգենտինայից և ԱՄՆ-ից, ինչպես նաև զբոսաշրջիկների խումբեր Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայից, Լեհաստանից, ԱՄՆ-ից, Դանիայից և Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայից:

Մայր Աթոռ յայցելեց նաև բուլղարահայ երգի և պարի անսամբլը, որը համերգներով հանդես է գալիս Մայր Հայրենիքում:

Բոլոր հյուրերը եղան նաև Վեհափառ Հայրապետի մոտ:

Սեպտեմբերի 19-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Հոգևոր Ծեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսիս վարդապետ Պողապալյանը Լոնդոնում իր ուսանողական տարիների, ինչպես նաև իր այցելած սփյուռքահայ գաղութների ազգային-եկեղեցական կյանքի մասին, շեշտելով Ս. Էջմիածնի դերը սփյուռքահայ եկեղեցական կյանքի կազմակերպման աշխատանքներում:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սեպտեմբերի 23-ին, հինգշաբթի, որպես ուխտավոր Բուխարեստից Մայր Աթոռ ժամանեց ծանոթ մտավորական Հ. Ծ. Սիրունին:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի, «Տօն վարագայ Սրբոյ Խաչի»: Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և քարոզեց «Խաչ քո եղիցի մեզ ապաւեն» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հոկտեմբերի 7-ին, հինգշաբթի, Հոգևոր Ճեմարանի ուսանողները, վերատեսչի և դասախոսական կազմի ուղեկցությամբ, միօրյա ուխտագնացություն կատարեցին դեպի Աշտարակի շրջանի Մուղնու Ս. Գևորգ, Հովհաննավանք և Սաղմոսավանք սրբավայրերը:

Հոկտեմբերի 10-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց Սոփիայի հայոց


հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Մեսրոպ քահանա Բենիյանը, որն ուխտավորաբար գտնվում է Մայր Աթոռում: Պատարագիչ քահանա հայրը քարոզեց թարգմանիչ վարդապետների կյանքի և գործունեության շուրջ:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ լուսահոգի Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի մահվան քառասունքի առթիվ:

Հոկտեմբերի 13-ին, չորեքշաբթի, էջմիածնի շրջանի իր ընտրողների հետ հանդիպման առթիվ, Մայր Աթոռ այցելեց Սովետական Միության հերոս, հայ ժողովրդի պանծալի զավակ մարաշախտ Հ. Բաղրամյանը: Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում և եկեղեցական հնությունների թանգարանում: Վեհափառ Հայրապետը և միաբանությունը Վեհարանում ջերմորեն ընդունեցին թանկագին հյուրին:





Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի Ն Հ Ե Տ *

Դ.— ՊՈԼՍՈ ԳՐՈՂԸ ՀԱՅ ԵՐԳԻՆ ԴԵՍ

1.— Հայ երգը «Հուրրիթ»-ի գինովության մեջ

Օսմանյան «Հուրրիթ»-ը խենդեցուց պահ մը Պոլիսը: Երեսուն երկու տարի միահեծան իշխելի հետո, սուլթան Աբդուլ Համիդ ստիպվել էր Սահմանագրություն հռչակել 1908 հուլիս 23-ին: Բացեր էր բանտերուն դուռը, և թերթերուն լեզուն: Վերցեր էր գրաքննությունը, ու ոստիկանի վախը ա'լ չկար: Հայերն ու թուրքերը կապազտվեին փողոցներու մեջ: Ամեն մարդ ազատ էր ա'լ, ու եղբայր: Գինովցած էր Պոլիսը:

Բայց ի՞նչ կարծեր խանդավառություն մը առանց ճառի ու ծափի, առանց բացականչության ու «կեցցե»-ներու, առանց երգերու: «Հուրրիթ»-ը սակայն դեռ իր երգերը չուներ: Ան ստիպվեցավ հին երգարանները բանալ, ու հին օրերն մնացած մարդիկ սկսան շարշարել իրենց հիշողությունը հին եղանակներ միտք բերելու համար, ճիշտ այն եղանակները, որոնցմով մարդիկ սերունդ մը առաջ օրորեր էին իրենց հայրենասիրությունը: Ամեն հանդես կսկսեր ու կփակվեր ազգային երգով: «Արիք հայկազունք»-ն ու «Բամ փորոտան»-ը օրվան հերոսներն էին:

Ու ասոնց կողքին, «Հայաստան երկիր գրախտավայր»-ը, «Դու զո՞վ խնդրես»-ը, «Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա»-ն, «Եղբայր եմք մեք»-ը, և դեռ նման հին երգեր, որոնք իրենց քաղցրութենեն զրկեր էին ամբողջ սերունդ մը, եկեր էին հրահրել նոր օրերու մեր ոգևորությունը:

Այդ օրերուն էր, որ Պոլիս կխուժեր նաև տարագիր հայ մտավորականությունը: Կովկասեն ու Եվրոպայեն իրենց շունչը Պոլիս կառնեին բոլոր անոնք, որոնք երբեմն խույս էին տվել Համիդի ճիրաններեն, ու անոնց հետ միասին դեռ շատ ուրիշներ, զորս մեզ համար հասունցուցեր էր արտասահմանը: Ու զանոնք բոլորը ընդունեցինք անպատմելի խանդավառությամբ մը: Ամեն Պոլիս ոտք կոխող հերոս մըն էր մեր աչքին: Դեռ միտքս է, թե ինչպես շրտ-հինգ շոգենավով ընդառաջ գնաց Պոլիսը Մինաս Զեքարդին մինչև Մարմարալի բացերը, որովհետև մեր միամտությունը անով կպարծենար Բեռլինեն ի վեր և հեռվեն-հեռու անով ոգևորվեր էր զազտուկ մեր հայրենասիրությունը Պոլսո մեջ, երբ Համիդ «ազգ» ու «հայրենիք» բռնեն անգամ արգելած էր մեզ:

Այդ օրերուն ինչն'ր տվավ մեզի մանավանդ Կովկասը: Իսկական մտավորականներու հետ մեկտեղ, բրոշյուրով անած ունայնաբաններ,

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № Ա-ից և Ե-Ձ-է-ից և Ը-Թ-ից:



բուն հերոսներուն հետ միասին, խաչագողներու ամբողջ լեգեոն մը: Գինովության ամիսներ էին, ու ճարպիկներն էին որ կխելին «կեցցե՞ն»-ն ու ծափը: Ինչքա՞ն բախտախնդիրներ կային անոնց մեջ, զորս իսկույն կուռք բրինձ մեղի, ու որքա՞ն ենք շարշարվել, հետո զանոնք իրենցնելու համար իրենց պատվանդանեն: Հարբած մարդիկը շեն կրնար զատել կեղծը գոհարեն, ու որոմեն ցորենը: Պետք էր շատ ատեն անցներ, որպեսզի փարատեր մեր շմորանքը:

Կարծես թե բավական չլլային ազգային երգերը, որոնք զորոցներեն դուրս էին թռեր իսկույն, արտասահմանը Պոլիս բերավ հեղափոխական երգեր ալ, ու անոնց ամեն տեսակը: «Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն»-ը, «Հեռավոր երկիր նստած դու նժոհհ»-ը «Բամ փորոտան»-ին տեղը անցան և նույնիսկ թափորներու կընկերանային փողոցն փողոց: Զինվորական ֆանֆառներն անգամ, լրիվ դարձնելու համար մեր արեւելոյնը, Անդրանիկի մարշը կթընդացնէին փողոցներու մեջ, ու մենք բառերով ալ կընկերակցեինք անոնց. «Մայր Հայաստանը ձեռքի հանեցինք, հիմա ուժ ունինք, դարձյալ ետ կառնենք»: Կուսակցական այս քայլերգներուն հետ, մեր թափորները կոգեղորեն նաև «Առաջին չկար»-ը, «Մենք անկեղծ զինվոր ենք»-ը, «Կարկուտ տեղաց»-ը և ասոնց պես դեռ շատ ուրիշներ, զորս հայ հեղափոխությունը ներշնչեր էր Կովկասին:

Այդ բոլորը դեռ ոչինչ: Սունկի պես բուսան նոր-նոր երգեր ալ: Տիրացուները մեկնեն երաժշտագետ դարձան, ու իրենք ևս սկսան երգեր հորինել, կամ ուսանավոր հարմարեցնել թուրք եղանակներու: Այդ օրերու բերքն են «Աղատության սիրույն համար», «Անեծք քեզ անգութ դավաճան», ու ասոնց նմանները:

Գինովը երգել կուզե, բայց ինչե՞ր կերգե երբեմն, ավա՞ղ:



Եկեղեցիներուն վրա ա՛լ նայող չկար: Բազմությունը զանոնք կլեցներ միտինգե միտինգ, հեղափոխական ճառերով գինովնալու ու իր կեցցենները որոտալու համար հայ աղոթատեղիներու մեջ: Հոն էր, որ կթնդային հեղափոխական երգերը, որպեսզի մեզ կազդուրեն երեք տասնյակ տարիներու հոգեկան թմբիրե մը հետո: Համիդին դեմ մեր ոխը այդ երգերով էր որ կհագեցնեինք: Ա՛լ որուն հոգն էին եկեղեցական արարողությունները: Եռաձայնով ա՛լ հետաքրքրվող չկար: Ան նույնիսկ մտեր էր Պերա: Սահմանադրության հետ տապալել էր նաև Ռոբերտ էֆենդին, ու նոր թաղականները Ղալաթիայեն պոքր, Պե-

րա էին բերեր Լևոն Զիլինկիրյանը: Մուսուրներ եղեր էին անշուշտ այնտեղ ալ, և այնքան դյուրին չէր եղեր հանգստյան կոչել Ռուբեն Զիվանյանի տասնյակ տարիներու փառքը Պերայի եկեղեցիներուն մեջ:

Եվ սակայն եռաձայնի դեմ ցույց մը տեղի ունեցավ «Հուրիթ»-ի օրերուն ալ, ճիշտ այն օրերուն, երբ Օրմանյանը ցույցերու, հետո ալ ամբաստանությանց ու դատաստանի նշավակ կըլլար անդին: Այս անգամ ցուցարարներուն խառնված էին տիրացուներն ալ, կամ ավելի ճիշտ այս վերջիններն էին, որ կզրգոնեին ցույցը բնդեմ եռաձայնին, ամբողջ լարելով անոր դեմ, իբրև Օրմանյանի կողմն ներմուծված ամբարշտություն մը Հայ եկեղեցվո ժոցին մեջ: Տիրացուները Գումգափուն ստահակ մը վարձեր էին, որ եկավ Ղալաթիո եկեղեցիին մեջ երգվող Զիլինկիրյան պատարագը խանգարել կիրակի օր մը, պոռալով արարողությանց իսկ պահուն, թե Օրմանյանի նման դավաճանի մը հղացումն էր այս սրբապիղծ նորությունը: Գավազաններու տարափր տեղաց խեղճ տղուն ղլխուն, որ հաղիվ կրցավ հավատացյալներուն ձեռքեն ճողոպրիլ, փողոց նետվիլ, և ապառաջանիլ մոտակա սրճարան մը, ուր հասան նաև զինք հետապնդողները: Օրվան պատարագիչ Գնել հայիսկոպոսի հորդորներուն վրա էր, որ ազատ ձգվեցավ տղան, որ արդեն զղջացած կթվեր ըլլալ:

Ու անկե հետո բազմաձայն երգեցողության ա՛լ դպող մը չեղավ Պոլսո մեջ:



Օսմանյան «Հուրիթ»-ի հետ զավառը ևս սկսավ Պոլիս խուժել: Աղատություն եղած էր ու զավառեն Պոլիս գալու արգելքը վերացած: Ու զավառի բոլոր կողմերին մարդիկ իրենց Պոլիս կառնեին, երանություն փնտելու համար բռնապետության երբեմնի այս որջին մեջ, զոր «երջանկության սեմ» կոչել տվեր էր սուլթաններու ունայնամտությունը և ուր զավառը իսկապես երջանկություն երեւակայեր էր:

Պոլիս էր խուժեր մանավանդ պատանիներու հսկա բանակ մը զավառի բոլոր կողմերին: Մեծ մասամբ Կեղրոնական վարժարան լեցվեցան անոնք, ու ոմանք ալ պետական վարժարանները, և շուտով թթխմորի դեր կատարեցին Պոլսո մեջ:

Գավառացի այդ պատանիներն էին, որ Պոլիս գտնվողներու բերին առաջին թարմ շունչը զավառեն: Ոչ հայ ժողովրդական պարերուն ինչ ըլլալը գիտեինք մենք, ոչ ալ ժողովրդական երգ լսած էինք մինչև այն ա-

տեն, երբ որեւէ հանդեսի կամ համախմբութեան պահուն հանկարծ մեջտեղ կցատկերին վանեն, Մուշեն, Բաղնշեն եկած այդ տղաքը, ձեռք-ձեռքի կուտային, ու կպարենին և կերգերին մեկը մյուսին արտառոց պարեր ու երգեր—գոնե այդպիսի կթվեին մեզ այդ օրերուն:

Անոնցմէ է, որ լսեցինք առաջին անգամ.

«Պտկով փիլավ եփեցի,
Լեփո լեյլե, լեփո լե...»:



«Հուրրիբթ»-ն քիչ հետո համեստ երաժիշտ մը ևս եկավ մեզի, Լևոն Պողոսյանը: Կովկասէն կուգար ան ալ: Պողոսյան, ինչպէս իր ինքնակենսագրական նոթերուն մէջ կըսէ, 1883-ին ծնած էր Արքերման և իր կրթութիւնը ստացած Թիֆլիսի Ներսիսյան դպրոցին մէջ, ուր երաժշտութեան ուսուցիչ ունեցած էր Մակար Նիմալյանը: Շատ կանուխ թողած Ներսիսյանը, մտած էր ուսական ուսուցանելու, և պահ մը եղած էր նույնիսկ Փարիզ, միշտ հետամուտ կատարելագործելու իր երաժշտական կրթութիւնը: Հետո սկսեց էր վարել երգեցիկ խումբեր և հեղինակել ու դաշնակէլ հայերեն ու ռուսերեն երգեր, որոնք կոչված էին սակայն սկսնակի գործեր մնալ միշտ: Հայ ժողովրդական երգերու հանդէպ իր տածած գորգութեանը և զանոնք տարածելու մտահոգութիւնն էր, որ համակեր էր զինք ամենեւնի ավելի, ու այդ մտահոգութիւնն էր, որ բերեց էր զայն Պոլիս, երբ Օսմանյան Սահմանադրութիւնը երկրին դուռները բացաւ: Խումբ կազմեց ու վարեց հազար ղեմարութիւններով, և զայն պատգուց թաղե-թաղ, իր կազմակերպած համերգները համեմելով երաժշտական զրուցներով, որոնց ընթացքին փորձեց ծանոթացնել հայ երաժշտութեան անդրանիկ հառաջապահները, որպիսիներ եղեր էին Թաշճյան, Կարա Մուրզա, Նիմալյան, Շահլամյանց և Կոմիտաս վարդապետ¹⁸:

Համեստ այս երաժիշտն էր, որ մեր ճաշակները խռովեց: Սրբ ամբաստան երգել կուտար «Սոնա յար»-ը, «Իմ շինարի յար»-ը, «Մեր դռանը խնկի ծառ»-ը, դեռ խորթ էին ասոնք մեր ականջներուն: Մեկը կմուտար սրահին.

— Աս ի՞նչ խրոցի երգեր են...:

Բայց երիտասարդութիւնը տեր դարձավ իսկույն այդ «խրոցի երգեր»-ուն: Ան պահ մը կարծես մոռցավ խայտաբղետ երգերը,

զորս պարզեցած էր իրեն «Հուրրիբթ»-ի գինովութիւնը, և համ առնել սկսավ հայ գեղջուկի երգեն ալ:

Քաղաքի հայուն առաջին հաղորդութիւնն էր այս հեռավոր գլուխին հետ:

Շարաքներով Սկուդարի, Բերայի ու Բանկալտի փողոցներուն մէջ դուր կլսեիք «Սոնա յար»-ը: Հայ գեղջուկն էր, որ այդ երգով կմտներ Պոլիս, հիշեցնելով կարծես երանելի այն օրերը, երբ հայ դարբները Պոլսո զանազան թաղերուն մէջ իրենց տաժանքը կմեղմեին գլուխն բերված երգի բրդաձեւեր մուտալով, որոնցմէ բան չէր հասկնար այն ատեն պոսեցին: Հայ հոգին, այն օրերուն, դեռ անհաղորդ կմնար գավառին և իր անծանոթ գեղեցկութիւններուն:

Կարճ եղավ սակայն Պողոսյանի գործունեութիւնը Պոլսո մէջ: Հյուսիսատը զայն մեղմեց խլաց 1909 օգոստոս 16-ին, երբ հազիվ 26 տարու էր, և լեցուն եռանդով ու խոստումներով: Բայց Պոլիս պիտի չմոռնար անոր անունը: Ան էր, որ հայ ժողովրդական երգին քաղցրութիւնը մեզ բերավ առաջին անգամ, ու հոգիներու մէջ տեղ բացավ մեծ մոգին համար, որ իր կախարհանքը պիտի բերեր մեզ շուտով:

... Կոմիտաս, Պոլիս ոտք չկոխած, հայ գեղջուկը եկեր էր ուրեմն արդեն, ու իրեն, Մեծ Վարդապետին կապասեր իր մորմոքն ու կարոտը, իր սերն ու ուրախութիւնը լրիվ պատմելու համար աշխարհին:

II.— «Լսիղճս մեռնում է»

Կոմիտասը «Հուրրիբթ»-ին կպարտինք: Բայց զայն չունեցանք «Հուրրիբթ»-ին բերած առաջին գինովութեան օրերուն: Այդ գինովութեան ստեղծած խանդավառութիւնը վայելեցին ուրիշները, ու երբ ինքը ոտք կոխելու կուգար հին, վաղուց է մարած էր ոգևորութիւնը մարդոց հոգիներուն մէջ:

Պատահած էր արդեն Աղանայի ջարդը, մեր միամտութիւնը արթնցնելով իր թմրութենէն, և մեզ ճաշակել տալով թուրքին հետ մեր եղբայրութեան համը: «Հուրրիբթ»-ին հուսախար էինք եղեր:

Նվ սակայն հայ կյանքը բռնկած կշարունակեց մնալ վերելքի ճիգով: Սթափած մեր արեւելութենէն, կփորձեինք մեր վերքերը դարմանել և ձգտիլ նոր հորիզոններու, հանրային կյանքի բոլոր մարզերուն վրա: Հայ բանաստեղծութիւնը ջերմաստեղծութիւնը արդար, ու արեւմտահայ գրականութիւնը տարագրութենէն կդառնար ետ, միասին բերելով վարուժանն ու Սիամանթոն: Կովկասը կփոխարինեւր այցը բնմի մեծ վարպետներուն,

¹⁸ Թեոֆիլ, «Ամենուն տարեցույցը», 1910, էջ 74:

զորս Պոլիսը տված էր իրեն: Մամուլը կերպարանք կատանար, ու հայոց պատմությունը վերստին կմտներ հայ դպրոցներեն ներս:

Հայ երգը միայն դեռ որք էր, աչքերը Կովկաս հառած, ուրկե կուգային իրեն լուրերը Կոմիտասի հաղթանակներուն:

Մինչ Կոմիտաս, անդին, հոգեկան տագնապի դառն օրեր կապեր...:



Կոմիտաս բանտարկված կզգար իր հոգին վանքին շորս պատերուն մեջ: Տարիներու ընթացքին կուտակված դառնությունները կսկսեին փոթորկիլ իր ներսը: Հորիզոն կփնտռեր իր հոգին:

Խրիմյան Հայրիկի օրով այնքան ալ կաշկանդված չէր զգար տքնելու և ստեղծագործելու իր թափը: Հիմա, երբ Հայրիկը այլևս չկար, այլևս խորթ էր իր շուրջիններուն համար, ու անոնք խորթ էին իրեն: Զինք հասկըցողներ ա'լ չկային, իսկ իր հարազատ ընկերները այլևս ուժ չունեին վանքին մեջ:

«1908-ի վերջերը,— կպատմե Չոպանյան,— տեսա զինքը էջմիածին, երբ գացի ինձ մասնակցելու կաթողիկոսական ընտրություն... Ավելի որոշ գացի հոն ինչքան շրջապատը նեղ էր իրեն համար. անթիվ ընելիք ուներ, միջավայր չկար, հարկ եղած օգնությունը չկար»¹⁹:

Ու Չոպանյան կգանգատի, որ էջմիածինը զորավիգ չէր եղած անոր՝ իր երաժշտական ստեղծագործությունները լույս ընծայելու համար:

«Տարօրինակ բան է,— կը գրե Չոպանյան,— որ Մայր Աթոռը, որ ցարին կարծածին պես մեծահարուստ չէր՝ բայց հեռու էր աղբատ ըլլալե, թե՛ Խրիմյանի, թե՛ Իզմիրլյանի, թե՛ Սուրենյանի հայրապետության օրով, որնէ գումար չէ տրամադրած այդ մեծարժեք արվեստագետին, որ իր երաժշտական գործերը հրատարակե, գեթ իր դաշնակած պատարագը տպագրե: Կնեղվեր հոն, մանավանդ Փարիզի մեջ ունեցած գործունեության լայն ու փայլուն ասպարեզին հետ»²⁰:

Չոպանյան չի մոռնար հիշելու նաև անտարբերությունը, զոր Կոմիտաս Թիֆլիսի մեջ գտեր էր նույն այդ օրերուն:

«Կաթողիկոսական ընտրությունն հետո Կոմիտաս Թիֆլիս եկավ [1909-ին]. կփափագեր համերգ մը տալ, և կսպասեր, որ իրեն օգնողներ ըլլային զայն կազմակերպելու

համար: ... Սակայն իր ծրագրած համերգին համար օգնողներ, կարգադիր կոմիտե մը կազմելու տրամադիր անձներ գտնելու իր հույսը ի դերե ելավ: Խոսեցանք քանի մը «ջոջ»-երու: «Թող ինք սարքե համերգը, ըսին, մենք կաշխատինք տոմսերը տարածել...»: Ինքը միջոցներն իսկ չունեւ սրահ մը վարձելու. վշտացած, հրաժարեցավ իր ծրագրեն ու դարձավ էջմիածին»²¹:

Բայց այդքան չէին միայն հոգերը, որոնցմով կտանապեր Կոմիտաս: Էջմիածինը այլապես ալ խորթ կուգար իրեն:



Կոմիտաս, ստուգիվ, մասամբ ալ կբավեր Օրմանյանի կուսակից ըլլալու մեղքը: Ան կպատկաներ երիտասարդ միաբաններու այն խումբին, որ երբեմն բռնկած Օրմանյանի ցանած շունչով էջմիածնի մեջ, զայն իր հոգեոր դաստիարակը կնկատեր միշտ, և անոր կաթողիկոսությունը կփափագեր:

Կոմիտասի համար ևս Օրմանյանն էր եղեր և կմնար միակ արժանին Լուսավորչի գահուն: Ան Չոպանյանին կգրե 1909 ապրիլ 15-ին էջմիածնեն անոր ուղղած նամակին մեջ.

«Ափսոս, շուտ գնացիր. ես կուզեի հատկապես այս երևույթներին դու ինքդ ակնատես լինելի, և ըմբռնել կարողանայիր, թե ինչու՞ չէինք ցանկանում, որ Իզմիրլյան Կոստանդնուպոլիս, իսկ Օրմանյան էջմիածին լիներ: Մենք այժմ ավելի ենք համոզվել և մաքուր ենք մեր խղճի առաջ, որ բոլոր խոսքերը զրպարտություններ են Օրմանյանի դեմ, եթե չէ, ինչու՞ չէ քննում Ազգային ժողովը նորա հաշիվները. չէ՞ որ այդ քննությունը իրանց վարմունքը կամ պետք է արդարացնե, կամ պետք է դատապարտե: Կարծեմ վերջինն է ճիշտը, որ խոյս են տալիս ամեն կերպ օրինավորությունից, ուրիշ ո՛չ մի հակառակ բացատրություն չենք կարող գտնել: Մենք այժմ պարզ տեսնում ենք, որ Պատրիարքարանն ապիկար մարդոց ձեռքն է ընկնելու Իզմիրլյանի հեռանալով, իսկ Օրմանյանին վարկաբեկեցին ի տարապարտույց. նա այժմ իմ աչքում իսկ որ արդարություն քալություն նոխազ եղավ»²²:

Նույն այդ նամակին մեջ Կոմիտաս կզգայնե, որ Իզմիրլյանի ընտրությունն անմիջապես հետո, նոր կաթողիկոսին ժամանումն իսկ առաջ, հալածանք ծայր տված է բոլոր

²¹ Անդ:

²² «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 257—258:

¹⁹ «Անահիտ», 1931, № 1—2, էջ 119:

²⁰ Անդ:

անոնց դեմ, որոնք ի նպաստ Օրմանյանի արտահայտվել էին, և սկսած են «Գարեգին, Երվանդ, Հուսիկ և Կոմիտաս վարդապետներին վարկարեկել զգլխի ստախոսություններով, աշակերտներին հուզելով, անլսելի զրպարտություններ բարդելով», ու կալվցնե, թե ազդված այդ բոլորեն, ճիշտ ամիս մը հրաժարած է և թեև «խաղաղությունը պահպանելու համար հանձն առա նորից ընդունելու ընդհատված պաշտոնը, բայց այժմ էլ աշակերտների միջից որսացել են մի խումբ կամավատարներ և զաղտնի վրդովում են ձեմարանի կյանքը»:

Հրաժարականը, որուն ակնարկություն կրեն Կոմիտաս Զոպանյանի ուղղված իր սույն նամակին մեջ, հետևանքն էր այն արտահայտության, զոր զգացած էր ան կրճատված տեսնելով իր ամսականը:

Ձեմարանի արխիվներուն մեջ հետևյալ բնորոշ արձանագրությունը կա այդ մասին.

«Մանկավարժական ժողովի անդամ Կոմիտասն իր խմբագրական ուժերի ջնջման մեջ տեսնելով անպատվություն դեպի իր անձը՝ տեղն ու տեղը հրաժարվում է ձեմարանում այլևս պաշտոնավարելուց և շնայած տեսչի ու մանկավարժական ժողովի խնդրանաց, չի ուզում հետ վերցնել իր հրաժարականը»²³:

Եվ սակայն, ինչպես ինքն իսկ կգրե Զոպանյանի ուղղած իր նամակին մեջ, Կոմիտաս ետ կառնե իր հրաժարականը, չուզելով հավանաբար նյութական հաշիվներու կապել իր դժգոհությունը շուրջ տիրող մթնոլորտին հանդեպ:

Համբարձում Զորթյան (Առնակ) կպատմե իր հուշերուն մեջ, որ երբ տարի մը հետո, այն է 1910-ին, Կոմիտաս այցի գացած էր իր ծննդավայրը, Կուտինա, խնջույքի մը պահուն «տեղի տալով հարցումներու, իր ցավը հայտնեց: Էջմիածնեն հեռացած էր քենոտ ու վշտահար: Հայրենասեր իրիմյան Հայրիկը և երկաթյա Իզմիրլյանը կզուրկեին զաղտնի անհաղորդ Կոզմանկից էր Օրմանյանի: Կհավատար, թե եթե այս վերջինը կաթողիկոս ընտրված ըլլար Իզմիրլյանի տեղ, կրնար իր մտավոր հսկա պաշարովն ու անժխտելի վարչագիտությունովը էջմիածինը փրկել լաբյուրինթոսային լիճակեն»²⁴:

Մոլորություն պիտի ըլլար կարծել, թե չկամությունը, որուն նշավակ դարձած է ատեն-ատեն Կոմիտաս Մայր Աթոռի մեջ, հատվածական բնույթ ևս կկրեր: Հատվածա-

կան ինքնասիրությունները, որոնք երբեմն պղտորած են հոգեկան տրամադրությունները սահմանին երկու կողմը հավասարապես և արևմտահայ ու արևելահայ ուրույն դիրքեր ստեղծած են հայ մտավոր կյանքն ներս, ճիշտ չէ փնտռել զոնե Կոմիտասի հանդեպ ցույց տրված անբարյացակամության դեպքերուն մեջ:

Այնպես որ, տեղին չէր, երբ Արամ Անտոնյան, պատմելով թրքահայ պատգամավորներու հանդիպումները Կոմիտասի հետ 1908-ի աշնան, Իզմիրլյանի ընտրության ատեն, կգրեր.

«Տարբերությունը Կոմիտասի և էջմիածնի միաբաններուն միջև, մեծ էր: Այս վերջիններուն մեջ անշուշտ կային շատ համակրելի և մեծարժեք եկեղեցականներ, բայց առհասարակ «մեյմեկ տեսակ» էին, որքան ալ իրենց մերձենային, միշտ բաց ու ցրտին անջրպետ մը կմնար իրենց ու մեր միջև: Իսկ Կոմիտաս՝ պարզապես Կոմիտաս էր, ո՛չ թե մը ավելի, ո՛չ թե մը պակաս, և կարելի չէր թե մը անցնել մեր մեջեն, երբ կողք-կողքի կուզային իրեն հետ:

— Վարդապետ,— ըսինք օր մը իրեն,— ինչո՞ւ դուն այսքան սիրազեղ ես ու մյուսները այնքան պաղ...

— Մոտեցե՛ք որ ըսեմ,— մնջեց, շուրջը խուզարկու ակնարկ մը պտտցնել վերջ:

Ու գրեթե փսփսալով հարեց.

— Ես ձեզմե եմ, ձեզմե եմ...

Նշանակալից ժպիտը, որ կրնկերանար այս խոսքին, սքանչելապես կթարգմաներ անոր թաքուն իմաստը: Կոմիտաս արևմտահայ էր, և քիչ մըն ալ այս չէ՞ր պատճառը, որ էջմիածնի այն օրվան մթնոլորտին մեջ գրեթե օտարի մը պես կվարվեին իրեն հետ»²⁵:

Չենք գիտեր հոգեկան ի՞նչ պահու մը արտասանած է Կոմիտաս երկու բառերը, զորս իր բերանը կղնե Արամ Անտոնյան: Բայց սա գիտենք, որ փաստերը իրենք կհերքեն այն կասկածը, թե հատվածական նկատումներ դեր խաղացած են Կոմիտասի դեմ հարուցված անհաճո պարագաներուն մեջ: Չորս կաթողիկոսները, որոնք հաջորդեցին էջմիածնի Գահուն վրա, Կոմիտասի Մայր Աթոռի մեջ գտնված տարիներուն, արևմտահայ ծագումունին չորսն ալ, և անոնցմե երկու վերջինները, իրիմյան և Իզմիրլյան, որոնց օրով պատահած են անբարյացակամության դեպքերը, հեռու էին հատվածական կիրքերու գործիք դառնալիս: Փոխարեն, հոգևորականներու այն խումբին մեջ, որուն հետ բացա-

²³ Ռուբեն Թեյլմեզյան, «Խորհրդային արվեստ», 1935, օգոստ.—սեպտ.:

²⁴ Առնակ, «Հայրենիք ամսագիր», 1936 հունվար, էջ 76:

²⁵ Կապուռն (Արամ Անտոնյան), «Նոթեր Կոմիտասի մասին», «Արևմուտք», Փարիզ, 1946 դեկտ. 15, էջ 6:

ռապես սերտ էին Կոմիտասի հոգեկան կապերը, ոչ մեկ արևմտահայ չկար:



Կոմիտաս հույսերով սպասեր էր Իզմիրլյան կաթողիկոսի էջմիածին ժամանման: Ան նույնիսկ փափագած է, ինչպես կգրե վերը հիշված նամակին մեջ, իբրև պատվիրակ ղրկվի Պոլիս՝ Իզմիրլյանը բերելու, «առանձին խոստովանություն և մի շարք կարևոր մերկացումներ» ընելու համար, որովհետև «շատ կարող է պատահել նույնիսկ, որ մի խումբ, և այն ստվար և կարող միաբաններ, չդիմանալով հալածանքների՝ հեռանան վանքից»: Ու կավելցեն. «Լավ է այսքանով գոցեմ գիրս. սիրտս լցված է. եթե չամաչեմ լաց լինելու եմ»:

Նույն այդ օրերուն, պատասխանելով վենետիկի միաբաններին Հ. Ղևոնդ Տայանի նամակին, Կոմիտաս հետևյալ տողերը կգրե անոր էջմիածնին, 1909 հունիս 12-ին.

«Մրտադին շնորհակալությունս, եղբայր պատվական, ձեր անկեղծ և սիրալիր զգացմանց համար. ձեր խրախույսներն ինձ եռանդ են ներշնչում և ոգևորություն առթում. մի բան, որ այնքան քիչ են հասկանում և գնահատում մեզանում: Անհատը որքան էլ ջանասեր լինի, այնուամենայնիվ խրախույսը մի հզոր խթան է, որ կարող է շրջել սարեր հիմն ի վեր»²⁵:

1909-ին էր դարձյալ, որ Կոմիտաս էջմիածնեն կգրեր Մարգարիտ Բաբայանին.

«Ո՛չ խելք են թողել, ոչ միտք. անհանգիստ բան եմ եղել, հոգիս բերանս է հասել. երևակայիր, որ շրջապատված եմ թանձր մառախուղով, ուզում եմ լույս, պայծառ լույս տեսնել, հեռանալ վեր, շատ վեր, այրող արևի հետ ապրել. բայց ճանապարհ չեմ գտնում, անիրավ. օդի մեջ խեղդամահ եմ լինում: Մարդ չկա, որին բանաս սիրտդ. մարդ չկա, որից մի բան լսես. նայում եմ առավոտից մինչև իրիկուն բուրուին պես իմ սեղանի առաջ, գրում ու գրում... Գալիս է հանգստի րոպե, մարդ ես որոնում, որ գրածդ երգես, նվագես ու կարծիք լսես,— չես գտնում: Դուրս եմ գալիս ու վագրի պես այս ու այն կողմ եմ շուռ գալիս մեն-մենակ, իմ պարտիզում և տանիքի վրա: Ես զարմանում եմ, թե ինչո՞ւ մինչև այժմ դեռ չեմ խելագարվել այս մթնոլորտի խարդախ միայնակ: Սեկ ուզում եմ թռչեմ հեռու միայնակ, մեկ ուզում եմ փակվեմ մենակ ու ճգնեմ, բայց ի՞նչ եմ անում որ չեմ ճգնում... այո՛, բայց ո՛չ այս-

պիսի, այլ մուսայիս հետն եմ ուզում միայնակ ապրել, որ սիրտս չպղտորվի, միտքս չխարդախվի, հոգիս չխոռովի և խեղճս չմեռնի... Բայց և այնպես չեմ հուսահատվել. աշխատում եմ, շատ բան եմ գրել, շատ բան եմ գրելու...»²⁷:



Իզմիրլյանի ժամանումը էջմիածին 1909 հունիս 28-ին, պահ մը հույսեր կներշնչե Կոմիտասին: Չոպանյանին ուղղված նամակի մը մեջ կգրե 1909-ին, թե «Վեհափառը շատ նպաստավոր տպավորություն թողեց բոլորիս վերա: ... Անցյալները կանչեց ինձ և երկար խոսեցինք. կանչեց նույնպես Երվանդին և Հուսիկին, որոնց վերա նույնպես լավ տպավորություն է թողել և որ գլխավորն է, Վեհը գրեթե ըստ ամենայնի մեզ համախորհուրդ է իր ծրագիրներով՝ առանց չափազանցությունաց մեջ ընկնելու, որ և կարևորն է: ... Պետք է ասել, որ հայրապետական փառքն սկսել է աճել, թե՛ հաշս ժողովրդյան և թե՛ հաշս կառավարություն, որ զգալի կերպով սկսել է նախկին մեծարանքները տալը: ... Այս առթիվ ամենքն էլ գոհ են: ... Երեկ օծումից հետո կերթամ Պոլիս և հայրենիք. Վեհին խնդրեցի և հաճեցավ խոսք տալու»²⁸:

Հուսախաբությունը չուշացավ: Միաբաններու այդ խումբը, որուն կապտկաներ Կոմիտաս, աչքի փուշ սկսավ դառնալ վանքին մեջ, երբ Իզմիրլյան եկավ բազմիլ Կաթողիկոսական Աթոռին վրա և երբ միաբանություն մեջ տեր-տիրական եղան օրմանյանական խմբակը հալածողները:

Չոպանյանին ուղղված իր 1909 հոկտեմբեր 30 թվակիր նամակին մեջ ան կըսե արդեն բացեիբաց, թե Իզմիրլյան ինկած է դաշնակցության ազդեցության տակ և կհիշե, թե ինչպես մեկ-մեկ կըշվին վանքեն իր ընկերները՝ Երվանդը, Բենիկը, օրինակ, և կփոխարինվին դաշնակցության համակիրներով:

Կոմիտասի խառնվածքով մեկը, որ կզգածվեր ամեն վիրավորանքի, անհնար կգտնե այլևս շնչել այս մթնոլորտին մեջ: Ամեն չկամություն, որ իր շուրջը կտեսներ, իր մտքին մեջ կլայննար, և իր դուրսավ տպավորվող հոգին կմեծցներ ամեն աննպաստ երևույթի Տարիներու տքնության մեջ հոգնած էին նաև ջիղերը, որպեսզի կարենային շաղկալի փափուկներեն, ջրթնջուրներեն, դժկամակ ակնարկներեն անգամ, և ամուր

²⁷ «Մշակույթ», Փարիզ, 1935, էջ 161:

²⁸ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, 1, էջ 260:

²⁵ «Բազմավեպ», 1936, էջ 11:

պահել իր հոգին: Եվ ո՛վ գիտե՞ր ո՛րքան կազդեր իր վրա նաև տրամադրությունը իր ընկերներուն, և անոնց անձնական դժգոհությունը Մայր Աթոռին մեջ տեղի ունեցած նոր փոփոխությանց առթիվ:

Եվ ահա հոգեկան այդ դրության մեջ էր, որ Կոմիտաս հետևյալ պատմական նամակը ուղղեց Իզմիրլյան կաթողիկոսին.

«Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց Տ. Տ. Մատթեոսի Բ.

Վեհափառ Տեք.

Քսան տարի է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան եմ: Մտել եմ այս հաստատությունը ծառայելու նպատակով: Քսան տարվան ընթացքում շրջապատն ինձ թույլ չէ տվել այն անելու, ինչ կարող էի, որովհետև տեսա միշտ որդագլթ և ո՛չ արդարություն: Նյարդերս թուլացել են, այլևս տոկալու ճար ու հնար չունիմ: Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում: Ծարավի եմ աղնիվ աշխատանքի, խանգարվում եմ: Փափագում եմ հետո մնալ՝ խցել ականջներս շնչելու համար, գոցել աչքերս՝ չտեսնելու համար, կապել ոտքերս՝ չզայթակղվելու համար, սանձել զգացումներս՝ չլիզվելու համար, բայց զի մարդ եմ, չեմ կարողանում: Խիղճս մեռնում է, եռանդս պաղում է, կյանքս մաշվում է և միայն վարանմունքն է բույն դնում հոգուս ու սրտիս խորքում:

Եթե հաճո է Վեհիդ ինձ չլորցնել, այլ գտնել, արտասվելով աղբյուրում եմ՝ արձակեցեք ինձ Ս. Էջմիածնա միաբանության ուխտից և նշանակեցեք Սեանա մենաստանի մենակալաց: Քսան տարին կորցրի, գոնե մնացած տարիներս շահեցնեմ և անդորրություն գրի առնեմ ուսումնասիրություններիս պտուղները՝ իբր առավել կարևոր ծառայություն հայ տառապյալ Սուրբ Եկեղեցվո և գիտություն:

Վեհափառությամբ ծառա և ողորկ
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Միաբան Ս. Էջմիածնի

1909 սեպտեմբեր 5

Ս. Էջմիածին»:

Սույն նամակը, որ գրի առնված էր հոգեկան տագնապի մը պահուն, պոռթկումն էր երկար զսպված խոռվի մը:

Իզմիրլյան չէր կրնար անշուշտ հետևանք տալ նման աղբյուրների մը, որքան ալ արդար վրդովման մը հետևանքն ըլլար ան, և միևնույն ատեն ի վիճակի չէր, այդ օրերուն իր շուրջը տիրող մթնոլորտին մեջ, տանելի պայմաններ ստեղծել տարաբախտ արվեստագետին համար:

Մերժումը, զոր ստացավ իր դիմումին, ավելի բորբոքած կթվի ըլլալ իր հոգեկան

ալեկոծությունը: Ան զգաց, որ պիտի չկարենա խաղաղիլ իր փոթորկած հոգին, և նվիրվիլ իր ստեղծագործական աշխատանքներուն:

Ան վճռեց Էջմիածինը թողուլ ընդմիշտ: Բայց շատ տառապած պետք է ըլլա ան մինչև այդ պահը հասավ:

Նույն 1909 տարվան աշնան, Պոլսո իր բաղկամեններն մեկնե՞ն ստացված նամակ մը վճռական դեր կատարեց Կոմիտասի կյանքին մեջ: Այդ նամակը Կարապետ Պարտիզպանյանն կուգար, Ճեմարանի իր հին մեկ ընկերն, որ Պոլսո մեջ արհեստով կալարապեր այդ պահուն, և Ղալաթիո դպրաց դասուն մաս կազմեր էր Զիլինկիրյանի օրով և հետո: Հիմա, որ Զիլինկիրյան տեղափոխված էր Պերա, առանց երաժշտական ղեկավարի մնացած էին դպրաց դասն ու իր երգչախումբը: Սույն դպրաց դասուն խնդրանքովն էր, որ Պարտիզպանյան Պոլիս կհրավիրեր Կոմիտասը, հայտնեց իր անոր, որ նպաստավոր պայմաններ պիտի գտնե հոն իր բոլոր աշխատանքներուն համար, և խոստանալով իր և իր ընկերներուն բովանդակ աջակցությունը:

Իմ դասընկեր Վարդան Ազկյուլյանը, Ղալաթիո դպրաց դասուն և երգչախումբին անդամ, որ հետագային ալ Կոմիտասի խումբին ամենն եռանդուն երգիչներն մեկը պիտի դառնար, ինձի կգրի վերջերս, թե իրենք էին, որ Կոմիտասի Ճեմարանի երեմանի դասընկերներն և իր, Ազկյուլյանի կնքահայր Կարապետ Պարտիզպանյանի միջոցով Պոլիս հրավիրեցին զայն, և այդ առթիվ էր, որ վարդապետին ղրկեցին օրինակ մը Զիլինկիրյանի պատարագն, զոր իրենք կերգեն, որպեսզի անոր մասին իր կարծիքը ըսե: Կոմիտասը սա իմաստով գրած է իր կարծիքը այդ պատարագին մասին. «Երկու սխալ (ֆոս-նոթ) կա ուղղագրության մեջ, իսկ շարագրությունը ամբողջովին սխալ է»:

(Կարապետ Պարտիզպանյան 1927-ին, ճիշտ այն օրերուն, երբ Բուբրեշի մեջ ուսման հայ կեդրոնական մատենադարանը հիմնեց էինք և կիրակի կիրակի դասախոսություններ կսարքեինք հայ մշակութի հետ առնչություն ունեցող նյութերու շուրջ, Պուրեշ կգտնվի ինքն ալ: Մեկ կողմն կըրար կոշկակարությունը, և մյուս կողմն կվարեր «Երևան» միության ֆանֆարը: Անգամ մը գինքն ալ հրավիրեցինք բանախոսելու մատենադարանին մեջ Կոմիտասի անձին և գործունեության մասին: Այդ բանախոսության

ընթացքին էր, որ ան հայտնեց, թե ինք էր գրած այդ հրավերը Կոմիտասին՝ Ղալաթիո երգչախումբին անունով, և պատասխան ստացած, թեև բավական ուշ, թե սիրով պիտի մնա Պոլիս, երբ այցելելու գա իր ծննդավայրը, Կուտիսն)։

Իրական պատասխան տալիս առաջ, պետք է երկար մտածած ըլլա Կոմիտաս։ Իր սրտակից բարեկամներու խորհուրդին կարիք ունեի նախ։ Արդնցման մեկը, ի՛նչ խոսք, Արշակ Չոպանյանն էր։

«1910-ին կգրեր ինձի,— կպատմե Արշակ Չոպանյան,— թե Պոլսեն փափագ հայտնողներ եղած էին, որ հոն երթար, հույս տալով, որ իր գործունեության համար լավ պայմաններ պիտի գտներ հոն. նույն ատեն Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան, որ Թիֆլիսի առաջնորդ էր այդ միջոցին, իրեն առաջարկած էր գալ ներսիսյան դպրանոցի երաժշտության ուսուցչությունը և կարծեմ քաղաքին ավագ եկեղեցվույն դպրապետությունը ստանձնելու։ Երկուքն ո՞րը նախընտրել, կվարաներ որոշում տալ, և ինձի խորհուրդ կհարցնե։ Մղեցի զինքը Պոլիսը նախընտրել։ Ժյոն-Թուրք ռեժիմին հանդեպ որևէ համակրություն և վստահություն չուներ, և մեր բոլոր քաղաքական գործիչներուն հոն դառնալու փութալը և իթթիհադի կասկածելի «վերանորոգիչներ»-ուն հետ ձեռք-ձեռքի գործել ուղեւր անիմաստուն գտած էի և մեր դատին համար վնասակար, և իմ մասին՝ դուրսը մնալը նախընտրել։ Բայց երաժիշտի մը համար՝ Պոլիս՝ անպատեհություններ չկային, և կային՝ այդ շրջանին՝ որոշ առավելություններ։ Ո՞վ կրնար երեակայել, որ քանի մը տարի հետո համաշխարհային ահավոր պատերազմը տեղի պիտի ունենար։ Գեղարվեստական գործունեության համար լայն ասպարեզ կար այդ միջոցին Պոլիս, նոր ռեժիմը գրաքննությունը ջնջած էր, երթևեկի ազատություն տված էր, Պոլսո և Թրքահայաստանի միջև հաղորդակցությունները դուրացած էին, Պոլսո մեր մեծ համայնքին մեջ հայ մտավոր և ազգային կյանքի վերադարձում մը սկսած էր, Կոմիտաս հոն լիովին պիտի ըմբռնվեր, խրախուսվեր և օժանդակվեր իր գործը լայնորեն կատարելու։ Լսեց անգամ մը ևս իմ բարեկամական խորհուրդիս ու գնաց Պոլիս»²⁹։

Չոպանյան չէր կրնար գուշակել անշուշտ, թե դեպքերը անբաղձալի կերպով պիտի զարգանային Թուրքիո մեջ, և թե ոչ միայն պիտի ընդհատեին Կոմիտասի սկսած շքեղ գործունեությունը, այլև շարաշուք վախճանի մը պիտի հասցնեին զայն։

«Թե ինչ հրաշալի գործ կատարեց հոն,— կշարունակե Չոպանյան,— թե ինչպես հայ և օտար հասարակությունները հոն գնահատեցին զինքը, հայտնի է ամենու։ Բայց եկավ մեծ պատերազմը և պատահեցան այն դեպքերը, որ իր ուղեղը ցնցեցին և զինք դրին այն ցավազին կացություն մեջ, ուր կմնա մինչև ցարդ...»։

Մերթ-կաղվիմ մտածել հիմա, թե լավագույն էր թերևս, որ ան երբեք հեռացած չըլլար Կովկասեն։ Էջմիածին և Թիֆլիս, ան պիտի շարունակեր աշակերտներ հասցնել, խումբեր պիտի կազմեր, իր ուսումնասիրությունները հառաջ պիտի տաներ, ու այդ խաղաղ և նվազ ծանրաբեռն կյանքին մեջ թերևս պիտի լրացներ զանոնք. թերևս իսկ՝ նույն հանդարտ պայմաններով՝ իրեն ավելի հեշտ ըլլար իր երաժշտական անձնական ծրագիրները գեթ մասամբ իրագործել։

Իր Պոլիս քանի մը տարի գործելովը, սակայն, ազգն է որ շահեցավ, ինչպես որ ազգը շահեցավ նաև մեծապես անոր տարի մը Փարիզ մնալովը։ Կովկասի մեջ, չէր կրնար այդքան ընդարձակությամբ, ներուժությամբ և փայլով, և այդպիսի միջազգային լայն հասարակության մը առջև, կատարել գործը, զոր ան Փարիզ ու Պոլիս կատարեց»³⁰։

Մանուկ Աբեղյան ինքն ալ կպատմե իր հուշերուն մեջ, թե ի՛նչ պայմաններու տակ էջմիածնեն բաժնվեցավ Կոմիտաս։

«Հասկանալի է, որ էջմիածնի վանքի փակ պայմաններում, հեռու մեծ քաղաքի երաժշտությունից, օպերաներից և համերգներից, նա պետք է վերջի վերջո ձանձրույթ և սրտնեղություն զգար և ձգտեր դուրս գալ այնտեղից։ Եվ ահա 1909 թվին, չգիտեմ թե ով, Պոլսից նրան նամակ էր գրել և նկարագրել այնտեղի առավելությունները. նա այդ ազդեցության տակ որոշեց հաջորդ տարի գնալ Պոլիս։ Նա ինձ հավատացնում էր, թե իրեն պիտի հաջողվի Պոլսում բանալ կոնսերվատորիա, ուր արևմտյան երաժշտության հետ հավասար պետք է մշակվի նաև արևելյանը, և թե ինքն այնտեղ կարող է իրագործել իր մտադրությունները մի մեծ մայրաքաղաքի մեջ, որ և՛ արևմտյան է, և՛ արևելյան, և ուր կան հարյուր հազարից ավելի հայեր։

Մենք զգուշության համար նրան խորհուրդ տվինք միայն ժամանակավորապես գնալ այնտեղ և տեսնել, թե ինչպես է։ Այսպես էլ նա վարվեց. նա հետը քիչ բան տարավ, նրա բնակարանը և իրերը մի տարի մնացին այնպես, ինչպես թողել էր նա։ Մի տարի հետո,

²⁹ «Անահիտ», 1931, № 1—2, էջ 119—120։

³⁰ Անդ, էջ 120—121։

երևի Պոլիսը նա շատ հարմար էր գտել իր համար, նամակ գրեց իր ընկերներից մեկին, որ իրերի մի մասը, գլխավորապես գրքերն ու ձեռագրերը, ուղարկեն իրեն, իսկ մնացածը ծախեն ու փողն ուղարկեն: Այդպես էլ վարվեցին»³¹:

Այս պայմաններում տակ էր, որ Կոմիտաս կրթնվեր էջմիածնեն, ուր տքններ էր քանի մը տասնյակ տարի հանուն հայ երգին, և ուր, եթե դառն պահեր ապրեր էր, կրցեր էր սակայն ստեղծել կորիզը իր մեծ առաքելության:



Թող ոչ ոք կարծե, թե Կոմիտաս ցմիշտ քեն ըրած, կրթնվեր էջմիածնեն: Բոլոր անոնք, որ հետագային զինքը ճանչցան Պոլսո մեջ, հեռու են տարվել նման ենթադրություններ մը: Ան ինքզինք միշտ կապված զգաց իր մայր օջախին:

Հոգեկան միջավայր եկավ փոխել Պոլսո մեջ, և բացառիկ գուրգուրանքով շրջապատվեցավ հոն: Քանի մը խոսքով ձայներե զատ, որն է լուրջ խոշորագույն լեզու և լեզու, ու կրցավ փարիլ իր հիմնական առաքելության: Կարծես մոռցավ այն ատեն դառն վայրկյանները, զորս ապրեր էր Մայր Աթոռին ու ձեռնարանին մեջ:

Ամբողջ քառորդ դար Կոմիտաս ապրեր էր էջմիածնի հետ: Հոն բացեր էր աչքերը, հոն էր ականջը դրեր հայ ժողովուրդի սրտի զարկին, ու հոն էր լծվել իր մեծ առաքելության:

Պատանի մըն էր դեռ, երբ էջմիածին ոտք կոխեր էր ան: Կուգար Թուրքիո խավար մեկ անկյունեն, ուր հայ լեզուն անգամ խեղդեր էին լուծի դարերը: Զեմարանը զինք վերածեց հայու, և իր մեջ թրծեց հայ հոգին:

Միաբանության մեջ շատերը եղան, որ զայն չհասկցան: Ու չէին կրնար հասկնալ: Կոմիտաս անոնց համար դեռ շատ կանուխ էր: Աղկե այն դառնությունները, զորս ան կրեց:

Շատ մեծ էր Կոմիտաս, որպեսզի ոխ պահեր իր կրած այդ լեզվի պահերուն համար:

Կոմիտաս, Պոլսո մեջ ևս, ապրեցավ իրեն «էջմիածնա միաբան»: Ոչ իսկ փոխեց տարազը, որով ան եկեր էր էջմիածնեն: Մոռցած դառնությունները, զորս հոն կրած էր ատենատեն, հաճախ կվերապրեր այնտեղ անցուցած աղվոր օրերը միայն: Էջմիածինը իր ուխտին վկան էր եղեր, ու իրեն համար միշտ կմնար օջախը հայ ավանդության: Հայ ժողովուրդին հոգևոր կեդրոնն էր եղեր, և այն օրերուն, երբ հայ ժողովուրդը դեռ չէր ստեղծեր իր նոր հայրենիքը, ան հոգեկան բույնն ալ էր հայուն:

Մենք վկաններն ենք անուշ հուզումին, զոր իր մեջ միշտ արծարծեց Լուսավորչի կանթեղը:

... Ու հիմա ան էջմիածնեն կփախեր, հոն թողուցած իր սիրտը...

Իզուր աղաղակեր էր, թե կմեռներ իր խիղճը: Խիղճեր կան, որոնք չեն մեռնիր, ինչքան ալ զանոնք խեղդել փորձեն կյանքն ու իր դառնությունները...

(Շարունակելի)

³¹ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 73:

Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
(Անգամ Գերագույն Հոգևոր Խորհրդի)

Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ղ Ա *

ՉԱՓԱՄՈՆ ԵՐԿԵՐԸ

Ա. Կրոնա-բարոյական ոտանավորներ և պոեմներ

Մեր միջնադարյան գրականության պատմության մեջ Գրիգոր Տղայի տեղը որոշողը նրա չափածո գործերն են: Վերջինները բաղկացած են մի քանի մեծ ու փոքր ոտանավորներից և պոեմներից: Ինչպես տեսանք, ձեռագրերում նրան վերագրվում են 10—11 բանաստեղծություն, որից 5-ը պոեմներ են՝ 150—2400-ի հասնող տողերով, մնացածը՝ տարբեր ծավալի ոտանավորներ 20—40 տողից բաղկացած: Պոեմներից մեկը կոչվում է ըստ ծայրանվան (ակրոստիկոս)՝ «Յիսուս Քրիստոս Որդի և բան»։ Երկրորդը՝ «Կտակ», երրորդը՝ «Գոպեխացի յուսացեալ», չորրորդը՝ «Յորժամ զիս ինձէն գտայ» և հինգերորդը՝ «Ողբ վասն առմանն Երուսաղէմի» ամենամեծ պոեմը, որը համարվում է բանաստեղծի գլուխ-գործոցը: Մնացած փոքրիկ ոտանավորների վերնագրերը արդեն մեզ ծանոթ են նախորդ գլխից: Այս բանաստեղծություններից միայն երկու փոքրիկ ոտանավորներ են տպագրվել «Արարատ» ամսագրում 1892 թվականին: Անգամ «Ողբ վասն առմանն Երուսաղէմի» լավագույն պոեմը մինչև հիմա հայերեն դեռ չի հրատարակվել (եթե չհաշվենք Փրանսիացի գիտնական Դելյուրիեի հրատարակած՝ 1869 թվականին—Փրանսերեն թարգմանությունը հայերեն բնագրի հետ), մի գործ, որը մեր միջնադարյան հայ բանաստեղծության լավագույն նմուշներից է: Ընդհանրապես Գրիգոր Տղայի բանաստեղծություններն իրենց բովանդակությամբ և մոտիվներով ունեն կրոնա-բարոյակրթական, մանկավարժական և պատմաքաղաքական

բնույթ: Կրոնա-բարոյակրթական ոտանավորները համեմատաբար ծավալով տարբեր են: Գրիգոր Տղայի գրեթե բոլոր բանաստեղծությունները գրվել են Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու դորեզ ազդեցության տակ: Եթե բանաստեղծություններում մեծ մասամբ աչքի է ընկնում Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի», «Ողբ Եղեսիոյ» և մյուս գործերի ուժեղ ազդեցությունը, ապա ծավալով փոքրերը իրենց վրա նույն չափով կրում են թե՛ Շնորհալու և թե՛ Գրիգոր Նարեկացու Ողբերգութեան մատյանի ազդեցությունը: Այստեղ Գրիգոր Տղան էլ Նարեկացու պես ամբաստանում, խարազանում է ինքն իրեն, որ շեղվել է ճշմարիտ ուղուց, որ մեղապարտ է և այլն: Սկսենք «է յիս գիտութիւն» բառերով սկսվող ոտանավորով, որտեղ նա գրում է.

«է յիս գիտութիւն, բայց խամբրացեալ է,
Գոյ երկիւղ բարեաց, այլ շիջանի

միշտ...»⁹⁶:

Ինչպես Նարեկացին, այնպես էլ Տղան մեղքի ծանրության տակ, թե՛ հոգեպես և թե՛ մարմնով դարձել է նկուն. ըստ ոտանավորի՝ բանական, պայծառ լույսի հետ խավարել է նաև նրա գիտակցությունը. գայթակղիչ շարք հանել է նրան ճիշտ ուղուց և հեռացրել Հիսուսից. այն ջերմ սերը, որ մի ժամանակ անխզելի կապ էր մարդու և նրա Արարչի միջև, այժմ սառել, ընդամացել է. երբեմնի հաճելի, հոգեպարար, հեղամրմունջ հովերի փոխարեն այժմ գեհնից փչող բքաշունչ քամիները հողմածեծ են անում նրա հոգին.

«է և յիս հոգի, բայց տկարացեալ է.

Ունիմ և լոյս պայծառ, բայց խաւարեալ է.

Կա և հուր սիրոյ, այլ սառուցեալ է.

Նւ հողմ քաղցրասիկ խորշակահարէ»⁹⁷:

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի Պ ժ-ից և 1965 թվականի Ռ Ռ Ա-ից, Ե—Զ—է-ից և Ը—Թ-ից:

⁹⁶ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 8348, էջ 167:

⁹⁷ Անդ:

Բայց բանաստեղծը գիտակցում ու զգում է, որ ինքը մեղանշել է, խռոված է նրա հոգին, ուզում է ապաշխարել, որպեսզի ազատի իր հոգին ու մարմինը բզկտող մեղքերից, բայց անգոր է, չի կարող: Նա թեև ուզում է լինել առաջվա պես ջերմ բարեպաշտ և անսահման սիրով լեցուն դեպի արարիչը, սակայն, երկրային կյանքը նրան ձգում է, չի կարող գիմադրել և հաղթահարել: Կյանքից էլ, ինչպես նարեկացու մոտ, սկսվում է հոգու և մարմնի հակադրությունը և կոխվել:

«Ջերմ առ Աստուած, այլ ջուրն մերձ է. Կամ իմ բուռուցանել, բայց տօթն չար է»⁹⁸: Այս խոստովանում է, որ եթե ինքը հոգեպես ամուր ու կոռովի լինեք, աշխարհային մեղսակից կյանքի հեղեղը նրան շեր թշի և ընկղմի «մեղքի տիղմի» մեջ: Ե ապա՝ եթե նա չփակի իր հոգու աչքերը, չընդարձակեցնի հոգու, լինեք զգոն, զգվար թե նա ընկնեք մեղքի օվկիանը և այդպես տանջվելու իսկ մյուս կողմից էլ, բանաստեղծի ապրումներն ավելի ծանրանում ու խորանում են նաև նրա համար, որ նա, համեմատյալ դեպ, այդ մեղքերը կուրորեն կամ սնդիտակցորեն չի գործել: Համառ ու լուռ կոխվ է եղել նրա հոգու և մարմնի միջև, երկրային ու երկնային, բարու ու չարի, լույսի ու խավարի միջև, ըստ ինքը երկրային կյանքից դալթակղված՝ աշխարհից է արել հոգեկանը և «կամաւ» է գնացել մեղքի ճամբերով:

«Հրաւէր ետ և բարեաց, բայց չըզգացի
զայն,
Ձաչա կախուցի և այն կամաւ իմ ի բուն
մտի մեղաց...»⁹⁹:

Հոգու և մարմնի ցավագին բախումները մեր բանաստեղծության մեջ առաջին անգամ արտահայտել է Գրիգոր Նարեկացին: Գրիգոր Տղայից երկու և կես դար առաջ, Ողբերգության մատյանում, Նարեկացին դիմում է Տիրոջը, որ անցկացնի հոգու դառն վիճակը, «յորժամ իցէ մարմինն մեղօք դրանալ»: Նարեկացին խորապես ողբում է, որ մեղանշել է՝ թուլակամ լինելու և բարին ու չարը, լույսն ու խավարը շտարբերելու պատճառով:

«...Եւ գիտութեամբ էիցն՝ ի չէիցն միշտ
խաբեցեալ...
Անարե միջով յամենայն մասանց պար-
փակեալ.
Եւ եղկութիւն կորստեանն ի յուշ անդ
եկեալ...
Եւ տաժանմանցն արգասիք ծուլութեանն
մթով ծածկեալ,

Եւ զկեան ի վերայ օգտին ոչ ինձ գիտա-
ցեալ,
Եւ ի կշռութիւն բարւոյն ընտրութեան յի-
մար երեւալ»¹⁰⁰:

Սակայն, ամբաստանելով իրեն, Գրիգոր Նարեկացին չի հուսահատվում: Նա համոզված է, որ ինչքան էլ ծանր մեղքեր գործած լինի, այնուամենայնիվ ապաշխարության միջոցով կարելի է մաքրվել այդ մեղքերից և փրկվել: Սա Նարեկացու ողբերգության հիմնական մոտիվն է, որի շուրջն է պտտվում ամբողջ Նարեկը: Այսպես է վարվում իր վերոհիշյալ փոքրիկ ոտանավորում և Գրիգոր Տղան: Սա էլ հույսը չի կորցրել, իրեն ամբողջապես կորած չի համարում: Նա գիտե, որ երբ հասնի հատուցման օրը, ահեղ ատյանում երբ ինքը ներկայանա երկնավոր դատավորին՝ ներում ու փրկություն կլինի: Որքան ահեղ է դժոխքի սարսափի զգացումը, կորստյան երկյուղը, այնքան էլ ուժեղ է Գրիգոր Տղայի մոտ հույսը, որը թեև միակ, բայց ամուր հենարան է զղջացող մահկանացուի համար: Ահա թե ինչու նա էլ իր դրական ուսուցչի՝ Նարեկացու պես հույսը երբեք չի կորցրել՝ «անտխակալ և բարեգութ» Արարչից:

«Վա՛յ, երբ զարթնուցում հատուցումն
առնում,
Խաւար և տարտարոս դառն սարսափումն.
Բայց յոյս ետ մեղանաց և ես գտի զայն...
Բարի և զողորմելն և ես ուսոյց զայն...
Ի թողու պարտապանին և մեղ նայ,
Թողցէ Յիսուս բաղմաց զոր պահանջէ
նայ»¹⁰¹:

«Բան մաղթանաց հեծեծանաց» անունով հայտնի մյուս փոքրիկ ոտանավորը նույնպես գրված է Նարեկացու և Շնորհալուռն հետեւելով: Անգամ ոտանավորի վերնագիրը հիշեցնում է Նարեկի վերնագիրը: Հայտնի է, որ Նարեկացու Ողբերգության մատյանի 95 գլուխներում, բացի ՂԲ և ՂԳ «բան»-երից, մնացած բոլոր գլուխներն ունեն «Վերստին յաւելուած կրկին հեծութեան, նորին հսկողի առ նոյն աղբիւ մաղթանաց բանի, ի խորոց սրտի եօսք ընդ Աստուծոյ վերնագիր-կրկնակները: Ահա այստեղից էլ Գրիգոր Տղան քաղել է իր ոտանավորի վերնագիրը: Իսկ ինչ վերաբերում է Շնորհալուռց եկող աղղիցության, պետք է ասել, որ ինչպես սա «Աշխարհ ամենայն» և «Առաւօտ լուսոյ» երգերում, ըստ ամենայնի, աղաչում և պաղատում է ներման համար, նույն ձևով էլ վարվում է Տղան:

¹⁰⁰ Գրիգոր Նարեկացի, «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, քան ԻԳ, էջ 53—54:

¹⁰¹ Զեռ. 1541, էջ 275:

⁹⁸ Զեռ. 8348, էջ 167:

⁹⁹ Անդ:

«Որով և ես ընդ պիտանոյն,
ի քէն հայցեմ հովիւ բարի.
Եւ պաղատիմ յամենայնի,
Արտասուալից մերձ քո մարմնի»¹⁰².
Շնորհալին, տասնամյակներ առաջ, իր վե-
րոհիշյալ երկերում պաղատում էր.

«Ի քէն տէր հայցեմ,
ի մարդասիրէդ ...

Ձայնիւս աղաչեմ
Ձեռքս պաղատիմ...»¹⁰³.

Ապա նույն բանաստեղծն իր մի ուրիշ գոր-
ծում բողոքում է ինքն իր դեմ, որ շանսալով
փառաց ձայնին, հոգով ու մարմնով ամբող-
ջապես ընկել է մեղքի ճոճվր, որից ելք է
խնդրում հետևյալ տողերով.

«Մաքրեա և զիմ միտքս մըթին,
Եւ զգայարանս խաւարին...
Ընդ լուսնական այսահարին,
Մանկանն հօր՝ անհատարին»¹⁰⁴.

Նույն ձևով ու ոգով էլ Գրիգոր Տղան իր
այդ ոտանավորի մեջ ցավում է, որ խելագա-
րի պես ընկել է մեղքի հորձանքների մեջ և
ելք է պաղատում ազատվելու համար.

«Ձիս որ հարեալս եմ ի հոգի,
Այսահարեալ շարեացն ախտի»¹⁰⁵.

Իսկ ի՞նչ ճանապարհով պետք է դուրս գալ
«մեղաց ծով»-ից, ի՞նչ միջոցներով և ո՞ւմ
օգնությամբ։ Երկու բանաստեղծներն էլ հոգով
հարվածված են, կորցրել են հոգու ան-
դորրությունը։ Այս դրությունից ազատվելու
համար, կա միայն մի միջոց. դա ամենակա-
րող Փրկչի ձեռքն է. ահա թե բժշկվելու, վե-
րակենդանանալու համար Շնորհալին ի՞նչ է
խնդրում Հիսուսից, որ իր խոցված հոգուն
«կենաց դեղ» դնի՝ որպես բալասան.

«Գթա՛ և յիս ըստ Ադամին,
Դի՛ր դեղ հոգույս խոցոյս խորին.

Ա՛րկ ի վերայ զձէթ և զգինին,
Ձգեղն կենաց հոգույս վիրին»¹⁰⁶.

Հենց այսպիսի մի բժշկություն էլ Հիսուսից
խնդրում է Գրիգոր Տղան.

«Ողջացուցես, ո՛վ սքանչելի,
Վասն փառացն Քրիստոսի.

Քանզի խոցմամբ առ յիս բերի,
Առ քէն վրիժուդ հին նամակի»¹⁰⁷.

Շնորհալին, երբ զոչում ու ներումն է խընդ-
րում, միաժամանակ գիտակցում է, որ ինքը
արժանի չէ ներման, ամաչում է Տիրոջից, որ
նայի Նրան, բայց և այնպես անհիշալար Հո-

րից խնդրում է քավություն՝ նախքան ահեղ
դատաստանը.

«Այլ դու առատ յամենայնին,
Տո՛ւր ըզզրդշումն անգեղջս անձին,
Դառնալ առ քեզ բոլորովին,
Նախքան կոշման զիս յատենին»¹⁰⁸.

Գրիգոր Տղան էլ իր ոտանավորում գրում
է, որ ինքը արժանի չէ ներման, որովհետև
բարի գործերից հեռացել և չարին է գործա-
կից դարձել։ Բայց քանի որ Տերը առատ
շնորհներ ունի, նա չի կասկածում, որ իրեն
էլ այդ շնորհներից բաժին կհասնի.

«Որ պատահեալ քոյդ մեծ շնորհի,
Ամաչեցեալ ի կոր դարձի.

Որով դու Հայր, յորմէ առի,
Ձաւազանին ծածկեալ բանի...»¹⁰⁹.

Եվ վերջապես Ներսես Շնորհալին ցանկա-
նում է, որ Փրկիչը միշտ իր տկար անձին զի-
նակից լինի չարի դեմ մղվող հոգեկան մար-
տերում, որպեսզի ինքը Տիրոջ զինակցու-
թյամբ այդ կռիվներից հաղթող դուրս գա.

«Լե՛ր մարտակից՝ տրկարսն անձին
Ի հոգևոր պատերազմին...

Ձիս ամրացո՛ւ ի սրոյ նոցին,
Ծշմարտութեան զինով քոյին»¹¹⁰.

Նույն զգացմունքներն ու մտքերը դրսևոր-
վել են Գրիգոր Տղայի մոտ։ Աշխարհը և կյան-
քը նման են մի մեծ հովտի, ուր անվերջ
կռիվներ են գնում չարի ու բարու, մարդու ու
սատանայի միջև։ Որպեսզի տկար մարդը այս
կռիվներում չկործանվի, անպայման հարկա-
վոր է Տիրոջ հզոր օգնությունը.

«Լե՛ր աւանական ինձ այս հովտի,
Մի՛ կորիցէ շնորհ քո բարի.

Որ ինձ եղեր յուսով բանի»¹¹¹.

Այս ոտանավորի վերջին մասն է կազմում
և մի փոքրիկ ներքող՝ բաղկացած 20 տողից։
Այս ներքողն իր էությունով, ոճով ու տաղա-
չափական արվեստով ո՛չ մի կերպ չի կապ-
վում «Բան մաղթանաց» բառերով սկսվող,
երկտող տներից կազմված, երկանդամանի
ուժվանկյան ոտանավորի հետ։ Ներքողը հաս-
տատուն տաղաչափական ձև չունի և մեր շա-
րականների նման մի տեսակ ազատ ոտանա-
վոր է։ Գրիգոր Տղայի «Բան մաղթանաց» ո-
տանավորի այս անհարազատ մասը գրված է
Մովսես Խորենացուն վերագրվող «Մեծացու-
ցէ» շարականների ազդեցությամբ տակ։ Շա-
րականների կանոններում ցրված բաղմաթիվ
«Մեծացուցէ»-ների մեջ Տիրամայրը մեծար-
վում և որակվում է «առաջաստ», «հարսնա-

102 Ձեռ. 8348, էջ 168:

103 «Ժամագիրք», Ս. էջմիածին, 1862, էջ 7:

104 «Յիսուս Որդի», Կ. Պոլիս, 1824, էջ 93:

105 Ձեռ. 8348, էջ 68:

106 «Յիսուս Որդի», էջ 98:

107 Ձեռ. 8348, էջ 168:

108 «Յիսուս Որդի», էջ 116:

109 Ձեռ. 8348, էջ 168:

110 «Յիսուս Որդի», էջ 109:

111 Ձեռ. 8348, էջ 168:

բան», «իմանալի լուսարան», «օթարան լուսածին», «անմահ հարս» և այլ մակդիրներով: Որպեսզի մեղ համար պարզ լինի, թե այս ներբողը ո՞րքան նման է մեր «Մեծացուցէ»-ներին, առենք մի երկու օրինակ: «Մեծացուցէ»-ների մեջ այլաբանորեն հարսը Տիրամայրն է, իսկ փեսան՝ Քրիստոսը, որը զարդարում է երկնի Իսկուհուն ոչ թե հանդերձներով և ուրիշ զուգսերով, այլ անվախճան փառքի հավիտենական զարդերով: Ահա՛ մի քառյակ այդ ներբողից, որը գրված է մեր «Մեծացուցէ»-ների ոգով և ոճով.

«Մայր հաւատոյ սուրբ հարսնարան,
Եւ առագաստ գերադրական,

Տօն փեսային անմահական,

Որ զարդարեաց զքեզ անվախճան»¹¹²:

Ապա հետևյալ օրինակով էլ համեմատենք ներսես Շնորհալու «Աստուած անեղ» գործը Գրիգոր Տղայի այս ոտանավորի հետ.

Շնորհալի.—«Փառաց ի փառքս բարձրանան,

Աջակողմեանքն վերանան,

Յորժամ լսեն զերանական,

Ձայն օրհնութեան ի քէն կոչման»¹¹³:

Գրիգոր Տղա.—«Երկրորդ եկին դու հրաշազան,

Փառք ի փառս բարձրական,

Որ զմեղ ծնանիս լուսոյ

նման,

Աւազանաւն արդիական»¹¹⁴:

Ոտանավորի մյուս տներն էլ գրված են Շնորհալու վեցօրյա արարչության մեծ պոեմի՝ «Արարչական»-ի հետևողությամբ, տեղ-տեղ էլ կրկնություններով: Ամենայն հավանականությամբ այս ներբողը գրվել է հետագա դարերում և կցվել Տղայի այս պոեմին, որը գրիչների կողմից ավանդաբար վերագրվել է Գրիգոր Տղային:



Այժմ անցնենք ծավալով ավելի մեծ և տարբեր բնույթի ոտանավորներին: Վերջինները կազմության տեսակետից բնորոշ են նրանով, որ բացի «Գովելեացն յուսացելոց» ոտանավորից, մնացած բոլորն էլ բաղկացած են երկտող տներից և գրված են մեծ մասամբ երկանդամ ութվանկանի ոտանավորի ձևով: «Գովելեացն յուսացելալ» բառերով սկսվող ծավալուն երկը ծայրանուն (ակրոստիկոս) է, և տների սկզբնատառերը հոգում են «Գրիգորի է այս բանս» բառերը: Ամենից առաջ աչքի

է ընկնում, որ այս բանաստեղծությունը գրված է ներսես Շնորհալու «Յաղագս երկնից և զարդուց նորա» բնագիտական պոեմի ազդեցության տակ: Շնորհալին, դիտելով աշխարհը և գոյություն ունեցող բազմատեսակ արարածները, զարմանքով գրում է.

«Որպէս երազը որ ի յանուրջ զարհուրական,

Պաղատանօք առ ի բարիս փոփոխեցան...
Կայ այլ իմաստ ծածկեալ սքօք

խորհրդական,

Որ իմաստնոց է լսելեաց հաւանական»¹¹⁵:

Գրիգոր Տղան էլ, դիտելով տիեզերքը, աշխարհն ու բազմատեսակ արարածները, նույնպես զարմանքով ասում է.

«...Անտես իրաց միշտ ցանկանամ,

Նըկըրտիմ յար զարարածս.

Ընդ Արարչին գործ զարմանամ»¹¹⁶:

Այնուհետև փոխվում է Տղայի այս ոտանավորի ոգին ու շարք և այս անգամ էլ շարունակում է գրել Շնորհալու «Յիսուս Որդի» և «Արարչական» պոեմների հետևողությամբ: «Արարչական»-ի վեցերորդ երգի չորրորդ ութտողյա տան երկրորդ մասը այսպես է.

«Քո անապատում խոնարհութեամբ,

Եւ կամաւոր խաշելութեամբ,

Հաշտեա ընդ մեզ Տէր զթութեամբ,

Եւ թող ըզմեղս ողորմութեամբ»¹¹⁷:

Իսկ Տղայի այս ծայրանուն ոտանավորի «Ս» տառով սկսվող 13-րդ տունը գրված է ոչ միայն «Արարչական»-ի ազդեցությամբ, այլև բառացի կրկնվել է Շնորհալու վերևում մեջ բերված քաղվածքի վերջին երկու տողը: Ահա՛ Տղայի ոտանավորի այդ մասը.

«Սքանչելի քո զօրութեամբըդ,

Ի դատաստանն յայտնութեամբ,

Ըզմիտս առ քեզ վերամբառնամ.

Հաշտեա ընդ մեզ Տէր գթութեամբ,

Եւ թող ըզմեղս ողորմութեամբ»¹¹⁸:

Այստեղ էլ, ինչպես նախորդ ոտանավորի մեջ, Գրիգոր Տղան ապավինում է Տիրոջը և հույսը դնում նրա վրա, ինչպես Շնորհալին «Յիսուս Որդի» և նարեկացին՝ «Մատեան ողբերգութեան» պոեմներում.

«Ի քոյդ ապաւինեալ,

Միշտ ազնական զքեզ կարդամ,

Գամ առ քեզ գանձդ կենաց»¹¹⁹:

¹¹⁵ «Յիսուս Որդի», էջ 322—323:

¹¹⁶ Ձեռ. 5707, էջ 264:

¹¹⁷ «Շարակնոց», էջմիածին, 1833 թ., էջ 473:

¹¹⁸ Ձեռ. 5707, էջ 264:

¹¹⁹ Անդ:

¹¹² Ձեռ. 8348, էջ 168:

¹¹³ «Փամագիրք», էջ 480:

¹¹⁴ Ձեռ. 8348, էջ 168:

Այնուհետև Գրիգոր Տղան ներսես Շնորհալու մի ուրիշ գործի՝ «Բան հաւատոյ» պոեմի ոգով ու խոսքերով մեծ տեղ է տվել դավանաբանական խնդիրներին: Վերևում տեսանք, թե իր արձակ թղթերում Գրիգոր Տղան հետևողականորեն պայքարում էր երկաբնակության դեմ՝ ըստ որում մերկացնում է քաղկեդոնականությունը: Ահա այդ հարցերն իրենց արտահայտությունն են գտել ինչպես նրա մյուս շափածո մեծ գործերում, այնպես էլ այստեղ: Նա միաբնակությունը հակադրում է երկաբնակությանը այսպես.

«Անսկիզբն Աստուած է Հայր,
Որ ոչ սկիզբն ոչ կատարած.
Առ ի նմանէ ծնեալ որդի...
Ի Հաւրէ բղխեալ հոգին,
Անքննաբար ի հրեղինաց,
Համագոյ կ փառակից,
Եւ իսկականից անեղ բանին»¹²⁰.

Գրիգոր Տղան այնուհետև խոսում է Ս. Երրորդության մասին.

«Կայանաւք և բնակութեամբ,
Երիցն ի մի տեղ հաստատեալ.
Ջի իննուց թիւ խորհրդեան,
Յերից յերկինս բաժանեալ»¹²¹.

Արձակ թղթերում Տղան հորդորում էր մաքուր, գործունյա և աշխատասեր լինելու հետ միասին լինել նաև կամքով ամուր ու տոկուն: Տղան նույն միտքն է արտահայտել նաև այս շափածո գործում: Դիմելով իր ընթերցողներին և բոլոր մարդկանց, նա ասում է.

«Լեր գործունեալ որպէս զերկաթ,
Սուրբ և մաքուր որպէս զարծաթ...»¹²².

Սա է վերահիշյալ ծայրանուն ոտանավորի էությունը: Այս շափածո երկում աչքի է ընկնում խոսքի գեղարվեստական կիրառումը՝ համեմատություններով ու այլաբանություններով: Թեև վերջինները բանաստեղծը օգտագործում է կրոնաբարոյական գաղափարները ամրապնդելու համար, սակայն խոսքի այդ գեղեցիկ միջոցները վերցված են բնությունից և իրականությունից: Օրինակ, ոտանավորի մեջ մի տեղ Արարչին համարում է սառն աղբյուր, իսկ մարդուն՝ ծարավից պապակված և ջուր տենչացող.

«Որ ես աղբիւր ջուր խնդրողաց,
Իմաստութեամբ քո հայցողաց.
Ի ծարաւան արբուցողաց,
Ջբաժակն ցուրտ պահանջողաց»¹²³.

Մի այլ տեղ էլ պաղատող հեղինակը գրտնում է, որ ինքը ապականվել է մեղքով, և

մարմնի բոլոր մասերով խարխուլել ու քայքայվել է: Այս դրուժնունից իրեն միայն կարող է հանել ամենաբույժ բժիշկը՝ երկնային ամենակարող Հայրը.

«Ի քեզ Տէր միացելոյ,
Ջանդամս ի քէն հատեալ պղծոյ,
Յաւդեա անդրէն զաւղով սիրոյ,
Որպէս ճարտար բժիշկ խոցոյ»¹²⁴.

Վերջապես մեղսագործը նման է որոգայթ ընկած, կամ օձից խայթված մարդու, որին պիտի ազատի և բժշկի նույնպես ամենահար Արարիչը.

«Ջամենայն շար զորոգայթ,
Առողջացո՛ղ զերթ զաւժ ի խայթ...
Լուսաւորեա զերթ ճառագայթ,
Աստուածային խորանսն անդ հարթ»¹²⁵.

Երբ ծայրանուն ոտանավորը վերջանում է «Գրիգորի է բանս այս» կապակցությամբ, այնուհետև գալիս է 7 քառյակ, որոնք կազմում են այս գրվածքի երկրորդ, բայց անկախ մի մասը: Վերջինս թե՛ բովանդակությամբ և թե՛ արվեստով, չի կապվում այս ոտանավորի բովանդակության հետ: Եթե սկզբից բանաստեղծը խոսում է Տիրոջ հետ, նրան դիմում է խնդրվածքներով, հիմնական նպատակն է ազատվել մեղքից, ներվել, ապա այս վերջին մասում հեղինակը ինքն է խորհրդատուի դերում հանդես գալիս և հորդորում մարդկանց, թե ինչպես պետք է անեն, որ երկրեքի գանձերից բաժին ստանան.

«Ասեմ քեզ բան արդար և եթ,
Բոլոր հաստատ որպէս զմբէթ,
Ձոր թէ նայիս ինքեդ գոնէ գէթ,
Բժշկեսցէ զքեզ ու խէթ»¹²⁶.

Ոտանավորի այս երկու մասերը ոչ միայն բովանդակությամբ են տարբերվում, այլև վերջին մասի շարժումն ու արվեստը միանգամայն խորթ են Գրիգոր Տղայի գրվածքներին: Քառյակների տողերը վերջանում են խղճով բռնահանգերով, իսկ տեղ-տեղ էլ նույնիսկ անիմաստ: Այս տարբերությունները հիմք են տալիս մտածելու, թե ոտանավորին միացած այս մասը, որը ոչ մի բանով չի կապվում ծայրանվան հետ, արդյո՞ք Գրիգոր Տղայի գրչին է պատկանում՝ ինչպես ցույց է տրված ձեռագրում, թե՛ ուրիշի գործ է, սակայն գրչինքը սխալմամբ են Տղայի գործին կցել: Ամենայն հավանականությամբ ոտանավորի այս մասը Գրիգոր Տղային չի պատկանում:

(Շարունակելի)

¹²⁰ Ձեռ. 5707, էջ 264.


¹²¹ Անդ.

¹²² Անդ.

¹²³ Անդ.

¹²⁴ Անդ.

¹²⁵ Անդ.



ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐ

Ստորև տալիս ենք 1915 թվականին զոհված հայ մտավորականների ծածկանունների ցանկը, որը հավակնություն չունի ամբողջական լինելու:

Մեզ մոտ կա մի քանի հազարի հասնող զորոյների, հրապարակասոսների, լրագրողների, գիտնականների, մանկավարժների, հոգևորականների, դավառական թղթակիցների և առհասարակ պարբերական մամուլում հանդես եկած մարդկանց տասը հազարից ավելի ծածկանուն: Դրանց մեջ թերևս լինեն և 1915 թվականին զոհվածների ծածկանուններ, բայց մենք ընտրել ենք միայն մեզ ստույգ կերպով հայտնի եղողները:

Ծածկանունների ցանկը կազմելիս, աշխատել ենք հնարավորին չափ ավելի պատկերացում տալ, թե այս կամ այն հեղինակը իր այս կամ այն ծածկանունով ո՞ր թերթերում կամ ամսագրերում, ո՞ր թվականներին և ո՞ր համարներում է հանդես եկել:

Բավականին դժվարությունների ենք հանդիպել հեղինակային ցանկն ամբողջացնելու, ճշտելու գործում: Միշտ չէ, որ հաջողվել է պարզել այս կամ այն գործչի հայրանունը, ծննդյան թվականը, մանավանդ օրն ու ամիսը (Օրերը մեզ մոտ տրված են հին տոմարով): Թերևս դժվար էլ է սպասել պատասխան տալ այս հարցերին, որովհետև, ըստ երևույթին, մամանակին դրանց վրա բոլորը չէ, որ ուշադրություն են դարձրել:

Հեղինակային ցանկում տեղ են գտել բազաքական տարրեր հայացքների տեր, աշխարհիկ և հոգևոր գործիչներ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Աղբյուրներ

ԳԱԹ.— Հայաստանի դրականության և արվեստի թանգարան:

ՀՊԿՊԱ.— Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ:

Ալպոյանյան.— Ա. Ալպոյանյան, «Պատմություն հայ Կեսարիո», հ. Ա, Բ, Կահիրե, 1937:

Ալպոյանյան, Ա.— Ա. Ալպոյանյան, «Պատմություն Եվդոկիո հայոց», Կահիրե, 1952:

Ալպոյանյան, Ա. Ա.— Ա. Ալպոյանյան, «Անհետացող դեմքեր, Գ. Զոհրապ», Կ. Պոլիս, 1919:

Ասպարեզ.— «Ասպարեզ», 1908—1918 (ժողովածու), Ֆրեդնո, 1918:

Թեոդիկ.— Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս: Ժամանակ.— Բ. Ազատյան, «Ժամանակ, քառասնամյա հիշատակարան», 1908—1948, Կալաթա, 1948:

Խաբերդ.— Վահե Հայկ, «Խաբերդ և անոր ոսկեղեն դաշտը», Նյու-Յորք, 1959:

Հայ հանրագիտակ.— Հ. Մ. Պատուրյան, «Հայ հանրագիտակ», պրակ Ա—Զ, Բուրիշ, 1938:

Հարությունյան.— Ա. Հարությունյան, «Արձակ էջեր և քերթվածներ», Փարիզ, 1937:

Հուլարձան.— «Հուլարձան նվիրված Սոցիալ դեմոկրատ հնչական կուսակցության քառասնամյակին», Փարիզ, 1930:

Հուլարձան ապրիլ տասնամյակի.— Թեոդիկ, «Հուլարձան ապրիլ տասնամյակի», Կ. Պոլիս, 1919:

Ժիզմենյան.— Մ. Գ. Ժիզմենյան, «Խաբերդ և իր դավաններ», Ֆրեդնո, 1955:

Մշակի քառասնամյակ.— Լ. Դանիկյան, «Մշակի քառասնամյակ», 1872—1912, Թիֆլիս, 1912:

Քառն կախաղաններ.— «Քառն կախաղաններ», Փրովինցենս, 1916:

Բ. Մամուլ

Ազատամ.— «Ազատամարտ»:

Արև. մամուլ.— «Արևելյան մամուլ»:

Արշալ.— «Արշալույս»:

Մրձագ.— «Մրձագանք»:

Բազմ.— «Բազմավեպ»:

Բյուզ.— «Բյուզանդիոն»:

Գիտ. շարժում— «Գիտական շարժում»
 Երիտ. Հայ.— «Երիտասարդ Հայաստան»
 Երկրագ.— «Երկրագունտ»
 Կովկ. առավուտ— «Կովկասի առավուտ»
 Հայ գրակ.— «Հայ գրականություն»
 Հայր.— «Հայրենիք»
 Հանդ.— «Հանդես ամսօրյա»
 Հանրագ.— «Հանրագիտակ»
 Հորիզ.— «Հորիզոն»
 Մանգ. էֆֆյար— «Մանգոլների էֆֆյար»
 Պայք.— «Պայքար»
 Սուրհ.— «Սուրհանդակ»
 Վերածն.— «Վերածնություն»

Գ. Զաղաքներ

Ալ-գրիա— Ալեքսանդրիա
 ԱՄՆ— Ամերիկայի Միացյալ Նահանգներ
 Բիֆ.— Բիֆինս
 Կահ.— Կահիրե

Կ. Պ.— Կոստանդնուպոլիս
 Վեն.— Վենետիկ
 Վիեն.— Վիեննա

Դ. Այլևայլ

Աղբ.— Աղբյուր
 Արխ.— Արխիվ
 Գ.— Գործ
 Գյ.— Գյուղ
 Եպ.— Եպիսկոպոս
 Թ.— Թերթ
 Մածկ.— Մածկանուն
 Հ.— Հատոր
 Վարդ.— Վարդապետ
 Վախ.— Վախճանիվ է
 Վկ.— Վկայություն
 Քան.— Քահանա
 Յ.— Յոնդ

ՄԱԾԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ա. Բ. Գ.— Բյուրեղյան Վահան Ս.
 Հայկ (Կեսարիայի Մունճուսուն գլ.) 1913.
 Աղբ. Ալպոյանյան, հ. Ա, էջ 1248:
 Ա. Գ. (փաստաբան)— Գասպարյան Արիստակես
 Բյուզ. (Կ. Պ.) 1899—1909 թ. թ.
 Աղբ. Բյուզ. (Կ. Պ.) 1909 № 3777:
 Ա. Հ.— Հարությունյան Արտաշես
 Արև. մամուլ (Իզմիր) 1903=26, 43, 1905=32,
 1907=10. Բյուզ. (Կ. Պ.) 1905=2657:
 Ա. Վ.— Դերձակյան Օնենիկ
 Ազատամ. (Կ. Պ.) 1910.
 Աղբ. Բյուզ. (Կ. Պ.) 1910 № 4277:
 Ազ.— Մայրության հաշատուր
 Մշակ (Թիֆ.) 1892=35:
 Աբրաքսյան, Արշամ— Սիմամերթ
 Ազատամ. (Կ. Պ.) 1912=823.
 Աղբ. ԳԱԹ, Ն. Լ. Մանկունու արխ.:
 Ազատյան— Մայրության հաշատուր
 Մշակ (Թիֆ.) 1889=147, 149:
 Ազատյան, Խ.— Մայրության հաշատուր
 Մշակ (Թիֆ.) 1890=66, 71, 74, 80.
 Աղբ. Մշակի քառասնամյակ, էջ 75:
 Ազ-լիս, Խ.— Մայրության հաշատուր
 Մշակ (Թիֆ.) 1890=138.
 Աղբ. ՀղկՊԱ, ֆ. 227, գ. 234, թ. 51:
 Ալիֆյան— Թովմուզյան Երվանդ
 Պայք. (Պարտիզակ) 1911.
 Աղբ. Քսան կախաղաններ:
 Ակնունդ, Է.— Մայրության հաշատուր
 Ազատամ. (Կ. Պ.) 1910-ական թվ. Դրոշակ
 (ժրնե) 1899=1, 2, 4—10, 1900=2—4, 7, 9, 10,
 1901=2, 5, 9, 1902=3, 4, 6, 1903=1—3, 7—9,
 1904=2—8, 12. Հորիզ. (Թիֆ.) 1914=73.
 Աղբ. Թեոդիկ, 1910:
 Աշուղ— Երվանդ
 Բյուզ. (Կ. Պ.) 1898=607, 1899=735, 747, 763,
 764, 781, 802, 825, 826, 840, 852, 864, 880—883:
 Աշուղ Շահնազար— Հարությունյան Մարտիրոս Ա.
 (գրքեր).
 Աղբ. Հուշարձան ապրիլ տասնըմեկի, էջ 75:

Աշխ Երվանդ— Զարգարյան Ռուբեն
 Հայր. (Բոստոն) 190.
 Աղբ. Հայր. (Բոստոն) 1925, № 3, էջ 42:
 Ապտակ— Բյուրառ Սմբատ
 Աղբ. Թեոդիկ, 1912, էջ 373:
 Ասլան— Զարգարյան Ռուբեն
 Դրոշակ (ժրնե) 1901=9.
 Աղբ. ԳԱԹ, Ն. Լ. Մանկունու արխ.:
 Ասո— Օսյան Տիգրան
 Բյուզ. (Կ. Պ.) 1910=4102, 4104—4106. Վան-
 Տոսպ (Վան) 1913=22. Վերածն. (Ռուսլուկ)
 1904=43, 44, 51. Դատաստան, Դարձյալ մեկը,
 Դյուցազնական, Կարմիր օրեր, Հալսե, Յոթն հոգի
 (գրքեր):
 Աղբ. Կիլիկյան տարեցույց, 1922, էջ 317:
 Ասուպ— Պետրոսյան Մինաս
 Կիլիկյան տարեցույց (Կ. Պ.) 1922, էջ 209.
 Աղբ. Նույն տեղում, էջ 252:
 Ավետիսյան, Վազգանուշ— Մանգուրյան Ռեբեկա
 Ազգ. Կոչնակ, Հայր. (ԱՄՆ) 1900-ական թվ.
 Աղբ. Զիլմեյան, էջ 596:
 Ավո— Կյուրեղյան Մելքոն
 Ազատամ. (Կ. Պ.) 191.
 Աղբ. Հրանտ, Ամբողջական գործեր, Փարիզ, 1931,
 էջ 16:
 Ավո— Պելլիբյան Ավետիս
 Արշալ. (Կահ.) 1899. Արտեմիա (Կահ.) 1902=1—6.
 Գեղարվեստ (Թիֆ.) 1908=1. Մուրճ (Թիֆ.)
 1904=6, 7, 1905=1.
 Աղբ. ԳԱԹ, Գ. Լևոնյանի արխ.:
 Ատոմ— Երեցյան Ատոմ
 Մուրճ (Թիֆ.) 1905=8:
 Ատոմ— Շահրիկյան Հարություն
 Երկրի ձայն (Թիֆ.) 1906=5. Հայր. (Կ. Պ.)
 1892=335.
 Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 287:
 Ատոմ Միրզա— Սիմամերթ
 Նոր կյանք (Լոնդոն) 1899=18.
 Աղբ. Կյանք և արվեստ (Փարիզ) 1939, էջ 107:
 Ատոմ— Շահին— Երեցյան Շահին
 Տարազ (Թիֆ.) 1898=12:

Արամ-Աղոտ-Մենասյան Սարգիս

Պայք. (Բոստոն) 1903.

Աղբ. Ասպարեզ, էջ 233.

Արարչանյութ-Տաղավարյան Նազարեք

Գիտ. շարժում (Կ. Պ.) 1887=3-5, 9-12.

Աղբ. Գիտ. շարժում (Կ. Պ.) 1887, էջ 129.

Արգոս-Քելեկյան Տիրան

Բանբեր (Կ. Պ.) 1914=3. Մադիկ (Կ. Պ.) 1903=2,

8, 11, 13, 16, 19, 21, 1904=2. Մասիս (Կ. Պ.)

1900=2.

Աղբ. Մասիս (Կ. Պ.) 1903 № 19.

Արծիվյան-Խաժակեյան Գարեգին

Ազատամ. (Կ. Պ.) 1911.

Աղբ. Հովիտ (Թիֆ.) 1911, № 37, էջ 586.

Արծրունի-Ավետիսյան Հակոբ

Կոհակ (Կ. Պ.) 1909.

Աղբ. Հայ հանրագիտակ, էջ 327.

Արծրունի-Տաղավարյան Նազարեք

Լրաբեր (Կահ.) 1905.

Աղբ. Հայ միտք (Փարիզ) 1955, № 11.

Արմաշիս-Տեր-Սահակյան Կարապետ վարդ.

Բազմ. (Վեն.) 1907=4, 12.

Աղբ. Հ. Մ. Պոստոլյան, Հայ մամուլը տասնհինգ

տարվան մեջ, Վենետիկ, 1909, էջ 52.

Արմեն-Թեհրիզյան Արմենակ

Բյուզ. (Կ. Պ.) 1904=2420, 1905=2551, 2636,

1912=4740.

Աղբ. Բյուզ. (Կ. Պ.) 1905 № 2665.

Արմեն-Չամուրյան Հակոբ

Արեւիք (Կ. Պ.) 1908=6871.

Աղբ. Այդոյաճյան, հ. Ա, էջ 1227.

Արմեն Փոսպալտ-Խաժակեյան Գարեգին

Հառաջ (Թիֆ.) 190.

Աղբ. Լոյզե Իշխանյանի վկ.

Արեւոյտ-Կյուրեյան Մելիք

Ներկրագ. (Կ. Պ.) 1885.

Աղբ. Շանթ (Կ. Պ.) 1919, № 12, էջ 134.

Արշավիր-Սահակյան Արշավիր

Մասիս (Կ. Պ.) 1905=2.

Աղբ. Մասիս (Կ. Պ.) 1905, № 18.

Արշավիր Սահակյան-Սահակյան Արշավիր

Լույս (Կ. Պ.) 1905=9, 10, 23-25.

Արսույա-Սուլաֆյան Արտաշես

Աշխատանք (Վան) 191.

Աղբ. Քսան կախաղաններ, էջ 159.

Արտավազդ-Ջոհրապ Գրիգոր

Լրագիր (Կ. Պ.) 1878=875, 1879=881. Շիրակ

(Ալ-դրիս) 1905=4.

Աղբ. Այդոյաճյան, հ. Ա, էջ 38.

Արտավազդ-Տեր-Սահակյան Կարապետ վարդ.

Աղբ. Հայք. (Բոստոն) 1923, № 1, էջ 37.

Բ

Բ. Շ.—Շահապյան Բարսեղ

Հորիզ. (Թիֆ.) 1913=143.

Բարա Գասպար-Խաժակեյան Գարեգին

Ազատամ. (Կ. Պ.) 191. Շարժում (Վանա).

Աղբ. Վիթոշ-Արարատ, Բուլղարահայ տարեգրիք.

1935, էջ 26.

Բանվոր-Թովուրյան Նովանդ

Պայք. (Պարտիզակ) 1911.

Աղբ. Քսան կախաղաններ, էջ 74.

Բարսեղենց, Գ.—Բարսեղյան Գեղամ

Մանգ. էֆրյար (Կ. Պ.) 1901=160, 1902=189,

193, 196, 201, 205, 208, 214.

Բյուրատ, Սմբատ-Տեր-Ղազարյան Սմբատ

Աղբ. Հանդ. ամս. (Վիեն.) 1910, № 11.

Բյուրատայանց, Սմբատ-Բյուրատ Սմբատ

Մասիս (Կ. Պ.) 1881=2836.

Աղբ. Բեռլին, 1912, էջ 372.

Բորակաձին-Տաղավարյան Նազարեք

Գիտ. շարժում (Կ. Պ.) 1887=1-3, 5-9.

Աղբ. Գիտ. շարժում (Կ. Պ.) 1887, № 4, էջ 129.

Գ

Գ.—Գազանյան Հովհաննես

Բյուզ. (Կ. Պ.) 1597=275, 1898=366, 581.

Գ. Բ.—Բարսեղյան Գեղամ

Մանգ. էֆրյար (Կ. Պ.) 1902=241.

Գ. Զ.—Ջոհրապ Գրիգոր

Ներկրագ. (Կ. Պ.) 1883=1. Մադիկ (Կ. Պ.)

1890=12, 14, 1891=19, 20, 24-26. Հայք.

(Կ. Պ.) 1890-ական թվ. Մասիս (Կ. Պ.) 1893=

3979, 3988.

Աղբ. Ժամանակ, էջ 72.

Գ. Զ.—Ջուլյանյան Գևորգ

Բյուրակն (Կ. Պ.) 1901=50.

Գ***—Թորոսյան Գրիգոր

Մանգ. էֆրյար (Կ. Պ.) 1908=2294.

Գ***—Թորոսյան Գրիգոր

Մանգ. էֆրյար (Կ. Պ.) 1908=2292, 2298.

Աղբ. ԳԱԹ, Ա. Արմենյանի արխ.

Գ. Կ. Ո.—Ոսկերիչյան Գարեգին Բան.

Արեւիք (Կ. Պ.) 1901=21, 41, 42, 1908=6874,

1909=7107. Բյուզ. (Կ. Պ.) 1896=36, 1897=50,

60, 72-74, 89, 90, 133, 142, 143, 150, 167, 169,

186, 209, 220, 230, 275, 300, 312, 318, 319, 334,

340, 342, 343, 345, 352, 1898=363, 377, 384,

395, 421, 425, 492, 504, 513, 524, 526, 536,

537, 548, 584, 588, 605, 645, 647, 1899=690,

698, 764, 766, 778, 789, 810, 829, 867, 923,

935, 941, 953, 1900=985, 986, 1001, 1012, 1032,

1036, 1057, 1061, 1109, 1126, 1153, 1270,

1901=1294, 1320, 1907=3287, 1911=4462,

4591, 1913=5052, 5065, 5083, 5091, 5101, 5108.

Մանգ. էֆրյար (Կ. Պ.) 1901=185, 197, 198,

1902=226, 229, 244, 279, 313. Մասիս (Կ. Պ.)

1878=2148, 1879=2239, 2372, 1880=2659, 2756,

1900=13, 26, 1901=6, 47, 1904=8.

Աղբ. Մասիս (Կ. Պ.) 1879, № 2380.

Գաղթական-Ներսիսյան

Բյուզ. (Կ. Պ.) 1897=294, 305, 1898=585, 591,

600, 605, 608, 618, 630, 642, 1899=699.

Գաղթական, Ն.—Ներսիսյան

Բյուզ. (Կ. Պ.) 1897=327, 330, 354, 359, 1898=

361, 373, 386, 418, 453.

Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի.

Գանձակ Պենտոստացի —Տեր-Բարսեղյան Բարսեղ

Ազատամ. (Կ. Պ.) 191.

Աղբ. Այդոյաճյան, հ. Ա, էջ 1239.

Գասպար-Խաժակեյան Գարեգին

Ալիք (Թիֆ.) 1906=1, 2, 5, 8, 25.

Գեղո—Բարսեղյան Գեղամ

Աղբ. Հայ հանրագիտակ, էջ 389.

Գլանիկ-Քելեկյան Տիրան

Մադիկ (Կ. Պ.) 1903=2, 5-7, 9, 10, 12, 28,

32-33, 1904=1. Մասիս (Կ. Պ.) 1901=18, 21,

1902=12, 1913=18, 21.

Աղբ. Այդոյաճյան, հ. Բ, էջ 2072.

Գրիգոր Նոր-Նսայան Գրիգոր

Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի.

Դ

Դանիելյան, Ներսես եպ.—Դանիելյան Գևորգ

Աղբ. Բեռլին 1911, էջ 255.

Դոն-Էմանուել-Մալույան Խաչատուր

Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1882.

b

- b. Ա.—Երեցյան Առոմ
 Մուրճ (Թիֆ.) 1901=3-8.
 Աղբ. ԳԱԹ, Մուրճի արխ.:
- b. Գ.—Նուվյան
 Բյուզ. (Կ. Պ.) 1898=465:
- b. Ս.—Նուվյան
 Արևելք (Կ. Պ.) 1908=6896, 1909=7062. Շար-
 ժում (Վանա) 1902:
- b. Ս.—Սուգիկյան Նիլա
 Բանբեր (Կ. Պ.) 1914=57, 60:
- Նալիմ—Կոզիկյան Գարեգին
 Անկախ մամուլ (Թիֆ.) 1907=3, 1908=8, 16, 22.
 Գործ (Թիֆ.) 1908=1. Երկրի ձայնը (Թիֆ.)
 1906=2, 1907=31, 1908=2, 3. Կյանք (Թիֆ.)
 1906=3, 5, 6, 14, 16, 18. Ձայն (Թիֆ.) 1907=1,
 2, 5, 6, 10. Մշակ (Թիֆ.) 1908=62. Նոր հոսանք
 (Կ. Պ.) 1909.
 Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 149:
- Նրկայան, Ն.—Նրգարյան Նովանդ
 Բյուզ. (Կ. Պ.) 1900=1084, 1084, 1901=1386,
 1480, 1482, 1902=1749, 1876, 1878, 1879, 1903=
 2030, 2037—2089, 2125, 2188, 1904=1495,
 1497, 1905=2642, 2664, 1906=2866. Մանկ.
 էֆբյար (Կ. Պ.) 1901=120.
 Աղբ. Ալպոյանյան, հ. Բ, էջ 2355:
- Նրո—Բյուրյունյան Մեհուհ
 Աշխատանք (Վան) 1912=3.
 Աղբ. Հորիզ. (Թիֆ.) 1915, № 232:
- Նովանդ—Նուվյան
 Արևելք (Կ. Պ.) 1895. Բյուզ. (Կ. Պ.) 1897=98,
 110, 150, 171, 181, 193, 208, 218, 227, 257, 270.
 Ճերմակի շարքին (Կ. Պ.). Մասիս (Կ. Պ.) 189.
 Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի, էջ 55:
- Նուվյան—Մամեջիկյան Նովանդ
 Աղբ. Թեոդիկ, 1910:
- Նրևակ—Փրիշկյան Լևոն
 Մաղիկ (Կ. Պ.) 1903=3, 5, 6, 8—14, 16, 19,
 20, 22, 25, 27—29, 31—37, 39, 42, 44, 45,
 1904=3—5.
 Աղբ. Մաղիկ (Կ. Պ.) 1907, № 7:

2

- Զարդար—Զարդարյան Ռուբեն
 Արևելք (Կ. Պ.) 1908=6856:
- Զարբնի—Բուրեղյան Գեղամ
 Աղբ. Հայ հանրագիտակ, էջ 389:
- Զոհրապ, Գրիգոր—Զոհրապյան Գրիգոր
 Աղբ. Ալպոյանյան, Ա. Ա.:
- Զուլում, Գ.—Զուլումյան Գևորգ
 Բյուրակն (Կ. Պ.) 1900=9, 21.
 Աղբ. Խարբերդ, էջ 1288:

t

- Էծաճառ—Զարդարյան Ռուբեն
 Շիրակ (Ալ-դրիա) 1905=1, 3, 5. Ռազմիկ (Ֆի-
 լիպպե) 190:
- Էլմինո—Կոզիկյան Գարեգին
 Երկրի ձայնը (Թիֆ.) 1907=22, 25, 1908=4, 5.
 Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 265:
- Էմին—Խաժակյան Գարեգին
 Գեղարվեստ (Թիֆ.) 1911=4.
 Աղբ. ԳԱԹ, Գ. Լևոնյանի արխ.:
- Էսքերա—Խաչիկյան Միհրան
 Բյուզ. (Կ. Պ.) 1899=926, 943, 947. Բյուրակն
 (Կ. Պ.) 1897=41—42, 45—46, 1899=41, 45,
 Աղբ. Թեոդիկ, 1911, էջ 264:

l

- Ընդդիմադիր—Սուլայան Արտաշես
 Ասուպ (Վան) 1906.
 Աղբ. Կիլիկյան տարեցույց, 1922, էջ 315:
- Ընկեր Կիլո—Թարսյան Գրիգոր
 Կաժառը (Կ. Պ.) 1910=386. Հի-Հի-Հի (Կ. Պ.)
 1910. Վերջին լուր (Կ. Պ.) 1915=176, 183, 190,
 197.
 Աղբ. Թեոդիկ, 1911, էջ 410:

p

- Բ.—Բլիտինցին
 Բյուզ. (Կ. Պ.) 1908=3651. Հայր. (Կ. Պ.) 1894=
 427:
- Բար—Բյուրա Սմբատ
 Աղբ. Թեոդիկ, 1912, էջ 373:
- Բախտիկ—Կոզիկյան Գարեգին
 Երկրի ձայնը (Թիֆ.) 1907=26, 28, 29, 31,
 1908=2, 4.
 Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 265:
- Բլիտ—Բլիտինցին
 Մուրճ (Թիֆ.) 1904=1—5.
 Աղբ. Ռ. Զարդարյան, Ցայգալույս, Երևան, 1960,
 էջ 517:
- Բլիտինցին—Հարությունյան Հովհաննես
 Անահիտ (Փարիզ) 1909/1910=11—12. Արևելք
 (Կ. Պ.) 1901=15, 36. Բյուրակն (Կ. Պ.) 1889=
 1—2, 18, 1901=52, 1904=28. Ժամանակ (Կ. Պ.).
 Մաղիկ (Կ. Պ.) 1904=8, 1905=11, 1907=18.
 Հոսանք (Կահ.) 1912=17.
 Աղբ. Բլիտինցին և իր գործը, Ռուսոն, 1927, էջ Բ:
- Բլրակից—Բերգյան Հակոբ
 Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի:
- Բլրակից «Բյուզանդիոն»-ի—Կյուրեղյան Մելիք
 Բյուզ. (Կ. Պ.) 1905=2726, 2732:
- Բլրակից Հ. Գ.—Գագանյան Հովհաննես
 Բյուզ. (Կ. Պ.) 1897=240:
- Բլրակից ի Պոնտոս—Կյուրեղյան Մելիք
 Բյուզ. (Կ. Պ.) 1905=2820, 1906=2844, 2853,
 2874.
 Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 168:
- Բլրակից Պոնտոսի—Կյուրեղյան Մելիք
 Բյուզ. (Կ. Պ.) 1906=2897.
 Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 168:

j

- Ժիրայր—Ջուրյան Բարսեղ
 Ազատամ. (Կ. Պ.) 1909.
 Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 287:

l

- Լ.—Փրիշկյան Լևոն
 Բյուրակն (Կ. Պ.) 1901=14:
- Լարենց, Լևոն—Փրիշկյան Լևոն
 Գեղարվեստ (Թիֆ.) 1908=2, 1909=3. Հորիզ.
 (Թիֆ.) 1912=175.
 Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի, էջ 19:
- Լոնցի—Բյուրա Սմբատ
 Փյունիկ (Ալ-դրիա) 1900-ական թվ.
 Աղբ. Կ. Բյուրատի վկ.:
- Լոնցորդի—Բյուրա Սմբատ
 Աղբ. Թեոդիկ, 1912, էջ 373:
- Լի—Հունկ—Ջանկ—Թարսյան Գրիգոր
 Լույս (Կ. Պ.) 1901=10, 31, 1902=8. Մանկ.
 էֆբյար (Կ. Պ.) 1902=263.
 Աղբ. Բյուզ. (Կ. Պ.) 1903, № 1928:

Լի-Հունկ-Չանկ-Սարգսյան Պարույր

Մոծակ (Տրապիզոն) 1910.

Աղբ. Վ. Բաթիկյանի վկա:

Լուսինյան, Բ.-Թորոսյան Գրիգոր

Լույս (Կ. Պ.) 1902=33. Հանրագ. (Կ. Պ.) 1905=

4, 13, 20, 22, 1906=2, 6-8, 10, 11. Հանրագ.

(Կ. Պ.) 1906=3-41.

Աղբ. Բյուրակն (Կ. Պ.) 1903, № 45, էջ 891:

Լուսինյան, Բանգող-Թորոսյան Գրիգոր

Լույս (Կ. Պ.) 1902=25, 26, 29, 30, 32, 35. Հան-

րագ. (Կ. Պ.) 1903=35. Մանգ. էֆրյար (Կ. Պ.).

Աղբ. Հանրագ. (Կ. Պ.) 1903, № 18, էջ 384:

Լ. Ք.-Քիրիշեյան Լևոն

Արև. մամուլ (Իզմիր) 1903=12, 26, 1905=20.

Բյուլ. (Կ. Պ.) 1902=1782, 1796, 1802, 1813,

1839, 1903=1911, 1904=2484. Բյուրակն (Կ. Պ.)

1901=11. Մադիկ (Կ. Պ.) 1903=5, 1904=6, 7, 9:

և

և.-Խամակյան Գարեգին

Ալիք (Թիֆ.) 1906=9. Հառաշ (Թիֆ.) 1906=15,

18, 19, 21, 23, 26, 37, 39, 49, 54, 56, 61,

67, 68. Մշակ (Թիֆ.) 1904=95, 158-161, 166,

167, 183, 203, 1905=77, 78, 213:

և.-Մալումյան Խաչատուր

Մշակ (Թիֆ.) 1887=64:

և. Մ.-Մալումյան Խաչատուր

Մշակ (Թիֆ.) 1886=19, 24, 36, 49, 58, 82, 98,

104, 106, 107, 114, 123, 125, 129, 137, 143, 148,

1887=3, 13, 21, 25, 37, 42, 46, 50, 57, 65, 72,

87-90, 94, 96, 97, 127, 131, 132, 136, 138,

140-142, 144, 1888=1, 2, 6, 10, 16, 22, 23,

25, 30, 33, 38, 39, 42, 45, 50, 52, 55, 81, 86, 90,

103, 106, 109, 115, 119, 123, 125, 130, 133, 134, 136,

147, 148, 1889=1, 5, 8, 10, 17, 18, 22, 27, 30,

35, 39, 45, 50, 60, 62, 64, 66, 69, 70, 73, 74,

76-86, 88, 123, 125, 128, 129, 132, 137, 139,

140, 142, 146, 1890=4, 5, 7, 55, 59, 68-70,

73, 76, 79, 1892=8, 15, 17, 19, 21, 24, 26, 29,

36, 39, 45, 48, 50, 53, 56, 58, 60, 69, 71-74,

82, 91, 95, 96, 102, 105, 106, 109, 113, 115, 116,

134, 139, 142, 145, 146, 148, 1893=4, 5, 10,

18, 25, 1894=19, 35, 140.

Աղբ. Մշակի բառասանայակը, էջ 125:

ևմր.-Տեր-Սահակյան Կարապետ վարդ:

Բաղմ. (Վեն.) 1908=2:

ևռամակ-Խամակյան Գարեգին:

Ալիք (Թիֆ.) 1906=1, 4, 15, 16. Ժամանակ

(Թիֆ.) 1907=1, 30. Կովկ. առավոտ (Թիֆ.)

1907=27, 28. Հառաշ (Թիֆ.) 1906=3, 4, 12, 27,

32, 46, 59, 72, 74. Հորիզ. (Թիֆ.) 1909=12, 47,

1911=59. Մշակ (Թիֆ.) 1904=5, 8, 17, 18, 22,

24, 30, 32, 39-41, 44-46, 52, 55, 57, 61, 67, 69,

73, 78, 87, 126, 133, 137, 146, 151, 165, 169,

170, 175, 181, 188, 189, 202, 206, 212, 215, 219,

228, 240, 252, 259, 267, 269, 272, 274, 1905=5,

40, 44, 48, 80, 81, 157, 164-166, 170, 177, 183,

185, 197, 200, 201, 208, 210, 215, 216, 1906=7, 8,

13. Մուրճ (Թիֆ.) 1901=9, 10, 1903=9. Տարազ

(Թիֆ.) 1894=17-19, 1895=20, 27-31, 35-

37, 1898=39-42, 50, 1899=1, 6, 7.

Աղբ. Հուշարձան ապրիլ տասնըմեկի:

ևռամակ, Գ.-Խամակյան Գարեգին

Հորիզ. (Թիֆ.) 1913=278. Տարազ (Թիֆ.) 1892=

10:

ևայրոց-Բյուրատ Սմբատ

Աղբ. Թեոդիկ, 1912, էջ 373:

ևթանցի-Դանիելյան Մանուկ

Արևելք, Բյուրակն (Կ. Պ.) 1900-ական թվ.

Աղբ. Թեոդիկ, 1922, էջ 361:

ևռսնակ-Դանիելյան Ներսես վարդ.

Արև. մամուլ (Իզմիր) 1895=15, 1898=2, 3, 5,

6, 10, 12, 1899=11.

Աղբ. Վերածնություն (Բոստոն) 1920, № 5-6,

էջ 157:

և

և.-Հարությունյան Արտաշես

Բյուլ. (Կ. Պ.) 1897=60. Բյուրակն (Կ. Պ.)

1898=16, 20-23, 28, 30, 39, 47-48, 1899=

9-10, 12, 14, 16, 23.

Աղբ. Բյուրակն (Կ. Պ.) 1898, № 13, էջ 204:

և. Մ.-Կյուրեյան Մելիք

Արևելք (Կ. Պ.) 1889.

Աղբ. Նոր-Դար (Թիֆ.) 1889, № 165:

և. Տ. Ս.-Տեր-Սահակյան Կարապետ վարդ.

Բաղմ. (Վեն.) 1900=5, 9:

ևայրոց-Պելիկյան Մարի

Հանրագ. (Կ. Պ.) 1905=18.

Աղբ. Թեոդիկ, 1921, էջ 169:

ևայծիկ-Ճանկալյան Հարություն

Աղբ. Հուշարձան ապրիլ տասնըմեկի:

ևարո-Հարությունյան Արտաշես

Արև. մամուլ (Իզմիր) 1899=9, 1900=12, 1902=

12, 15, 16, 18, 1903=23, 25, 30, 31, 38, 42,

1904=2, 8, 10, 16, 17, 1905=20, 27, 29, 41,

1906=1. Բյուրակն (Կ. Պ.) 1898=10, 11, 1899=

17, 18, 20, 28. Հայր. (Կ. Պ.) 1892=271, 277,

316, 339, 1893=621, 635, 1894=696, 821. Մա-

սիս (Կ. Պ.) 1892=3976, 3992, 3993. Վաղվան

ձայն (Մանչեստր) 1898=1.

Աղբ. Անահիտ (Փարիզ), 1939, № 4-5, էջ 5:

ևիրատ, Ռ.-Սանդուկյան Ռեբեկա

Ահգ, Կոչնակ, Հայր. (ԱՄՆ).

Աղբ. Ճիզմեճյան, էջ 596:

ևիլիկեցի-Դանիելյան Ներսես վարդ.

(պոլսահայ մամուլում)

Աղբ. Արարատ գրական (Բելյուս), 1959, № 8-10:

էջ 401:

ևիկո-Թորոսյան Գրիգոր

Վերջին լուր (Կ. Պ.) 1915=198.

Աղբ. Ժամանակ, էջ 89:

և

և.-Զոհրապ Գրիգոր

Լրագիր (Կ. Պ.) 1878=821.

Աղբ. Ապոլոնյան, Ա. Ա., էջ 38:

և. Գ.-Գազանճյան Հովհաննես

Բյուլ. (Կ. Պ.) 1897=241:

և. Կ. Ս. Ս.-Տեր-Սահակյան Կարապետ վարդ.

Բաղմ. (Վեն.) 1902=11, 12, 1904=12, 1907=

10, 11:

և. Հ.-Թվատիկեցի

Բյուլ. (Կ. Պ.) 1897=199, 1911=4603:

և. Հ. Թ.-Թերյան Հակոբ

Լույս (Կ. Պ.) 1901=5:

և. Շ.-Շահապալյան Հակոբ

Արշալ. (Թիֆ.) 1905=68, 69. Գործ (Թիֆ.)

1908=5. Զանգակ (Թիֆ.) 1908=19, 23. Ժայռ

(Թիֆ.) 1907=4, 6, 10, 19. Խարիսխ (Թիֆ.)

1907=4. Կովկ. առավոտ (Թիֆ.) 1907=18.

Վտակ (Թիֆ.) 1908=2. Փայլակ (Թիֆ.) 1907=9,

25.

Աղբ. ՀԳԿԱ, ֆ. 227, դ. 696, թ. 6:

և. Շ.-Շահիկյան Հարություն

Հայր. (Կ. Պ.) 1893=376, 1894=727:

ևար., Արմ.-Հարությունյան Արտաշես

Բյուլ. (Կ. Պ.) 1903=2224, 2235-2239:

Հակեր-Թերգյան Հակոբ

Բյուզ. (Կ. Պ.) 1908=3561, 1912=1929. Ժամանակ (Կ. Պ.) 1909. 1910. Մաղիկ (Կ. Պ.) 1907=48-49.

Աղբ. Թեոդիկ, 1911, էջ 239:

Հակ-Թեր-Թերգյան Հակոբ

Բյուզ. (Կ. Պ.) 1910=4026. Ժամանակ (Կ. Պ.) 1909=179:

Հակոբյան, Ժիրայր-Նալպանդյան Սարգիս

Երիտ. Հայ. (Նյու-Յորք) 1910-ական թվ.

Աղբ. Խարբերդ, էջ 398:

Հայ աղուրական-Ջաղարյան Ռուբեն

Առյուծի ժանիքին, Ֆիլիպի.

Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի, էջ 14:

Հայկ-Լեւոն-Բյուրատ Սմբատ

Աղբ. Թեոդիկ, 1912, էջ 373:

Հարությունյան, Ջեֆ-Սիամանթո

Հայր. (Բոստոն) 190.

Աղբ. ԳԱԹ, Ն. Ս. Մանկունու արխ.:

Հիլենասեր-Տեր-Սահակյան Կարապետ վարդ.

Աղբ. Հայր. (Բոստոն) 1923, № 1, էջ 37:

Հիբա-Թերգյան Հակոբ

Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի:

Հի-Թա-Թերգյան Հակոբ

Բյուզ. (Կ. Պ.) 1909=3966:

Հմայակ-Թերգյան Հակոբ

Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի:

Հրանդ-Կյուրեղյան Մելիք

Արևելք (Կ. Պ.) 1889. Բյուզ. (Կ. Պ.) 1908=3597, 1910=4028, 1913=5001. Ժամանակ (Կ. Պ.) 1910-ական թվ. Մաղիկ (Կ. Պ.) 1895=4-6. Մասիս (Կ. Պ.) 1888. Շանթ (Կ. Պ.) 1911=7, 8, 10, 1912=14, 15.

Աղբ. Ժամանակ, էջ 136:

Հրաչ-Ջաղարյան Ռուբեն

Անահիտ (Փարիզ) 1898=2, 1899=5-6.

Աղբ. ԳԱԹ, Ա. Ջուղանյանի արխ.:

Հրաչ-Թիրաֆյան Հայկ

Ազատամ. (Կ. Պ.) 1910-ական թվ.

Աղբ. Հորիզ. (Թիֆ.) 1916, № 1:

Հրաչյա-Ջաղարյան Ռուբեն

Աղբ. Հուշարձան ապրիլ տասներմեկի, էջ 14:

Հրույան-Վարժապետյան Սևոպիե

Արևելք (Կ. Պ.) 1908=6913. Բյուրակն (Կ. Պ.) 1904=21. Մանգ. էֆթյար (Կ. Պ.) 1901=151, 156, 166, 181, 192, 204, 1902=235, 303.

Աղբ. Ակոս (Բելյուս) 1957, № 10, էջ 28:

Ճ**Ճամբարդ-Շահապետյան Հակոբ**

Աղբ. Ճամբարդ, Գեղեցիկը, Թիֆլիս, 1905:

Մ**Մ.—Մալումյան Խաչատուր**

Մշակ (Թիֆ.) 1886=14, 16, 17, 24, 34, 1892=121, 175, 231:

Մ. Բ.—Թուրյան Մկրտիչ

Բյուզ. (Կ. Պ.) 1902=1819. Բյուրակն (Կ. Պ.) 1899=17, 49, 1900=13-14:

Մ. Կ.—Կյուրեղյան Մելիք

Արևելք (Կ. Պ.) 1889. Երկրագ. (Կ. Պ.) 1886=11,

12, 1887=6.

Աղբ. Նոր-Դար (Թիֆ.) 1889, № 165:

Մ. Ս. Կ.—Կյուրեղյան Մելիք

Բյուզ. (Կ. Պ.) 1901=1546:

Մալան—Մալումյան Խաչատուր

Մշակ (Թիֆ.) 1888=132, 135, 144, 1889=1:

Աղբ. Մշակի թառանամակ, էջ 125:

Մալխարացի—Հարությունյան Արտաշես

Բյուզ. (Կ. Պ.) 1896=49:

Մալխարացի Կարո—Հարությունյան Արտաշես

Աղբ. Թեոդիկ, 1909, էջ 263:

Մամիկոնյան, Արմայիս—Տեր-Սահակյան Կարապետ վարդ.

Ամսօրյա տեղեկատու (Կ. Պ.) 1909=7, 8, 1910=9, 10. Բազմ. (Վեն.) 1907=12, 1908=1. Համիտի տապալումը, Կ. Պոլիս, 1910 թ.

Աղբ. ԳԱԹ, Հ. Արեւյանի արխ.:

Մանիակ—Հարությունյան Արտաշես

Բուրաստան ժանկանց (Կ. Պ.).

Աղբ. Անահիտ (Փարիզ) 1939, № 4-5, էջ 4:

Մաշրոց վարդապետ—Փափազյան Ներսես

Հայր. (Բոստոն) 1903:

Աղբ. Լուսմ (Թիֆ.) 1907, № 3-4, էջ 23:

Մաշրոց—Փափազյան Ներսես

Գործ (Թիֆ.) 1908=8. Ջանգակ (Թիֆ.) 1908=1, 3, 4:

Մառի—Պեյլերյան Մարի

Արշալ. (Կահ.) 1899. Արտեմիս (Կահ.) 1902=1-8. Փյունիկ (Ալ-դրիա) 1901=6, 20, 26, 1903=36:

Մեխակ—Աբրայան Մխիթար

Մանգ. էֆթյար (Կ. Պ.).

Աղբ. Հայաստան (Թիֆ.) 1917, № 49:

Մենեկան—Ջյուլյուրյան Տիգրան

Ոստան (Կ. Պ.) 1911=2, 3, 1912=5, 6.

Աղբ. Տ. Ջյուլյուրյան, Վանքը, Փարիզ, 1933, էջ 11:

Մեղրունի—Ղաթիկյան Ներսես վարդ.

Աղբ. Վերածն. (Բոստոն) 1920, № 5-6, էջ 157:

Մենասեր—Տեր-Սահակյան Կարապետ վարդ.

Բազմ. (Վեն.) 1907=7-9, 1909=5, 12, 1910=1, 8:

Աղբ. Բազմ. (Վեն.) 1908, էջ 460:

Մեհուլ—Գաղանդյան Հովհաննես

Երիտ. (Եվրոպիա) 1910=19:

Աղբ. Ապոլոնյան, Ա., էջ 1011:

Մեֆիսթո—Դեռակյան Օնեիկ

Հորիզ. (Թիֆ.) 1910=3, 5, 10, 14, 22, 24-30, 32, 35, 36, 38, 54, 57, 58, 61, 67, 68, 1911=3, 5, 67, 68, 77, 78, 82-84, 157, 161, 164, 169, 180, 181, 202, 258, 265-267, 270, 272, 278, 290, 1912=2, 15, 170:

Աղբ. ԳԱԹ, Մ. Բերբերյանի արխ.:

Մոռա—Երեցյան Առոտ

Արև. մամուլ (Իզմիր) 1894=12, 14, 19, 22-24, 1895=23. Մուրճ (Թիֆ.) 1896=7-8, 11-12, 1898=1, 6:

Աղբ. ԳԱԹ, Մուրճի արխ.:

Մորակ—Բյուրատ Սմբատ

Աղբ. Թեոդիկ, 1912, էջ 373:

Մուշեղ—Խաչիկյան Միհրան

Աղբ. Թեոդիկ, 1911, էջ 264:

(Շարունակելի)

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. ԱՐԱՄ Մ. ՖՐԵՆԿՅԱՆ
(1898—1964)

Արամ Ֆրենկյանն ալ կորսնցուցինք, մեկը ևս մեր մտքի մարդոց արժեքավոր այն խումբին, որ իր աչքերը բացավ ռուսներին և իր բովանդակ կյանքը ի սպաս դրավ զինք հուլիսյան հոգին:

Ան ծնած էր 1898-ին Կոնստանդուպոլի մեջ, իսկ իր ծնողները կեսարացի էին: Չորվեցավ իրեն հայեցի լուրջ կրթություն մը ստանալ այն օրվան պայմաններուն տակ, ու հետագային ալ օտար միջավայրի մեջ էր, որ հասակ նետեց—ճակատագիր, որ օտար հողերու վրա նետված հայ սերմերեն շատերունն եղավ:

Արամ Ֆրենկյան իր նախնական ուսումը ստացավ Կոնստանդուպոլի գերմանական դպրոցը, ու զայն շարունակեց ապա Բուքրեշ, Լիշեու Լազարի մեջ: Անկե անցավ Չերնոուց, գրականության և փիլիսոփայության ֆակուլտետին, զոր ավարտեց 1926-ին:

Իր բարձրագույն կրթությունը ան հետո շարունակեց Փարիզ, Սորբոնի մեջ, 1926—1929 տարիներուն, հետևելով Ecole des hautes études-ի և Ecole normale supérieure-ի դասընթացներուն, ուր իբր պրոֆեսոր ունեցած էր օրվան մեծագույն հեղինակությունները, որպիսիներն էին Լեոն Ռոբին, Էմիլ Բրեհիե, Էմիլ Բուրգե, Մասոն Ուրսել, Ալֆրեդ Ֆուլշե և Լուի Ֆինո:

Հետևած էր փիլիսոփայության, և մասնավորաբար հելլենականին: Ռումանիա վերադարձն հոգ էր, որ, 1931-ին, ստացավ փիլիսոփայության դոկտորի տիտղոս, և նվիրվեցավ մանկավարժական ու գիտական գործունեության. իսկ 1937-ին արդեն առնթերակա (ասիստենտ) էր Չերնոուցի համալսարանին գրականության և փիլիսոփայության ֆակուլտետին մեջ՝ հույն լեզվի և գրականու-



թյան ամբիոնին առնթեր: Նույն պաշտոնով Բուքրեշ փոխադրված 1940-ին, հինգ տարի հետո, 1945-ին, վերջնականապես կոնֆերանսիե կանվանվեր հույն լեզվի և գրականության, ինչպես և հելլենական փիլիսոփայության և գիտությանը՝ Բուքրեշի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետին մեջ, ավելի հետո ստանալու համար պրոֆեսորի կոչում:

Պրոֆ. Արամ Յրենկյան տեղյակ էր եվրոպական բազմաթիվ լեզուներու Ան հավասարապես կգրեր ուսմաներեն, ֆրանսերեն և գերմաներեն. ծանոթ էր նաև անգլիերենին և իտալերենին, ու կխոսեր հայերեն ու թուրքերեն ալ: Բայց հունարենն էր իր նախասիրածը բոլոր այդ լեզուներեն, ինչպես որ հելլենական ուսումները պիտի կազմեին իր գիտական մտահոգությանը դաշտը: Իսկ հելլենական ուսումներեն հույն փիլիսոփայությանն էր, որ զայն պիտի առնեին առավելապես, թեև հետագային պիտի շահագործվեր նաև մաթեմատիկայով՝ իր պրպտումները մխրձելով այդ մարզին ալ ներս:

Հելլենական ուսմանց նվիրված իր առաջին երկը, որ 1932-ին տպված է, փորձ մըն է Պլատոնի և Արիստոտելի էստետիկան ուսումնասիրելու: Այդ երկով է, որ ան մուտք գործեց հելլենաբաններու շարքը, ուր տակավ հեղինակություն մը պիտի դառնար: Իր հետագա պրպտումները ան նվիրեց նախաստղատյան փիլիսոփայության ուսումնասիրությանը, և այդ մասին լույս ընծայեց երկու աշխատություններ, 1933-ին² և 1937-ին³: Բաղդատական փիլիսոփայության փորձեր էին այս աշխատությունները, որոնք պիտի գային իր անունը այլևս նվիրագործելու այս բնագավառին մեջ:

Արամ Յրենկյան Հոմերոսի հետ կապված նյութեր ձեռք առավ հետո, 1934-ին⁴ և 1935-ին⁵ տպագրության հանձնելով երկու ուրիշ գործեր, որոնք արձագանք պիտի գտնեին դասական գրականության նվիրված մամուլին մեջ և պիտի արժանանային ֆրանսացի և իտալացի երկու գիտնականներու՝ Ժոզեֆ Սուիլհենի և Մ. Ֆ. Ցիակկայի բացառիկ գնահատանքին, անգամ մը ևս շեշտելով անոր հեղինակությունը հելլենական ուսմանց մեջ:

Այդ աշխատանքներուն պիտի հաջորդեին նաև ուրիշներ՝ հելլեն միտքը պրպտելու համար ուրիշ մարզերու վրա ևս: Այդ կարգի աշխատանքներ ան նվիրեց հունական իրապաշ-

տություն⁶, Պարմենիդի⁷, Եվկլիդեսի⁸, Պլատոնի⁹, Պարմենիդի և Պլոտինի¹⁰, հին հունական աստվածներու նախանձին¹¹, «Որդի Մարդու» բացատրություն¹², ինչպես և Սոկրատի¹³, աշխատանքներ, որոնց մեջ համությունն ու գիտական խղճմտությունը կընթանային համընթաց:

Արդի փիլիսոփայության հետ կապված հարցեր ևս շահագործեցին զայն միևնույն ժամանակ, որպիսիներն էին Ֆրոյդի¹⁴ և Բերգսոնի¹⁵ տեսությունները և հարաբերական տիեզերածնությունը¹⁶:

Հելլենական մտքով որևէ զբաղող չէր կրնար իր պրպտումները շտարածել նաև հունական աշխարհին դուրս, զննելու առթիվ այդ մտքին առնչությունը նաև ուրիշ ժողովուրդներու մտածման հետ: Յրենկյան իր ուսումնասիրությանը դաշտին մեջ մտցուց առաջին հերթին Եգիպտոսը իր փիլիսոփայական ըմբռնումներով, մտահոգություն, որ զինք պիտի մղեր ծանոթանալու եգիպտական լեզվին ալ: Այս առթիվ էր, որ ան ուզեց սկիզբը դնել ուսումնասիրությանը շարքի մը՝ պրպտելու համար Արևելքի ազդեցությունը եվրոպական մտքին մեջ ծագում առնող ենթակայական իդեալիզմի վրա, և այս շարքին իր առաջին հրատարակությունը եղավ իր աշխատությունը Մեմփիսի աստվածաբանական վարդապետության մասին¹⁷:

Պրոֆ. Յրենկյան կանգ չառավ Եգիպտոսի մեջ: Հելլենական միտքը զայն կտաներ ավելի հեռուներ: Ան սկսավ պարապիլ հելլեն, իրանական և հնդկի մտածմանց փոխադարձ

⁶ „Le réalisme grec“. Cernăuți, 1939.

⁷ „Parménide precursor al teologiei negative“. Cernăuți, 1939.

⁸ „Le postulat chez Euclide et chez les modernes“. Paris, 1940.

⁹ „La méthode hippocratique dans le „Phèdre“ de Platon“. Bucarest, 1941.

¹⁰ „Les origines de la théologie négative de Parménide à Plotin“. Bucarest, 1943.

¹¹ „Gelozia zellor la Vechii Greci“. București, 1945.

¹² „Ο Υιος Τοῦ ἈΝΘΡΩΠΟΥ“. Bucarest, 1947.

¹³ „Dece a fost condamnat Socrate?“. București, 1942.

¹⁴ „Antichitatea și Freudismul“. Cernăuți, 1938.

¹⁵ „Libertatea și determinismul la Bergson față de știința modernă“. Cernăuți, 1938.

¹⁶ „Complementaritatea psiho-fizică. Incercare de cosmogonie relativistă“. București, 1942.

¹⁷ „L'Orient et les origines de l'idéalisme subjectif dans la pensée européenne“. Tome I. „La doctrine théologique de Memphis. (L'inscription du roi Shabaka)“. Paris, 1946.

¹ „Mimesis și muzică. O contribuțiune la estetica lui Platon și Aristotel“. Cernăuți, 1932.

² „Etudes de philosophie présocratique. I. Héradite d'Ephèse“. Cernăuți, 1933.

³ „Etudes de philosophie présocratique. II. La philosophie comparée—Empédocle d'Aggrigente—Parménide d'Elée“. Paris, 1937.

⁴ „Le monde homérique. Essai de protophilosofie grecque“. Paris, 1934.

⁵ „Le problème homérique. Considérations sur l'origine des épopées homériques“. Paris, 1935.

կապերով¹⁸։ Այդ առթիվ էր, որ ան զննեց հունական սկեպտիկությունն ու իր կապը հնդկական փիլիսոփայության հետ¹⁹, «քունի տեսությունը» ըստ Ուպանիշադի և Յոգայի²⁰, և Հովհաննու Հայտնություն²¹։ Հունական և մահը և Պոնոլոմիստիկան²²։ Հունական և հնդկական փիլիսոփայության կապերուն մասին Ֆրենկյան ելույթ ունեցավ նաև դասախոսությանց և զեկուցումներու մեջ։

Հնդկաստանեն դառնալով Մերձավոր Արևելք, ուր հելլենական միտքը ավելի խոր թափանցած էր, Ֆրենկյան զննեց Գիլգամեշի դյուցազններգության կապը հույն ստեղծագործությանց հետ, այդ դյուցազններգությանը զբաղեցրել էրկիցս, 1960-ին²³ և 1962-ին²⁴։

Արևելքի մեջ հելլեն ազդեցություններ որոնած ատեն՝ Ֆրենկյան չլքեց սակայն մայր հողը, այսինքն Ելլադան իր հարազատ մտածողներով։ Ան 1951-ին թարգմանաբար հրատարակեց էր հատընտիր էջեր Արիստոտելենի Ավելի հետո ան պրպտեց Եվրիպիդեսի ըմբռնումը աստվածներու մասին²⁵ և մարդըմբռնումը աստվածներու մասին²⁶։ Սոփոկլեսի կային տառապանքի ըմբռնումը Սոփոկլեսի ողբերգությանց մեջ²⁷, զբաղեցրել միևնույն ատեն գաղափարանիշերով և որոշիչներով²⁸, և լույս ընծայելով հույն գրականության պատմության դասական շրջանի մասին իր դասընթացը²⁹։

Երկար տարիներու իր ուսումնասիրությանց առարկա ըրած էր նույնպես Գ դարու (մ. թ.) հույն փիլիսոփա Դիոգենես Լաերտիոսի տասնհատորյա երկը մեծ փիլիսոփաներու կյանքին և վարդապետությանց մասին, և բացի նույն փիլիսոփային վրա

հակիրճ աշխատութենն մը²⁸, վերջերս գրեց նաև ներածական ուսումնասիրություն մը անոր այդ պատկառելի աշխատության ուսմաներեն թարգմանության սկիզբը²⁹։

Չենք կրնար չհիշել նույնպես իր ուսումնասիրությունները մաթեմատիկայի հետ կապված հարցերու մասին՝ անոնց սերտ առնչությանը պատճառով բուն փիլիսոփայության հետ։ Այդ մարդին վրա ևս Ֆրենկյան երեք հրատարակություններ ունի։

Մաթեմատիկայի նվիրված իր երկերուն մեջ կարևորագույնն է իր ուսումնասիրությունը սումերո-ակկադյան, եգիպտական և հունական մաթեմատիկոսներու մասին, ուսումնասիրություն, զոր ֆրանսերեն լույս ընծայեց երեք մասերով³⁰, և որ իր ուսմաներեն հրատարակությունն ալ ունեցավ։

Ֆրենկյան պարապեցավ նաև հունական տեքստերու թարգմանությամբ։ Իրն են, օրինակ, պրոֆ. Յոն Բանուի հույն մատերիալիստներու նվիրված երկին³¹ և պրոֆ. Գուլանի՝ Արիստոտելի մասին ուսումնասիրության³² մեջ ներմուծված տեքստերու թարգմանությունները։ Ավելորդ է ըսել, թե հունական տեքստերն թարգմանություններ ունի նաև իր զանազան ուսումնասիրությանց մեջ։

Պրոֆ. Ֆրենկյան փնտռված աշխատակից մը եղավ հելլենաբանությանը, փիլիսոփայությանը և Արևելքի զբաղող բազմաթիվ հանդեսներու համար։ Բացի Ռումանիո մեջ հանդեսներու համար, որպիսին լույս տեսնող պարբերականներն են, որպիսին էին Չերնուց տպվող կարգ մը հանդեսներ, ինչպես «Glasul Bucovinei», «Fat Frumosa», «Buletinul facultății de Științe» և «Codrul Cosminului», որոնց կաշխատակցեր Չերնուց գտնված ատեն, և Բուլբուշ հաստատվելի հետո իր աշխատակցած մայրաքաղաքի մասնագիտական պարբերականները, ինչպես «Revue des études indoeuropéennes», «Revista clasică», «Studia et acta orientalia», «Studii de literatura universală», «Limba română», անոր աշխատակցությունը փնտռեցին նաև իտալական «Maia», «Helikon», ինչպես նաև «Acta logica հանդեսները։

¹⁸ „Purusa-Gayômar, 'A Թրոթոց. Quelques problèmes concernant la communauté indo-iranienne et la Grèce antique". Bucaresti, 1943.

¹⁹ „Scepticismul grec și filosofia indiană". Bucaresti, 1957.

²⁰ „La théorie du sommeil, d'après les Upanishads et le Yoda". Bucarest, 1957.

²¹ „Punarmrtyu et la „seconde mort" dans l'Apocalypse de Saint Jean". Bucarest, 1943.

²² „L'épopée de Gilgamesh et les poèmes homériques". Bucarest, 1950.

²³ „Observations sur l'origine et la composition de l'épopée de Gilgamesh". Bucarest, 1962.

²⁴ „Conceptia despre zei a lui Euripide". Bucaresti, 1956.

²⁵ „Înțelesul suferinței umane în tragediile lui Sofocle". Bucaresti, 1961.

²⁶ „Idiogramele și determinantele în linia B... Bucaresti, 1960.

²⁷ „Curs de istoria literaturii grecești. Epoca clasică (sec. V—IV, în. e. n.)". Bucaresti, 1962.

²⁸ „Analecta Laerteana". Bucaresti, 1961.

²⁹ „Diogenes Laertios: Despre viețile și doctrinele filosofilor. Trad. C. I. Balmaș. Studiu introductiv și comentarii de prof. Aram M. Frenkian". Bucaresti, 1963.

³⁰ „Recherches de mathématiques suméro-akkadiennes, égyptiennes et grecques". Bucarest, I-II, 1957, III, 1958.

³¹ „Primii materialisti greci". Bucaresti, 1950.

³² „Aristotel", Bucaresti, 1951.

Արամ Ֆրենկյան իր աշխատության սեղանը թողուց՝ երբ դեռ այնքան թարմ էր մտքով և ստեղծագործելու իր տրամադրությամբ: Իր դարակներուն մեջ հերթի կապասներն արդեն ավարտած այնքան գործեր, և շատ ուրիշներ, որոնք մշակվելու վրա էին դնու:

Իր ավարտած երկերեն ոմանք ծավալուն մենագրություններ են, ինչպես «Heracleitos din Efesos», «Sextus Empiricus», «Plotin et l'Orient», «L'enseignement oral dans Lécole de Plotin», «Les doxographies et les fragments des Uilésiens», «Istoria logice», «Filosofia greacă în sec. VI în. e. n.».



Արամ Ֆրենկյան մեկն եղավ Արևելքով զբաղող այն խումբ մը մտավորականներին, որոնք 1957-ին նախաձեռնեցին արևելյան ճյուղի մը կազմությունը պատմական և բանասիրական ուսումնասիրությանը ընկերության կողքին: Մաս կկազմեր, այդ թվականին ի վեր, նույն ճյուղին վարիչ կոմիտեին, ինչպես և «Studia et acta»-ի խմբագրական մարմին, և իր դասախոսություններով ու հոդվածներով իր մասնակցությունը կբերեր ըլլա՝ մեր հրապարակային նիստերուն, ըլլա՝ մեր տարեգիրքին:

Բայց ինչ որ կուզեի այստեղ նշել, այն հեղինակություն էր, զոր իր անունը կբերեր ումեն արևելագետներու սույն խմբակցության: Ես մոտեն գիտեմ, որ խմբակցության կազմության առթիվ ումեն գիտական բարձրագույն շրջանակներու ցույց տված բարյացակամության մեջ մեծ դեր կատարեց իր ներկայությունը հիմնադիրներու շարքին, ներկայություն, որ կոչված էր վարկ ապահովելու մեզ ոչ միայն երկրին մեջ, այլ նաև հաշտարտասահմանի, ուր իր ուսումնասիրություններով ծանոթ անուն մըն էր ինքը վաղուց:

Մեր խմբակցությունը ենթաճյուղերու վերածված ատեն, իրեն բաժին ինկավ այն անձնակազմը, որ կզբաղեր եգիպտական և հնդկական ուսումներով: Քանիցս զգացուցած է ինձ, թե դժբախտ կեսպե ինքզինքը մաս չկարենալ առնելուն համար հայկական ուսմանց զույգ ենթաճյուղերուն, զորս կգլխավորեինք Իլընցեանուն և ես, և ըսած միևնույն ատեն, թե պիտի աշխատի ինք ևս միանալ մեզ օր մը:

Սրտին մեծ ցավ էր, որ թափանցել չէր կրցած հայ ժողովուրդի հոգեկան գանձին: Անկարող հայ հեղինակները ճանշնալու իրենց բնագրին մեջ, անոնց մասին առավելապես օտար աղբյուրներն միայն լուր ունեն: Կապը, զոր Երևանի գիտական շրջա-

նակները իրեն հետ ստեղծեցին վերջին տարիներուն, խթան մը եղավ, որպեսզի ծանոթանալ փորձեմ դասական հայերենին՝ հայ հին մատենագրության մեջ որոնելու համար փիլիսոփայական մտածումը, և մասնավորապես պրպտելու համար հունական իմաստասիրության թողած հետքերը հայ փիլիսոփայական մտքին վրա: Ան տարակույս շուններ, որ հելլենական գաղափարները մեծ չափով ազդած են հայ մտքի որոնումներուն վրա, և հիացմունքով կանգնադառնար հաճախ այն մեծ ծավալին, զոր գտած էին հույն փիլիսոփաներն կատարված թարգմանությունները հայ մատենագրության մեջ: Զայն կզարմացներ մանավանդ սովոր թիվը հայերեն ձեռագիրներուն, որոնք հասած էին մեզ Արիստոտել և ուրիշ հույն փիլիսոփաներն կատարված թարգմանություններին: Իրեն համար փոքր անակնկալ մը չէր հայ ձեռագիրներուն մեջ հայտնությունը թարգմանության մը, կատարված Զենոն հույն փիլիսոփային ցարդ կորսված կարծվող մեկ երկին, ձեռագիր, զոր կտոն խաչիկյան երևան հանած էր 1949-ին Երևանի Մատենադարանին մեջ և տպագրած: 1956-ին Ս. Արևշատյան հրատարակած է անոր ուսերին թարգմանությունը: Ֆրենկյան ուշի-ուշով պրպտեց հրատարակության տրված այդ տեքստը և սակայն համարձակություն չտվավ իրեն հայտնաբերված այդ երկը վճռական կերպով վերագրելու համար Զենոնին՝ այն տարբերությանց պատճառով, զորս կգտներ Մատենադարանի մեջ պահվող թարգմանության և առհասարակ Զենոնը հատկանշող մտքերուն միջև:

Փոխարեն, ան գրախոսական մը նվիրեց գերման գիտնականի մը՝ Էռնստ Գունտեր Շմիտի կատարած ուսումնասիրության Զենոնի վերագրված այդ երկին մասին³³, գրախոսական, որ լույս պիտի տեսնե «Studia et acta orientalia»-ի հառաջիկա հատորին մեջ, և ուր Ֆրենկյան, քննադատելով հանդերձ գերման հեղինակին ինչ-ինչ տեսակետները խնդրո առարկա ձեռագրին մասին, իր իսկ տեսությունները կպարզե այդ առթիվ: Ֆրենկյան ևս, Շմիտի նման, հեռու է համաձայն ըլլալ խաչիկյանի և Արևշատյանի հետ՝ Մատենադարանի մեջ հայտնաբերված ձեռագիրը ստույգիկյան դպրոցի հիմնադիր Զենոնին վերագրելու համար, կասկած, զոր հայտնած էին նաև իրենցմե առաջ Մաքս Պոհլեն (1955) և Հ. Դորրի (1957), հակառակ որ հայերեն ձեռագրին մեջ փիլիսոփայական նույն դպրոցն տարբերու կարելի էր հանդիպիլ պատահական կերպով, բան մը, որ շատ բնական էր համախառնության (syncretisme) այն

³³ „Studia et acta orientalia“, V (1965).

դարուն մեջ, երբ շարադրված պետք է ըլլա հայերեն երկը: Ֆրենկյան կկարծե նույնիսկ, որ այս վերջինը ներշնչված է նոր-պղատունական մեկնաբաններ, որպիսիներն էին Պորփյուր, Ամոնիուս, Սիմպլիչիուս և մասնավորաբար Ողիմպիոտը:

Շմիտ վերլուծած ատեն «Հայկական Զենոն»-ին առաջին գլուխը, կգտնե, որ աստղագիտական նյութերը և աստղագիտության հետ կապված բժշկական նկատողությունները, զորս կպարունակե ան, փոխառություն են, կենդանակերպերու նշաններու հետ կապված երկիրներու ցանկը՝ Պողոս Աղեքատանդացիին, Մանիլիուսին և Դորոթեեն, և կենդանակերպերու նշաններու կապված մարդկային մարմիններու մասերը՝ Մանիլիուսին, Սեքստուս էմպիրիկուսին և Հեփալոտիոնին: Երկիրներու ցանկին մեջ է, որ հայերենը շատ մոտ է Պողոս Աղեքատանդացիին, զոր Շմիտ կնկատե անոր աղբյուրը, ինչ որ Ֆրենկյան ինք ևս հավանական կգտնե³⁴:

Հայերեն ձեռագրին երրորդ գլուխը վերլուծած ատեն Շմիտ դեմ-դիմաց կգնե անոր զանազան մասերը հույն փիլիսոփա Դավիթին հետ, որ Զ դարուն թարգմանված էր արդեն հայերենի: Ֆրենկյան սակայն կավելցնե, թե տարբեր են երկու հեղինակներու ոգին և անոնց շարադրելու կերպը: Եթե կարդանք Ողիմպիոտը, Ելիասը և Դավիթը, և նույնիսկ ավելի հին մեկնաբանները (ինչպես Պորփյուր, Ամոնիուս, Սիմպլիչիուս, Փիլոպոն), — կըսե Ֆրենկյան, — կտեսնենք, որ Արիստոտելի նոր-պղատունական մեկնաբաններու միևնույն ավանդությունն է, որ կշարունակվի մեկեն մյուսին մոտ, մինչ հայերենին մեջ երբեք այդպես չէ: Քննված նյութերու քառասյին շարակարգությունը հայերենի հեղինակին մոտավոր ընդունակությունց մասին նպաստավոր գաղափար չի տար: Նույնիսկ սխառմ ունեցող միտք մը չէ: Քննարկած ատեն փիլիսոփայության սահմանումները, որոնք Ելիասի և Դավիթի ավանդություններն կուզան, կներմուծե գնոստիկներեն փոխառված գաղափարներ:

Ֆրենկյան ինք ևս, Շմիտին հետ մեկտեղ, ամենին շահեկանը կգտնե հայերեն ձեռագրին հինգերորդ գլուխը, թեև այդ շահեկանությունը իր ամբողջ թափով երևան չի գար՝ շատ խտացած ձևով խմբագրված ըլլալով ձեռագիրը: Ֆրենկյան ձեռագրին ինքնա-

տիպությունը կգտնե նաև այն բանին մեջ, որ բրիստոնյա մըն է զայն շարադրողը, ունենալով աստվածաբանական ինչ-ինչ գաղափարներ, որոնք այլևս չեն համապատասխաներ դասական շրջանի հույներու գաղափարներուն: Հավիտենական ծանոթությունը, օրինակ, հայ ձեռագիրը կվերագրե կատարելության արժեքին, մինչ հույն փիլիսոփաները անկատարելության կվերագրեն զայն: Ֆրենկյան առեղծված կնկատե նույնպես, որ տիպոս մը մեջ շարը հիշատակված է բարեկենս առաջ, և հարց կուտա, թե մազդեական երկությունն աղեքսությունը պետք չէ՞ փնտռել արդյոք հոգ:

Ինչ կվերաբերի դարուն, երբ կրնա խմբագրված ըլլալ «Հայկական Զենոն»-ը, Ֆրենկյան կմոտենա Շմիտի այն տեսակետին, թե անոր շարադրությունը տեղի ունեցած է յոթներորդ դարուն, այսինքն արաբական խուժումն առաջ դնելի Հայաստան, քանի որ ձեռագրին մեջ կենդանակերպերու նշաններուն կցված երկիրներուն ցանկը արաբներուն հիշատակությունն ալ կրնե, մինչ հույն և լատին զուգընթաց ցանկերը արաբներու անունը չեն պարունակեր: Ֆրենկյան կմիտի նույնիսկ հավանական նկատելու Զ դարը, որովհետև Դավիթ, որ աղբյուր ծառայած է հայերենին, կպատկանե այդ դարուն:

Մատենադարանին մեջ հայտնաբերված հայերեն ձեռագիրը Զենոնին չվերագրելով հանդերձ, Ֆրենկյան կընդունի, որ Լ. Խաչիկյան և Ս. Արևշատյան շնորհակալ գործ մը կատարած են՝ լույս ընծայելով և ուսեբների թարգմանելով «Հայկական այս Զենոն»-ը, որ բազմաթիվ և բարդ հարցեր մեջտեղ կդնե: Ու շմոռնանք հիշել, որ «Հայկական այս Զենոն»-ն էր, որ Ֆրենկյանի առջև հետազոտությանց նոր դաշտ մը պիտի բանար, եթե չկտրվեր հանկարծ իր կյանքին թելը: Ան կուզեր ոչ միայն հույն մտքին հետքերը փնտռել հայկական հին մատենագրության մեջ, այլ քննել մանավանդ, թե ինչ ձևափոխություն կրած է այդ միտքը կլիմա փոխած ատեն:

Վերջին տարիներուն նոր կիրք մը տոգորեց զինքը. ուղեց մոտենալ իր ժողովուրդին: Հայ կյանքին հեռու էր ապրեր մինչև այն ատեն, և իրմով շահագրգռողներ ալ չէին եղեր, ավա՞ղ, մեզմե: Շատ ուշ էր միայն, որ զիրար գտանք, հայ մտահոգությանց հետ ուղղակի կապված հայ մտավորականներս, և տաղանդաւոր այս մարդը, որ օտար կյանքի մեջ կսպառեր իր հոգեկան ճիգերը և զոր խորթ էինք նկատեր մեզի: Անակնկալ փոխադարձ եղավ: Մենք անոր ներսը գտանք հարազատ մը, որուն սիրտը միշտ ջերմ մնացեր էր դեպի իր ժողովուրդը՝ առավելապես համակված անոր տառապանքներուն ու

³⁴ Ernst Günther Schmidt, „Die altarmenische „Zenon“—Schrift (Abhandlungen der Deutschen Akademie der Wissenschaften zu Berlin. Klasse für Sprache, Literatur und Kunst“. 1960, №2), Akademie-Verlag, Berlin, 1961, 50 p.

մարտիրոսագրության սարսուռով, իսկ ինք սկսավ ավելի մոտեն ծանոթանալ հայ ժողովուրդի հոգեկան արժեքներուն, և ինքզինք զգալ ավելի հպարտ և հետևաբար ավելի ևս երջանիկ:

Իր այդ շահագրգռությունը շարունակում էր մնալ հասցնել սակայն: Սեղանին վրա մնաց հայերեն Ավետարանը, ուրկե դասական հայերենը սկսեց էր սորվել:

Իր մահը, որ տեղի ունեցավ 1964 նոյեմբեր 10-ին, շարունակում էր մնալ հայ ժողովուրդի հոգեկան արժեքներուն, և ինքզինք զգալ ավելի հպարտ և հետևաբար ավելի ևս երջանիկ:

...Ամեն անգամ, երբ կհանդիպեինք, պարտականություն մը ունեի ես. պետք է քանի մը առած ըսեի իմ գիտցածներս. զանոնք կնոթեի հավաքածոյի մը համար, ուր խտացած պիտի ըլլար Արևելքի իմաստութիւնը: Վերջին անգամ միայն թերացա պարտականութեանս մեջ. իրարու հանդիպելու էինք հայոց եկեղեցւոյ մեջ, իր մահէն ճիշտ երկու օր առաջ, ողբացալ Բընըցեանուի հոգեհան-

գիստին: Այդ օրը իրարու ձեռք սեղմեցինք միայն և երբ ակնարկս հարց կուտար իրեն, թե ինչպէս է առողջութեամբ, ինքն ալ ակնարկով մը ինձ կպատասխանէր, թե կփորձեմ դիմանալ...


Որո՞ւն մտքէն կանցներ, թե երկու օր շանցած իր սիրտը պիտի դադրէր տրոփելէ հանրակազմով ճամբորդած պահուն, ճիշտ ու ճիշտ տարի մը հետո դժբախտ վախճանէն Բընըցեանուին, որուն նույնպէս սիրտը կեցեր էր ինքնաշարժով տուն վերադառնալու ատեն:

... Երկու օր հետո տարինք զայն թաղել հայոց գերեզմանատունը, Բընըցեանուն քանի մը գերեզման անդին:


Գերեզմանատունէն ետ դարձանք անհունապէս ընկճված, առանց նույնիսկ հաշտվիլ փորձելու մեր կրած հարվածին հետ: Քիչեր միայն կրցած են այնքան կսկիծ ձգել իրենց ետին, ու այնքան գուրգուրանք: Գիտուն ու բեղուն, ան սրտով ալ մեծ էր եղեր, սիրով լեցված ամենուն հանդէպ, բայց և սիրված ամենէն: Հեզ ու խոնարհ, բայց միշտ ակնածանք ազդեր էր շուրջը բոլորին և իր համեստութեան մեջ պատկառելի մնացեր էր միշտ ան: Ու հողը մտավ արցունքներով ողողված: Քաջութիւնը շունեցա իրեն ծով, ու փսփսալ ականջին վերջին առած մը, որ շրթունքներու վրա կդեգերէր այդ պահուն, երբ հողի քանի մը փշրանք կնետէի հեք բարեկամիս վրա.

— Բոլորը սուտ, աս մեկն է իրավ...!





Ա. Ն. ՍԱՅՐԱՍՏՅԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՅ
ԹՈՒՐԶԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ*

Խ Ա Ր Բ Ե Ր Դ Ի Վ Ի Լ Ա Յ Ե Թ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ
ԴՐԱՍՆՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասեն- յակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակու թյան համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սևագրու- թյան թվականը	Մաքրա- գրության թվականը
306	1982					—	—

Արդարադատության և դավաճանքների
միևիստրության

Խարբերդի վիլայեթի էկին (Ակն) կազայի
և նրան հարակից գյուղերում գտնվող և կայ-
սերական հրամանով հաստատված շորս
եկեղեցիների անունները, կայսերական հրա-

մանների թվականները, ինչպես նաև կայսե-
րական հրամանով չհաստատված 7 եկեղե-
ցիների վայրերը, անունները և կառուցման
թվականները ցուցնող երկու օրինակ ցուցա-
կը, սրա հետ ներկայացվում է և համաձայն
օրենքի անհրաժեշտ կարգադրությունը խըն-
դրվում է:

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1965 թվա-
կանի № Ա-ից և Բ-Գ-Դ-ից:

(Տե՛ս 1330 թվականի մարտի 13-ի № 2036 գրու-
թյունը):

ԽԱՐՔԵՐԴ, ԷԿԻՆ

Քղրի քիվը՝ 306:

Ֆերմանով՝ 4:

Առանց ֆերմանի՝ 7:

Կցված է 1330 թ. փետրվար 16-ին № 1982 թաքրիքին:
Կառուցման ք.

1. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի լրացուցիչ էկին նահիյեյում Ս. Աստվածածին եկեղեցին, 1288 թ.:
2. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի էկինի նահիյեյում Աղնիկ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1260 թ.:
3. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Ղերանի գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, 1281 թ. ռեբի-ուլ-էվլեի սկզբին:
4. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Հասնիդի գյուղի Ս. Նշան եկեղեցին, 1285 թ.:
5. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Կոշնա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1285 թ.:
6. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի էկինի նահիյեյում Վաղէշ գյուղի Ս. Նշան եկեղեցին, 1249 թ.:

7. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Ինչթերթի նահիյեյի Ինչթերթի գյուղի Ս. Նշան եկեղեցին, 1248 թ.:
8. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Ինչթերթի նահիյեյի Սարմիդա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1289 թ.:
9. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Խուրուջ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1281 թ. ռեբի-ուլ-ախրի կեսին:
10. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Մաշկերտ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1219 թ. շեվլալի կեսին, հնուց:
11. Խարբերդի վիլայեթի էկինի կազայի Ջաք, այլ անունով Ին գյուղի Ս. Նշան եկեղեցին, 1249 թ. ռեբի-ուլ-էվլեի կեսին:

Մանրություն (հայերեն լեզվով).

(Նշանակում է նույն թվ.) ի վերջոյ առաջնորդարանեն հասած 4 փետրվար 915 թուական և 459 համարով (թիվ արձ. 699) նամակով հղված է այս եկեղեցյաց վերաբերյալ 1246 թ. ջեմադի-ուլ-էվլեի կեսերուն թվականով ֆերմանին պատճենը, սակայն ցուցակներն արդեն իսկ հանձնված ըլլալով, հարկ չտեսնվեցավ նոր փոփոխություն ընել:

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ
ԳՐԱՍՆՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պատր	Սկզբուն-թյան թվականը	Մաքրագրության թվականը
929	2033					1331 թ. մարտի 13	1331 թ. մարտի 13

Արդարադատության և դավաճանների մինիստրության

(Տե՛ս 1330 թ. փետրվար 16-ի № 1982 զրույթունը):
Բուն էկինի կազայում և նրա շրջանում գտնվող, կայսերական հրամանով չհաս-

տատված 17 եկեղեցիների վայրերն ու անունները և կառուցման թվականները ցուցնող սույն լրացուցիչ ցուցակը մեկ օրինակով սրա հետ ներկայացվում է Ձեր Բարձրության և խնդրվում, համաձայն կարգի, հարկ եղած կարգադրությունը:

ԷԿԻՆ

Առանց ֆերմանի՝ 12:

Կցված է 1331 թ. մարտ 12-ի № 2036 թաքրիքին:

Կառուցման ք.

1. էկինում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1264 թ.:
2. էկինում, Ս. Գևորգ եկեղեցին, 1292 թ.:
3. էկինում, Ս. Սարգիս եկեղեցին, 1239 թ.:
4. էկինում, Ս. Ղալմուղի (?) եկեղեցին, հնուց:

5. էկինի կազայի էփուխեզ գյուղում Ս. Նշան եկեղեցին, 916 թ.:
6. էկինի կազայի էփուխեզ գյուղում Կամարակալ Ս. Աստվածածին եկեղեցին, 1169 թ.:
7. էկինի կազայի էփուխեզ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1258 թ.:
8. էկինի կազայի Ղարոշու գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1249 թ.:

9. Էկինի կազայի Իլիշ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1214 թ.:
10. Էկինի կազայի Իլիշ գյուղում Ս. Երեման վանքի հայոց եկեղեցին, հնուց:
11. Էկինի կազայի Նարոտ գյուղի Ս. Մինաս եկեղեցին, 1210 թ.:
12. Էկինի կազայի Նարոտ գյուղի Ս. Գրիգոր վանքի եկեղեցին, հնուց:
13. Էկինի կազայի Փինգան գյուղի Ս. Հրեշ-

- տակապետ եկեղեցին, 1209 թ.:
14. Էկինի կազայի Փինգան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1258 թ.:
15. Էկինի կազայի Փինգան գյուղի Ս. Երեմանուկ եկեղեցին, 1168 թ.:
16. Բուն Էկինում Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց:
17. Էկինի կազայի Մոշֆեղա գյուղի Ս. Հովհան Ոսկեբերան եկեղեցին, 1239 թ.:

Խ Ա Ր Բ Ե Ր Դ Ի Վ Ի Լ Ա Յ Ե Թ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԳՐԱՍՆՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ							
Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպտեմբերի 1330 թ. 16 փետրվարի	Մարտի 1330 թ. 16 փետրվարի
306	1983						

Արդարադատության և դավանանքների միեկխառության

Խարբերդի վիլայեթի Արաբկիր կազայի Բաղչի կոչված թաղում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին 1249 թ. ութի-ուլ-էվլելի կեսին կայսերական հրամանով հաստատված է: Հիշյալ կազային հարակից Ամփերդա

և Շփիբ գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված երկու եկեղեցիների վայրերն ու անունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է Ձեր Բարձրության և խնդրվում, համաձայն կարգի, անհրաժեշտ կարգադրությունը:

ԱՐԱՐԿԻՐ

Ֆերմանով՝ 1:

Առանց ֆերմանի՝ 2:

Ֆերմանի ք. Կառուցման ք.

1. Խարբերդի վիլայեթի Արաբկիրի կազայի Ամփերդա գյուղի Ս. Նշան եկեղեցին, 1281 թ.:

2. Խարբերդի վիլայեթի Արաբկիրի կազայի Շփիբ գյուղի Ս. Մայր Մարիամ եկեղեցին, 1273 թ.:

3. Խարբերդի վիլայեթի Արաբկիրի կազայի Բաղչի թաղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1249 թ. ութի-ուլ-էվլելի կեսին: Կցված է 16 փետրվարի 1330 թ. № 1983 թաղերին:

Դ Ի Ա Ր Բ Ե Ք Ի Ր Ի Վ Ի Լ Ա Յ Ե Թ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԳՐԱՍՆՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ							
Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպտեմբերի 1330 թ. 18 փետրվարի	Մարտի 1330 թ. 16 փետրվարի
378	1892						

Արդարադատության և դավանանքների բարձր միեկխառության

Դիարբեքի վիլայեթի և նրան հարակից վայրերի և կայսերական հրամանով չհաստատված 108 եկեղեցիների վայրերը, ա-

նունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացնում ենք Ձեր Բարձրության և խնդրում, համաձայն օրենքի, անհրաժեշտ կարգադրությունը:

Առանց ֆերմանի՝ 108:

Կցված է 1330 թ. փետրվար 16-ի № 1992 թաքերիին:

Կառուցման Բ.

1. Բուն Դիարբեքերում, Ս. Կիրակոս եկեղեցին, 1299 թ.:
2. Բուն Դիարբեքերում, Ս. Սարգիս եկեղեցին, 1250 թ.:
3. Դիարբեքերի վիլայեթի Ղարբ նահիյեյին կից Ալի-փունար գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1256 թ.:
4. Դիարբեքերի վիլայեթի Ղարբ նահիյեյին կից Ջեմի-Աղիբ գյուղի Ս. Նղիա եկեղեցին, 1322 թ.:
5. Դիարբեքերի վիլայեթի Ղարբ նահիյեյին կից Օրինակ գյուղի հայոց եկեղեցին, հնուց:
6. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Կիթիրբիլ գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, 1324 թ.:
7. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Թաթբի գյուղի Ս. Քրիստափոր եկեղեցին, 1313 թ.:
8. Դիարբեքերի վիլայեթի Սաթր նահիյեյին կից Ս. Թուխմանուկ գյուղի եկեղեցին, 1325 թ.:
9. Դիարբեքերի վիլայեթի Զիրնիբ նահիյեյին կից Ս. Աստվածածին եկեղեցին, 1286 թ.:
10. Դիարբեքերի վիլայեթի Կարաբաշ նահիյեյին կից Ս. Սիմոն եկեղեցին, հնուց:
11. Դիարբեքերի վիլայեթի Բաղչեք նահիյեյին կից Ս. Դանիել եկեղեցին, 1320 թ.:
12. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Մեզրե գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1316 թ.:
13. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Չենկոշ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1257 թ.:
14. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Չենկոշ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1275 թ.:
15. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Ադիս գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1288 թ.:
16. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Զերմիկ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1300 թ.:
17. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Այդի գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1328 թ.:
18. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Այոլ գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1322 թ.:

19. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Սադի գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1329 թ.:
20. Դիարբեքերի վիլայեթի Շարբ նահիյեյին կից Ալիսի փունար գյուղում Ս. Նղիա եկեղեցին, 1329 թ.:
21. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Սիվերեկ գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1256 թ.:
22. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Նիսիբի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1306 թ.:
23. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Չազաղ գյուղում Ս. Փրկիչ եկեղեցին, 1311 թ.:
24. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Մեզրե գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1329 թ.:
25. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Սիմակ գյուղում Ս. Գրիգոր եկեղեցին, 1327 թ.:
26. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Կորի գյուղում Ս. Սահակ եկեղեցին, 1327 թ.:
27. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Օշին գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1328 թ.:
28. Դիարբեքերի վիլայեթի Սիվերեկ սանջաքին կից Խիրբիբ գյուղում Ս. Մեսրոպ եկեղեցին, 1329 թ.:
29. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Մեֆարկին գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1290 թ.:
30. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Բաբուղին գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1316 թ.:
31. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Թերբիսի գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1261 թ.:
32. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Հեւին գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1294 թ.:
33. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Հաջիջան գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1300 թ.:
34. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Սերթիս գյուղում Ս. Թովմա եկեղեցին, 1328 թ.:
35. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Սալթան գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1286 թ.:
36. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջաքին կից Ֆրուն գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1280 թ.:

37. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Զիրիբ գյուղում Ս. Սարգիս եկե-
ղեցին, 1326 թ.:
38. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Քուրեշա գյուղում Ս. Գևորգ ե-
կեղեցին, 1325 թ.:
39. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Կիննիաթ գյուղում Ս. Աստվա-
ծածին եկեղեցին, 1266 թ.:
40. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Հասինյան գյուղում Ս. Աստվա-
ծածին եկեղեցին, 1286 թ.:
41. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Միրալիա գյուղում Ս. Գևորգ
եկեղեցին, 1272 թ.:
42. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Ասլո գյուղի Ս. Դանիել եկեղե-
ցին, 1290 թ.:
43. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Բայիբ գյուղի Ս. Թովմաս եկե-
ղեցին, 1286 թ.:
44. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Բաշի-Բյույուբ գյուղի Ս. Աստ-
վածածին եկեղեցին, 1320 թ.:
45. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Կուրթե գյուղի Ս. Սարգիս եկե-
ղեցին, 1270 թ.:
46. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Ատշա գյուղի Ս. Սարգիս եկե-
ղեցին, 1290 թ.:
47. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Հաշեբ գյուղի Ս. Աստվածա-
ծին եկեղեցին, 1290 թ.:
48. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան սանջա-
քին կից Ջինդին գյուղի Ս. Դանիել եկե-
ղեցին, 1280 թ.:
49. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Հոգնաֆ գյուղում Ս. Հովհաննես
եկեղեցին, 1286 թ.:
50. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Հազրո գյուղում Ս. Աստվածածին
եկեղեցին, 1266 թ.:
51. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Հազրո գյուղում Ս. Շմավոն եկեղե-
ցին, 1268 թ.:
52. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Թարջիլ վանքում Ս. Թովմաս եկե-
ղեցին, 1116 թ.:
53. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից (վանքեր) Այնաբեր գյուղում Ս.
Աստվածածին եկեղեցին, 1270 թ.:
54. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Բաշնիբ գյուղում Ս. Աստվածածին
եկեղեցին, 1290 թ.:
55. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Դերսիլ գյուղում Ս. Գևորգ եկեղե-
ցին, 1300 թ.:
56. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Հայտարական գյուղում Ս. Աստվա-
ծածին եկեղեցին, 1318 թ.:
57. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Ազարակ գյուղում Ս. Հակոբ եկեղե-
ցին, 1316 թ.:
58. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Մալան գյուղում Ս. Սարգիս եկեղե-
ցին, 1322 թ.:
59. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Կելսի գյուղում Ս. Նշան եկեղեցին,
1329 թ.:
60. Դիարբեքերի վիլայեթի Սիլվան կազային
կից Միզրե գյուղում Ս. Հակոբ եկեղե-
ցին, 1327 թ.:
61. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Ղանիբուլան գյուղում Ս. Փրկիչ եկե-
ղեցին, 1329 թ.:
62. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Դավթի գյուղում Ս. Գևորգ եկեղե-
ցին, 1314 թ.:
63. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Ղոնտի գյուղում Ս. Գևորգ եկեղե-
ցին, 1295 թ.:
64. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Աղիբ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին,
1326 թ.:
65. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Ղրեսիրան գյուղում Ս. Նրորդու-
թյան եկեղեցին, 1329 թ.:
66. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Նուռ գյուղում Ս. Աստվածածին ե-
կեղեցին, 1306 թ.:
67. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Կոշան գյուղում Ս. Մարկոս եկեղե-
ցին, 1321 թ.:
68. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Բասուրի գյուղում Ս. Պողոս եկեղե-
ցին, 1317 թ.:
69. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Քերթիբ գյուղում Ս. Կարապետ ե-
կեղեցին, 1323 թ.:
70. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Կուրիբ գյուղում Ս. Հակոբ եկեղե-
ցին, 1329 թ.:
71. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Բարիսիլ գյուղում Ս. Սարգիս եկե-
ղեցին, 1303 թ.:
72. Դիարբեքերի վիլայեթի Բիշիրի կազային
կից Չերջիլ գյուղում Ս. Կիրակոս եկե-
ղեցին, 1300 թ.:

73. Դիարբեքիւրի վիլայեթի Բիշլիւրի կազային կից Կետուք գյուղում Ս. Թովմաս եկեղեցին, 1305 թ.:
74. Դիարբեքիւրի վիլայեթի Բիշլիւրի կազային կից Զոիք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1329 թ.:
75. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Լիշե գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1262 թ.:
76. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Մաղափայասի վանքի եկեղեցին, հնուց:
77. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Հայինի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1262 թ.:
78. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Հոփում գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1328 թ.:
79. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Սարդե գյուղում Ս. Թորոս եկեղեցին, հնուց:
80. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Աղկան գյուղում Ս. Նշան եկեղեցին, հնուց:
81. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Զումե գյուղում Ս. Նշան եկեղեցին, հնուց:
82. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Սարնիս գյուղում Ս. Թովմաս եկեղեցին, հնուց:
83. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Մալախթա գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
84. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Նարբակնե գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
85. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Մարսում գյուղում Ս. Կիրակոս եկեղեցին, հնուց:
86. Դիարբեքիւրի վիլայեթի Թեփե-քոյ գյուղում Ս. Պետրոս-Պողոս եկեղեցին, հնուց:
87. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Հալնան գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
88. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Կարվաս գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
89. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Շամշամի գյուղում Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց:
90. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Արիս գյուղում Ս. Հովսեփմեհի եկեղեցին, հնուց:
91. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Անթակ գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց:
92. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Շաթհիք գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
93. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Բամոթնե գյուղում Ս. Խաչ եկեղեցին, հնուց:
94. Դիարբեքիւրի վիլայեթի Լիշե կազային կից Զեմար գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
95. Դիարբեքիւրի վիլայեթի Դիրեք կազային կից Դիրեք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
96. Դիարբեքիւրի վիլայեթի Դիրեք կազային կից Դիրեք գյուղում Ս. Դանիել վանքի հայոց եկեղեցին, հնուց:
97. Դիարբեքիւրի վիլայեթի Վերան-շեհերի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
98. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքի Մաղեն նահիյեում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
99. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Արղնի նահիյեում, Բարձրահայաց Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
100. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Արղնի նահիյեում Վերին Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
101. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Արղնի նահիյեում Ներքին Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
102. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Փայամ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, հնուց:
103. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Փիրան գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
104. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Հիրեղան գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
105. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Դենքե գյուղում Ս. Թովմաս եկեղեցին, հնուց:
106. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Էլիլ գյուղում Ս. Նշան եկեղեցին, հնուց:
107. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Հոփաք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
108. Դիարբեքիւրի վիլայեթի Արղնի-Մաղեն սանջաքին կից Թիլ-Բաղդադ գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, հնուց:

(Շարունակելի)



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Սովետական Հայաստանի տնտեսական հաջողությունները.— Վերջերս Հայաստանի Գերագույն սովետի հոկտեմբերյան նստաշրջանում քննության առնվեցին արդյունաբերության ղեկավարման, պլանավորման բարելավման հարցերը և միաժամանակ հանրագումարի բերվեցին ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի կատարման նախնական արդյունքները:

Յոթնամյա պլանի ավարտմանը մնացել է 3 ամիս, սակայն արդյունքներն արդեն ակնհայտ են: Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը վերջին յոթ տարիներին աճել է ավելի քան 2 անգամ: Բիմիական, գունավոր մետաղների, էլեկտրատեխնիկական արդյունաբերության գծով արտադրանքի աճը կապմում է 3 անգամ:

Վերջին տարիներին Հայաստանում ստեղծված են արդյունաբերական բոլորովին նոր և շատ կարևոր ճյուղեր, ինչպիսիք են ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրական հաշվիչ մեքենաների, մամուլ, բարձր մեքենաների արտադրությունը: 7 տարվա ընթացքում կառուցված և շահագործման է հանձնված 220 նոր գործարան և արտադրամաս: Նույն ժամանակաշրջանում հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները յուրացրել են 600 նոր տեսակի արդյունաբերական արտադրանքի թողարկումը:

Ընթացիկ տարվա 9 ամսում Հայաստանի ողջ արդյունաբերությունը տվել է 10,3 տոկոսով ավելի արտադրանք, քան 1964 թվականի նույն ժամանակաշրջանում: Յոթնամյակի վերջին, եզրափակիչ տարվա պլանը կկատարվի նույն հաջողությամբ, ինչպես և նախորդ տարիները:

1965 թվականի անցած 9 ամիսներին Հայաստանում արտադրվել է 5300 տոննա քիմիական թել, 887 000 հատ ավտոդուր, 16 100 տոննա հանքային պարարտանյութ, ավելի քան 2 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 462 000 տոննա ցեմենտ, 62 միլիոն քառակուսի մետր բամբակյա, բրդյա և մետաքսյա կերպասեղեն,

5,5 միլիոն կույզ կոշիկեղեն, ավելի քան 2 միլիոն ժամացույց, շուրջ 70 միլիոն հատ էլեկտրական լամպեր, 6913 հատ մետաղամշակման հաստոցներ և բազմաթիվ այլ տեսակի արդյունաբերական առարկաներ, սննդամթերք, հագուստեղեն, կահույք, շինանյութեր և այլն:

Օրավոր աճում է մեր հանրապետության տնտեսական հզորությունը, հպարտությամբ լցնելով յուրաքանչյուր հայաստանցու սիրտը:

Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» նոր հրատարակությունը.— Վրաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը վերջերս թրիխիում հրատարակել է միջնադարյան հայ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու «Հայաստանի պատմությունը» վրացերեն և հայերեն լեզուներով: Դրասխանակերտցին ապրել է Թ—Ժ դարերում: Նրա աշխատությունն ընդգրկում է մինչ 925 թվականը Հայաստանում տեղի ունեցած դեպքերը: Աշխատությունը բնորոշ է նրանով, որ ա՛յն հետաքրքրական տեղեկություններ է տալիս նաև Վրաստանի մասին:

Գիրքն ունի ընդարձակ նախաբան և ծանոթագրություններ, որոնցով վերլուծման են ենթարկված Դրասխանակերտցու աշխատության հիմնական աղբյուրները և նշված, թե ի՞նչ նշանակություն ունի այդ աշխատությունը Հայաստանի քաղաքական, տնտեսական և սոցիալական պայմանների ուսումնասիրման գործում Թ—Ժ դարերում:

Գրքի հայերեն բնագիրը, վրացերեն թարգմանությունը և ծանոթագրությունները նախապատրաստել է պատմաբան Է. Ցագարելշվիլին, գլխավոր խմբագիրն է ակադեմիկոս Գ. Ծերեթելին, հայկական աղբյուրների խմբագիրն է Ի. Աբուլաձեն:

Աշխատությունը՝ նվիրված Դրիմի հայ գաղութի պատմությանը.— Լույս է տեսել Վ. Միքայելյանի «Դրիմահայ գաղութի պատմությունը» հետաքրքրական և արժեքավոր աշխատությունը:

Սովետական Միության տարբեր քաղաքներում պահպանվող արխիվային նյութերի հիման վրա հեղինակը տվել է Ղրիմի երբեմնի հայաշատ գաղութի մանրամասն պատմությունը: Նա գտնում է, որ այդ գաղութը հիմնվել է ոչ թե ԺԴ դարում, ինչպես ընդունված է եղել կարծել, այլ ԺԱ դարում:

Գրքում մեծ տեղ է հատկացված գաղութի տնտեսական և մշակութային կյանքի պատմության: Ղրիմահայերը եղել են գերազանցապես ձեռներեց վաճառականներ և հմուտ արհեստավորներ: Այդ գաղութը մեծ ավանդ է մուծել հայրենի մշակութային գանձարանը: Ղրիմահայ մի շարք գրական դեմքեր իրենց արժանի տեղն են գրավել միջնադարյան հայ գրականության պատմության մեջ: Մեծ վարձացում է ստացել գրչության արվեստը: Ղրիմահայ գրիչների 238 ձեռագրեր հասել են մեզ և պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում:

Ներսիսյանցիների հավաքը.— Երջանկահիշատակ Ներսես կաթողիկոս Առտարակեցու կողմից 1825 թվականին Թիֆլիսում հիմնված հոգևոր դպրոցը՝ խոշոր դեր է կատարել մեր ազգային-մշակութային կյանքում: Իր գոյության 100 տարվա ընթացքում նա տվել է հազարավոր ջրջանավարտներ, որոնք ծնալի են հայ ժողովրդին ամենատարբեր բնագավառներում:

Այս տարի լույսով մշակութային այդ նշանավոր կենտրոնի հիմնադրման 140-ամյակը: Հոբելյանական տարեթվի առթիվ Երևանում, Հայֆիլիսարմոնիայի մեծ դահլիճում, հոկտեմբերի 16—17-ին, տեղի ունեցավ Ներսիսյան դպրոցի ջրջանավարտների, ավանդական վեցերորդ հավաքը: Ներկայիս Հայաստանի և Սովետական Միության սահմաններում ապրում են շուրջ 300 հոգի ներսիսյանցիներ: Նրանց մեծ մասը ներկա էին հավաքին: Եկել էին Թբիլիսիից, Մոսկվայից, Բաքվից, Ղարաբաղից և այլ վայրերից:

Հավաքին իբրև հյուր հրավիրված էին Էրզրումի նախկին Սանասարյան, Վանի ազգային վարժարանների, Մուրադ Ռաֆայելյան դպրոցի, նախկին Գևորգյան ճեմարանի, Թբիլիսիի նախկին Հովնանյան և Գայանյան օրիորդաց վարժարանների ջրջանավարտները, որոնք բնակվում են Հայաստանում:

Հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ ներսիսյանցիների հավաքի հանդիսավոր մասը: Լսվեցին զեկուցումներ Ներսիսյան դպրոցի սաների գործունեության, ինչպես նաև նրա ակնամավոր սաների գործունեության մասին:

Կիրակի, հոկտեմբերի 17-ին, հավաքի մասնակիցները այցելեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը Օշակա՛նում, այնուհետև եղան Ս. Էջմիածնում: Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը սիրով ընդունեց նրանց Վեհարանում և ջերմորեն ողջունեց, նշելով Ներսիսյան դպրոցի դերն ու նշանակությունը ազգային ու մշակութային կյանքում: Վաստակավոր էլեկտրագեղ-ինժեներ, ներսիսյանցի պր. Գ. Փերիխանյանը հավաքի մասնակիցների առունից ջնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար:

Այնուհետև հավաքի մասնակիցները հավաքվեցին երջանկահիշատակ Ներսես կաթողիկոս Առտարակեցու

գերեզմանի շուրջը, թարմ ծաղիկներ դրեցին նրա շիրիմին: Ներկաներից մի քանի հոգի հարգանքի խոսք ասացին իրենց դպրոցի հիմնադրի հիշատակին: Ապա Մայր Աթոռի միաբանների մասնակցությամբ, հոգեհանգիստ կատարվեց մեծ Առտարակեցու հիշատակին: Հոգեհաճախյան արարողությունը ավարտվեց Տերունական աղոթքով, որը կատարեցին ներկա գտնվող բոլոր ներսիսյանցիները Մ. Եկմայանի եղանակով:

Լենինականի թատրոնի 100-ամյակը.— Վերջերս Հայաստանի թատերական հասարակությունը մեծ ջուրով նշեց Լենինականի Ա. Մռավյանի անվան դրամատիկական թատրոնի հիմնադրման 100-ամյակը: Հանդիսությունները տեղի ունեցան Լենինականում: Հանդիսություններին մասնակցեցու համար ժամանել էին մեծ թվով հյուրեր Երևանից, Մոսկվայից, Վրաստանից, Ադրբեջանից:

100-ամյակի առթիվ Սովետական Միության Գերագույն սովետի նախագահությունը թատրոնը պարգևատրել էր Աշխատանքային կարմիր դրոշի ջրջանով: Հայաստանի Գերագույն սովետի նախագահությունը թատրոնի մի խումբ աշխատողների ջնդրից ժողովրդական և վաստակավոր դերասանի կոչումներ, իսկ մի մեծ խումբի պարգևատրեց պատվոգրերով:

Լենինականի թատերական խումբը կազմվել է 1865 թվականին: Այդ տարվա ամբողջ թատրոնն սկսել է իր ներկայացումները նախկին Գյումրիում (Ալեքսանդրոպոլում): Այս թատրոնի բեմի վրա հանդես են եկել հայ թատրոնի տաղանդավորագույն ներկայացուցիչները՝ Գևորգ Չմշկյանը, Պետրոս Աղամյանը, Հրաչյան, Սիրանույշը, Հովհաննես Զարիֆյանը, Հովհաննես Աբելյանը, Արմեն Արմենյանը, Վահրամ Փափապյանը և ուրիշներ:

Իր ծաղկման բուռն ջրջանը թատրոնը թևակոխեց սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին, երբ ստեղծվեց միայն թատերական խումբ՝ պետական մարմինների հովանավորության ներքո: Իր ջուրջը համախմբելով տարեց և երիտասարդ թատերական ուժերի, Լենինականի թատրոնը դարձավ Սովետական Հայաստանի արվեստի օջախներից մեկը, ձեռք բերելով մեծ ժողովրդականություն ողջ հանրապետության սահմաններում:

Կոմիտաս վարդապետին նվիրված ցուցահանդես.— Երևանում, նկարիչների տան սրահում, բացվել էր անվանի նկարիչ Գրիգոր Խանջանի գործերի մի յուրահատուկ ցուցահանդես: Վերջին 2 տարվա ընթացքում տաղանդավոր նկարիչը գծել էր մի շարք նկարներ՝ անմահ Կոմիտասի կյանքին նվիրված: Իր նկարները գծելիս, Գ. Խանջանը նկատի է ունեցել Պարույր Սևակի հռչակավոր «Անլռելի պանգալատուն» պոեմը: Նկարները կարծես հանդիսանում են պոեմի բովանդակության նկարչական վերարտադրությունը:

Մի ամբողջ շարք նկարների միջոցով պատկերված են հանճարեղ Կոմիտաս վարդապետի կյանքի տարբեր դրվագները, սկսած նրա երաժշտական առաջին քայլերից մինչև եղեղաբախտ վախճանը: Ցնցող ու անմոռաց են անմահ Կոմիտասի խորունկ վշտի և խելագարության տեսարանները:

Դանիել Վարուժանի ձեռագիր տետրը.— Ռուսինահայ պատմաբան և գրականագետ Հակոբ Ճ. Սիրունին, որն այժմ գտնվում է Երևանում, հանրապետության արվեստի թանգարանին նվիրեց Դանիել Վարուժանի ձեռագիր տետրը: Այն պարունակում է գրականության վանական հարցերին նվիրված դասախոսությունների գրառումներ, որոնք բանաստեղծը կարդացել է Պոլսում եղած տարիներին:

Առանձին ուշադրություն են գրավում նրա խորհուրդները սկանակ գրողներին, ասույթները: Կան Վարուժանի գնահատականները Ա. Շիրվանյանի, Սիամանթոյի, Ա. Չուպանյանի, Ա. Ծատուրյանի և այլ գրողների ստեղծագործությունների վերաբերյալ:

Հ. Ճ. Սիրունին անձնական ծանոթություն է ունեցել Վարուժանի հետ: Նրանք միասին Պոլսում հրատարակել են «Նավասարդ» տարեգիրքը և «Մեհյան» երկշաբաթաթերթը: Բանաստեղծի ողբերգական մահից հետո, Սիրունին նրա տետրը իր հետ տարել է Ռուսինիա, որտեղ և հետագայում հրատարակել առանձին մասերը:

Ձեռագիրն արժեքավոր համալրում է Վարուժանի արխիվային ֆոնդում:

Նորհրդակցություն նվիրված գիտության պատմությանը.— Հոկտեմբեր ամսում Երևանում տեղի ունեցավ գիտության պարգևմանը նվիրված անդրկովկասյան առաջին համաժողով, մասնակցությամբ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի գիտնականների:

Դա մի հետաքրքրական ժողով էր, ուր քննարկվեցին մի ամբողջ շարք զեկուցումներ գիտության տարբեր բնագավառների պարգևման պատմության վերաբերյալ:

Այսպես, օրինակ, երեք հանրապետությունների գիտնականների կողմից զեկուցումներ կարդացվեցին ֆիզիկայի, աստղագիտության, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, բժշկության և գիտության այլ բնագավառների պարգևման պատմության վերաբերյալ:

Համաժողովը մեծ նշանակություն ունեցավ անդրկովկասյան երեք հանրապետությունների գիտական հաստատությունների փորձի փոխանակման համար՝ գիտության պատմության հարցերի մշակման տեսակետից:

Երևանի պատմության թանգարանը.— Հայաստանի մայրաքաղաքի մշակութային հետաքրքրական հաստատություններից մեկն է Երևանի պատմության թանգարանը: Թանգարանն ունի պատմական իրերի հարուստ հավաքածու՝ սկսած մեր թվագրության 7-և 9 հազարամյակներից մինչև մեր օրերը: Պատմական այդ բոլոր իրերը վանական ժամանակներում հայտնաբերված են քաղաքի տարբեր մասերում, շինարարական աշխատանքների և կամ թե Արիստեղի ու Կարմիր բլուրի պեղումների ժամանակ:

Արիստեղի պեղումների ժամանակ հայտնաբերված ուրարտական հայտնի սեպագիր արձանագրության համաձայն, որը գրել է տվել Արգիշտի Ա թագավորը, 2750 տարի առաջ հիմնվել է Էրիբունի քաղաքը, որի անունով էլ հենց կոչվում է Երևանը:

Թանգարանում բազմաթիվ նմուշներ կան ուրարտական թագավորության հետագա շրջաններին, ինչպես նաև մեր

թվագրության առաջին դարերին վերաբերող: Գրավոր աղբյուրներում Երևանի անունը առաջին անգամ նշվում է սկսած է դարից: Առանձին բաժին է նվիրված պարսկական տիրապետության շրջանին և հատկապես Շահ Աբբասի կողմից հայերի բռնի զաղթեցմանը:

Թանգարանի ամենահարուստ և հետաքրքրական բաժինն է կազմում Սովետական Երևանի բաժինը, ուր պատկերված է քաղաքի բուռն զարգացումը անցած 40—45 տարիների ընթացքում:

Երևանի ջերմաէլեկտրակայանում.— Ինչպես հայտնի է, Երևանում կառուցվում է ջերմային հզոր էլեկտրակայան, որի համար իբրև վառելիք գործ է ածվում բնական գազի մնացուկը: Այդ էլեկտրակայանը հնարավորություն կտա կրճատել Սևանի ջրերի օգտագործումը էլեկտրակայանություն ստանալու համար:

Ջերմաէլեկտրակայանի առաջին ագրեգատը, 50 000 կիլովատ կարողությամբ, գործարկվեց 1963 թվականի մարտին: Հետագայում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին ևս 3 ագրեգատներ, որով կայանի հզորությունը հասավ 200 000 կիլովատի:

Անցյալ սեպտեմբերի 30-ին շահագործման հանձնվեց ջերմաէլեկտրակայանի հերթական ագրեգատը, այս անգամ արդեն 150 000 կիլովատ հզորությամբ: Ուրեմն, ներկայիս կայանի ամբողջ հզորությունը կազմում է 350 000 կիլովատ: Դա շուրջ 100 000 կիլովատով պակաս է, քան Սևանի բոլոր 6 հիդրոկայանները միասին վերցրած: 1966 թվականին Երևանի ջերմաէլեկտրակայանի հզորությունը կավելանա ևս 200 000 կիլովատով:

Նոշոր ջերմային էլեկտրակայաններ են կառուցվում նաև Կիրովականում և Հրապառնում, որոնք պատրաստ կլինեն 1966 թվականին: 1970 թվականին Հայաստանում արտադրվելիք ամբողջ էլեկտրաէներգիայի 75 տոկոսը կտան ջերմային էլեկտրակայանները և միայն 25 տոկոսը՝ ջրային էլեկտրակայանները:

Արտասահմանյան տուրիզմի պարգևումը.— Տարեցտարի ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ են այցելում Հայաստան՝ թե՛ հայեր և թե՛ օտարազգիներ: Անցյալ 1964 թվականին զբոսաշրջիկների թիվը կազմել է 4000 հոգի՝ արտասահմանյան 27 տարբեր երկրներից: Այս տարի, մինչև հոկտեմբերի 1-ը, այդ թիվը հասել է 5000-ի, որոնցից 2000 սփյուռքահայեր: Մինչև տարվա վերջը սպասվում են ևս 4000 հոգի:

Հանրապետության պատկան իշխանությունները հատուկ ուշադրություն են նվիրում տուրիզմի պարգևմանը: Եկող տարի Հայաստանը ընդունելու է շուրջ 10 000 արտասահմանյան զբոսաշրջիկներ: Դրանք բավարարման համար ներկայումս կառուցվում են մի քանի խոշոր հյուրանոցներ: Այդ հյուրանոցներից մեկը կառուցում է «Ինտուրիստ»-ը, Պարոնյան փողոցի վրա: Այն կլինի 15 հարկանի և կարող է ընդունել 500 մարդ: Շարունակվում է «Արմենիա» հյուրանոցի երրորդ հերթի կառուցումը, որի ավարտից հետո հյուրանոցը հավելյալ կարող է ընդունել ևս 128 մարդու: Եկող տարվանից «Ինտուրիստ»-ի մի նոր հյուրանոց է կառուցվելու Թումանյան և Տերյան փողոցների անկյունում, որը նույնպես կլինի 15 հարկանի և կունենա 500 տեղ: Բացի այդ, հանրապետու-

թյան մի քանի վայրերում կառուցվելու են ավտոճյուղանոցներ: Սևանում, Գառնիում, Ծաղկաձորում և այլ վայրերում հնարավորություններ են ստեղծվելու, որպեսզի զբոսաշրջիկներն զբաղվեն ձկնորսությամբ և որսորդությամբ:

Սփյուռքահայ տաղանդավոր արվեստագետներ հայրենիքում.— Երևանի երաժշտասեր հասարակությունը վերջերս ջերմորեն ընդունեց որպես զբոսաշրջիկ Մայր Հայրենիք այցելած լիբանանահայ տաղանդավոր երգչուհի Արփինե Փեհիվանյանի համերգները:

Այժմ խոստումնալից երիտասարդ արվեստագիտուհին, ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանի ղեկավարությամբ, պատրաստվում է հանդես գալ հայրենի երկրում «Անուշ»-ի դերերգով:

Մայր Հայրենիքում վերջերս համերգներ տվեց նաև երգիչ Տիգրան Ժամկոչյանը (Իտալիայից):

Տաղանդավոր արվեստագետների ելույթները Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում անցան փառալուստ հաջողությամբ: Ծրագրում տեղ էին գրավել հայկական և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Տաղանդավոր մանուկը.— Վերջերս Երևանի կոմպոզիտորների տանը կայացավ մի արտասովոր համերգ: Լեփլեցուն դահլիճը լարված ուշադրությամբ ունկնդրում էր 12-ամյա Զոհրապ Փարեմուլյանի համերգը: Այդ վտիտ մանուկը հասուն վարպետի վարժությամբ նվագում էր

Բախի, Մոցարտի, Հենդելի, Լիստի ստեղծագործությունները: Այնուհետև նա սկսեց նվագել իր սեփական ստեղծագործությունները՝ «Դեղձանիկի երգը», «Կրեմլյան պանգեդը», «Ռոնդո-կապրիչիոյո» և այլն: Համերգը որը կազմակերպել էին Հայաստանի կոմպոզիտորների միությունը և «Պիոներ» թերթի խմբագրությունը, անցաբացառիկ հաջողությամբ: Մայրաքաղաքի երաժշտասեր հասարակությունը հաճույքն ունեցավ վայելելու այդ գեղեցիկ համերգը: Հայ երաժշտական կյանքում ծնվե է մի նոր, բացառիկ տաղանդ:

Զոհրապ Փարեմուլյանը ծնվել է Թբիլիսիում: Նրա հայրը հասարակ ծեփագործ բանվոր է: Վաղ հասակում երեխան կորցնում է տեսողությունը: Օդեսայի հատկապես ակնաբուժարանում հաջողվում է մասամբ վերականգնել Զոհրապի տեսողությունը: Նկատելով նրա երաժշտական ընդունակությունները, Թբիլիսիի № 1 երաժշտական դպրոցը ստանձնում է մանուկ Զոհրապի երաժշտական կրթության գործը: Թբիլիսիի Ռուսթավելու անվան համերգային դահլիճում կազմակերպվում է տաղանդավոր մանկան առաջին համերգը, որն անցնում է բացառիկ հաջողությամբ:

Այժմ Զոհրապ Փարեմուլյանն իր հոր հետ բնակվում է Երևանում և սովորում № 71 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում: Հայաստանի կոմպոզիտորների միությունն ստանձնել է տաղանդավոր մանկան երաժշտական լիարժեք կրթության հոգսը:



ԲԱՂԱԲԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Հայաստանի քաղաքաշինարարության պատմությունը մեր ժողովրդի նյութական մշակույթի բաղմազան գրեթե ամբողջ մեկն է, որը շատ քիչ է ուսումնասիրվել, նյութական և մատենագրական տվյալների բացակայության պատճառով:

Բնակավայրերի կառուցապատման պատմությունը գերազանցապես հենված է ժողովրդական ճարտարապետության վրա, քանի որ մասնագետ ստեղծագործողի դերը սահմանափակվել է մի քանի եկեղեցական, ռազմական և քաղաքացիական բնույթի շինությունների կառուցմամբ. մինչդեռ աշխատավոր խավին պատկանող և նրա ձեռքերով կառուցվող շինությունները, գլխավորապես բնակելի տները, ծածկել են բնակավայրերի գերազանց մասը: Այդ պատճառով էլ կառուցապատման տրադիցիաները, ինչպես ժողովրդի ամբողջ նյութական մշակույթը, աչքի են ընկել իրենց պահպանողականությամբ, իբրև հիմնական պատճառ ունենալով քաղաքական պայմանների ուժեղ ազդեցությանը ենթարկված կենցաղային և սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Զգալի նշանակություն են ունեցել նաև բնական պայմանները, որոնք, ինչպես հայտնի է, բացառիկ ինքնատիպ են Սյունյաց երկրում:

Քաղաքաշինարարության զարգացումը Սյունիքում արտահայտվել է առանց ընդմիջումների, կառուցապատման տրադիցիաների շափազանց դանդաղ փոփոխություններով. այնուամենայնիվ, առանց իրարից խիստ մեկուսացնելու, կարելի է որոշակի կառուցապատման առանձնահատկություններով տարբերել հնագույն բնակավայրերը՝ ստրկատիրական մշակույթի ժամանակներից մինչև սովետական իշխանության հաստատումը գրեթե անփոփոխ մնացած գյուղերը, միջնադարյան ավաններն ու քաղաքները, ու միջնադարի ավաններն ու ժթ—ի դարերի քաղաքները:

Ներկա հոդվածում, միջնադարյան քաղաքաշինարարության նախապատրաստական փուլը ներկայացնելու դիտավորությամբ, թուցիկ կերպով անդրադառնում ենք հնագույն բնակավայրերին. իսկ նոր բնակավայրերին (ժթ—ի դ. դ.) չենք անդրադառնում, նկատի ունենալով նրանց բոլորովին այլ պայմանների արգասիք լինելու և ժամանակակից մասնագիտական ստեղծագործության հետ կապված առանձին ուսումնասիրության նյութ հանդիսանալու հանգամանքները:

Սյունիքի տերիտորիայում քաղաքաշինարարության տարրական սկզբունքները դրսևվորվել են շատ վաղ: Ապացուցված է մարդու գոյությունն այստեղ դեռևս հին քարե դարի ժամանակներում¹: Սակայն կառուցապատման սխեմաների երևան գալը պատկանում է շատ ավելի ուշ ժամանակների, երբ մարդկային խմբավորումները անցել են նստակյաց կյանքի: Հավանաբար նեոլիթյան պատկանող այդ ժամանակներում հանդես է գալիս մարդու շինարարատի հետ առնչվող էսթետիկական վերաբերմունքը իրականության, շրջապատի նկատմամբ. սկսում են մարդկային ապրումները մարմնավորել դեռևս շատ նախնական կառույցների մեջ. երևան են գալիս առաջին մոնումենտալ կառույցները՝ մենհիրները, կրովեխները, դրմենատիպ բնակարաններն ու դամբարանները:

Բայց շինարարության և կառուցապատման մեջ հեղաշրջող դերը պատկանում է մետաղի գործիքներին: Բրոնզե դարի սկզբնական շրջաններին են վերաբերում ամրացված բնակավայրերն ու կիկլոպյան ամրոցները: Դրանք ըստ էության նույն բանն են, որովհետև չի եղել ամրոց առանց բնակավայրի և հակառակը: Բնակավայրերի ամրացման այդ

¹ Տե՛ս Ս. Տարդյան, «Палеолит в Армении», Ереван, 1954.

համատարած սկզբունքը արդյունքն է եղել անասնապահության նկատելի աճի, ցեղերի ունեցվածքային տարբերությունների մեծացման և արտատնտեսության ու գույքի համար տեղի ունեցող ընդհարումների²։ Նկատի ունենալով կենցաղային և միաժամանակ պաշտոնական դերը, այդ բնակավայրերն անվանել են բերդ-շենքեր։ Դրանցից բաղմաթիվ մնացորդներ կան նաև Սյունիքի տերիտորիայում։

Բերդշենքերն ընդհանրապես ներկայացրել են անմշակ, մեծ քարերով, առանց շաղախի շարված պարիսպներով ամրացված դժվարամատչելի բարձունքներ, հովանդաններ կամ քարափներ, որոնք իշխում էին շրջապատի վրա։ Բնակելի կառույցները, որոնք հանդիսացել են գետնափոր կամ կիսագետնափոր ուղղանկյուն կամ բուրբուռաձև հատակագծով, միաբաժանմունք կամ ավելի բարդ շենքերի անկանոն և խիտ համախմբումներ, տեղավորված են եղել պարսպից նեքս, հաճախ նաև դուրսը։ Վտանգի ժամանակ մարդիկ և անասունները պաշտպանվել են ամրոցի ներսում։ Սյունիքի խորքերում մարդիկ, հավանաբար օգտագործելով իրենց երկրի դժվարամատչելի բնությունը (թավուտ անտառները, լեռնածալքերը, ժայռերն ու քարանձավները), արհեստական ամրություններ համեմատաբար քիչ են օգտագործել։ Այնուամենայնիվ, գրեթե ամենուրեք են կատված են ամրացված բնակավայրեր։ Ամենանշանավորն է Ղոշունդաշ կոչվող բերդշենք Միսիանում։

Բնակավայրերի ջրամատակարարման խնդիրները նկատի ունենալով, հաճախ ընտրվել են այնպիսի բլուրներ, որոնք թմբաձև միացած են եղել շրջակա ջրառատ բարձունքներին։

Հավանաբար ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում պարսպապատվել է նաև բնակավայրը և ամրոցը դարձել միջնաբերդ ու իշխանավորի բնակատեղ։ Միջնաբերդի շուրջը կառույցների խիտ համախմբումը պաշտպանական անհրաժեշտությամբ էր թելադրված։ միաժամանակ այն արդյունքն է եղել նաև գյուղատնտեսության, հատկապես անասնապահության մեջ արտադրության հանրային բնույթի, նախապես ամբողջ ցեղի և ավելի ուշ միայն ցեղապետի սեփականատիրական իրավունքի պայմաններում։

Նկատի ունենալով տեղանքի պաշտպանական և կենցաղային հարմարությունները, նաև երկաթի դարաշրջանում (մ. թ. ա. 1-ին հազարամյակ)՝ դրա հետևանքով, վերակառուցվել են ամրությունները, փորվել գետնուղիներ։ Այդպիսի վերակառուցումների հետ-

քեր կան Սևանա լճի ավազանի բերդշենքերում, մասնավոր լճափի հարավ-արևմտյան մասում տարածվող Վելիկուխի երկրի քսան-երկու ամրոցներում, որոնց մասին կան հնագիտական բազմաթիվ ուսումնասիրություններ³։ Այդ բերդշենքերը հենց ուրարտական արձանագրություններում հիշատակվող քաղաքներն են, որոնցից յուրաքանչյուրին շուրջ 25 քառ. կիլոմետր տարածություն է ընկել։ Դրանցից յուրաքանչյուրի մերձակայքում եղել է գերեզմանոց, նույնպես կիկլոպյան բնույթի դամբարաններով։

Դատելով կիկլոպյան կառույցների շատությունից, պետք է ենթադրել, որ լճափնյա վայրերը շափազանց խիտ են բնակեցված եղել և այնտեղ օգտագործվել են պաշտպանական հարմարություններ ու մերձակայքում շուրջ ունեցող ամեն մի վայր, այդ թվում նաև լճափնյա թերակղզիները՝ Նորադուզի, Շորջայի, Աղկալայի (Սպիտակաբերդ) և այլն։ Այս բնակավայրերը պարսպապատվել են միակ մատչելի պարանոցի կողմից, որտեղ պարսպներն իջեցվել են մինչև իսկ ջրի մեջ։

Քաղաքաշինարարական որոշակի զարգացում և կառուցապատման սկզբունքների կառուցում է նկատվում Նորարտական ժամանակաշրջանում, երբ միջնաբերդ ունեցող ամրացված բնակավայրերի կառուցապատման սկզբունքը պահպանվել է զարգացման նոր աստիճանի է հասցվել։ Այդ ժամանակ այն ունեցել է ցեղապետին կամ թագավորին սպասարկող անձնակազմը, նույնիսկ գույքը պարիսպների շափ ընդարձակ տարածություն։ Ուրարտական քաղաքներից խալդ աստծուն նվիրվածը Կամոյի (Նոր-Քալադեդի) ժայռաբլրի վրա և Թեյշեբա աստծուն նվիրվածը Մովինար և Ալուշալու գյուղերի միջև, ունեցել են բավականաչափ ընդարձակ միջնաբերդեր, որոնք ընդունակ են եղել դիմանալու երկարատև պաշարմանը։ Որոշակի հայտնի է Գավառի (Կամոյի) ժայռաբլրի վրա եղած բնա-

³ Թ. Ավալրեկյան, «Նոր-Քալադեդի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը», «Տեղեկագիր ԶեՍԶ Գիտության և արվեստի ինստիտուտի», № 2, Երևան, 1927;—Ս. Բաղխապուրյան, «Վելիկուխի երկրները», «ԶեՍԶ Կոլտուրայի պատմության աշխատությունները», հատոր 1-ին, Երևան, 1935;—Н. И. Мещанинов, «Циклопические сооружения закавказья», «Известия ТАИМК», том XIII, вып. 4—7, 1933;—А. А. Аджаян, Л. Т. Гюзальян, В. Б. Пиотровский, «Циклопические крепости Закавказья», «Сообщения ТАИМК», 1932, № 1—2, стр. 61—64;—В. Б. Пиотровский, Л. Т. Гюзальян, «Крепости Армении доурартского времени», «Проблемы истории материальной культуры», 1933, № 5—6, стр. 51—59.

² Ծ. Б. Пиотровский, «Археология Закавказья», Ленинград, 1949, стр. 43.

կազմակերպչի դերը. միջնաբերդը մոտ 1,7 հեկտար տարածություն է գրավել հրվանդանի սուր ծայրին և անջատվել մոտ շորս հեկտար տարածություն բռնող բնակելի մասից, ուղիղ գծով հյուսիսից հարավ ձգվող հաստ պարբսպով. հրվանդանի արևելյան ծայրում, դարձյալ հյուսիսից հարավ ընթացող մի պարբսպագիծ ընդգրկել է ամբողջ բնակավայրը:

Ուրարտական թագավորության ժամանակներում, հավանաբար նաև ավելի ուշ, շարունակել է իր ռազմական նշանակությունը պահպանել լճաշենի բերդչենը: Կամոյի և Մովսիսի տեղերում գտնվող քաղաքների հետ անտարակույս այն պետք է միացած լիներ կարևոր առափնյա ճանապարհով. դրա հյուսիսային ծայրը, այսինքն լճի ամբողջ ավազանի մատուցները, պաշտպանում էր լճաշենի ամրոցը. նույն դերն էր կատարում Զաղալուսի ամրոցը լճափի հարավ-արևելյան մասում⁴: Նկատի ունենալով Ուրարտուի տեղափոխության հարաբերություններն իր տիրապետության սահմաններում, ինչպես և հեռավոր երկրների հետ, պետք է ենթադրել, որ եղել են նաև զեպի Սյունիքի խորքերը գնացող այլ ճանապարհներ և նրանց վրա մեծ բնակավայրեր: Այդ ժամանակվա լճափնյա բնակավայրերը գտնվելիս են եղել ամբողջ ավազանը բռնող անտառապատ միջավայրում⁵:

Հայկական կենտրոնացված պետական իշխանության կազմավորումից հետո, զգալի փոփոխություններ են կրում տոհմացեղական ժամանակների կառուցապատման տրադիցիաները. բերդչենը դադարում է բնակավայրի միակ տիպարը լինելուց, քանի որ վերանում են սոցիալ-տնտեսական այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին դարձնում նրանց գոյությունը: Բայց նրա կառուցապատման տրադիցիան պահպանվեց միջնադարյան ավանտիպ բնակավայրերի հիմնական տարրերի ընդերքում և նրանց փոխադարձ դասավորության մեջ. ամրոցը և իր միջնաբերդը, նրանց մոտ, անմիջապես կից վայրում բնակավայրի համախմբված, խիտ և անկանոն կառուցապատումը ժողովրդական կենցաղի հետ կապված բազմապիսի շինություններով, ամրոցի ջրամատակարարումը, բնակավայրի ամրացումը պարիսպներով միջնադարյան ավաններում հանդես եկող քաղաքաշինարարական տարրեր են, որոնց նախնական դրսևորումները տեսնում ենք բերդչենների մոտ:

Հայկական ՍՍՌ հարավ-արևելյան շրջանների բնակավայրերը, հայ ժողովրդի գոյության սկզբնական շրջաններից մինչև սովետական իշխանության հաստատումը, գերազանցապես գյուղեր են եղել. քաղաքատիպ բնակավայրերի աշխատավորական թաղերը ևս գրեթե ամբողջությամբ գյուղատիպ շենքերով են կառուցապատվել: Տոհմացեղական տեղական ընդհարումների վերացումով, գյուղական համայնքներն ավելի մեծ հնարավորություններ ստացան իբրև բնակատեղ ընտրելու կենցաղային, արտադրական և փոխանակման նպատակների համար նպաստավոր պայմաններ ընձեռող վայրեր: Պետք է նկատի ունենալ, որ բնակավայրերի կառուցապատման գործում խոշոր դեր կատարեց հայկական կենտրոնացված իշխանությունը. վերջինս պայմաններ ստեղծեց և ընդհանուր առմամբ ղեկավարեց քաղաքաշինարարական համապետական, մասամբ նաև տեղական նշանակություն ունեցող աշխատանքները. քիչ չեն պատմիչների վկայությունները անտառների, որսատեղերի, ճանապարհների, գյուղերի ու քաղաքների, ինչպես նաև ամրությունների կառուցման մասին: Բնակավայրերի կառուցապատման և երկրի բարեգործման հարցերին արդեն իսկ մեծ ուշադրություն էր դարձվում հեղինակապետական Հայաստանում: Մինչև իսկ գյուղերն ու ագարակները չեն անտեսվել Արտաշես Բ-ի ժամանակ, որի թագավորության կազմի մեջ էր մտնում նաև Սյունյաց աշխարհը: Այդ մասին ուշագրավ վկայություններ են Սյունիքի հյուսիսում (Սևանա լճի ավազան) հայտնաբերված Արտաշես Բ-ի անունը կրող արամեաստառ մակագրություններով սահմանաքարերը: Այս տեսակետից, ուշադրության արժանի են խորհնացու հետևյալ տողերը. «Բոլոր անաբիտություններից և ճշմարիտ գործերից հետո Արտաշեսը հրամայում է գյուղերի և ագարակների սահմանները որոշել, որովհետև նա մեր երկիրը բազմամարդացրեց շատ ազգեր (ուրիշ երկրներից) բերելով, որոնց բնակեցրեց լեռներում, հովիտներում ու դաշտերում: Սահմանների համար նա նշաններ սահմանեց այսպես. հրամայեց տաշել քառակուսի ձևով քարեր, մեջերը պնակի նման փոսցնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ գետնից քիչ բարձր... բայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայաստանում անմշակ հող չմնաց, ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»⁶:

Բնակավայրերի կազմավորման դարգացման համար հսկայական նշանակություն

⁴ В. Б. Пиотровский, Л. Т. Гюзалкин, *Издаваемые памятники*, էջ 56:

⁵ В. Б. Пиотровский, «Ванское Царство», Москва, 1959, стр. 149.

⁶ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևան, 1961, էջ 213—214:

ունեցալ ճանապարհաշինարարությունը: Բացի ռազմական նպատակներ հետապնդելուց, տեղական իշխանավորներն ու պետությունը տնտեսական նպատակներ էին հետապնդում երկրի առանձին մասերը միավորելով հատուկ ճանապարհներով: Արքունական կոչվող ճանապարհներով ու պողոտաներով (մայրուղիներով) էին երթևեկում տեղական և միջազգային առևտրական քարավանները:

Խիստ կտրատված տեղանքի և այդ պայմաններում պաշտպանական նկատառումների պատճառով, Սյունիքում արտակարգ մեծ քաղաքներ չառաջացան: Նկատի ունենալով Սյունիքի բնական դիրքը և պատմական տեղեկությունների սակավությունը, որոշ հետազոտողներ թյուրիմացություն մեջ են ընկել համարելով, որ այս նահանգը թույլ կապեր է ունեցել Հայաստանի այլ վայրերի և մեծ ճանապարհների հետ, և դրա պատճառով իր թե՛ այնտեղ քաղաքները չեն զարգացել և կամ գահանիստները քաղաք չեն դարձել: Բարեբախտաբար գիտնականներից ոչ բոլորն են այդ կարծիքի: Ակադ. Հ. Մանանդյանը, այս տեսակետներին հակառակ, Ժ—ԺԱ դարերում ավանների արտակարգ զարգացման, Դրասխանակերտցու խոսքերով՝ «քաղաքացեալ աան»-ների իբրև օրինակ է բերում հենց պատմական Սյունիքի բնակավայրերից Բերդկունքը և Մաքենիսը, մատնացույց անելով երբեմնի բանով ճանապարհների վրա գտնվող աղատ քաղաքներ անվանված կամ համարված նրանց ընդարձակ ավերակները⁷։ Քաղաքների զարգացման այս տեսակետն են ունեցել Սարգիս եպիսկոպոս Զալալյանը, Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանը և Հ. Ղ. Ալիշանը: Վերահիշյալ թյուր կարծիքը ժխտում են նաև նյութական փաստերը:

Ուշադիր հետևելով այստեղ կատարված ճանապարհաշինական, տնտեսական-առևտրական հարցերին և մանավանդ առանձին բնակավայրերի զարգացմանը, կոտենենք, որ

միանգամայն՝ իրավացի է հետազոտողների այս վերջին խումբը: Հին ճանապարհների անձուկ լինելը բնավ էլ նշան չի կարող լինել աշխույժ երթևեկության բացակայության. լեռնային կտրտված տեղանքում առևտրական քարավանների համար պետք չէին լայն, հարթ և ուղիղ սայլուղիներ. գրաստների շարանը կարող էր անարգել անցնել նաև լեռնային ճանապարհներով: Կարող էր խուլ, ետ ընկած մի երկրի նախարարությունը առաջնակարգ դիրք զբաղել Տիգրանի և հայոց արքունիքներում. և կամ նրա հոգևորականությունը դեռևս Դ դարից դառնալ միտրոպոլիտություն: Երկրի սահմաններով անցնող միջազգային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհները, նրանց վրա առաջացած մեծ բնակավայրերը, բազմաթիվ հոյակերտ քարավանատներն ու կամուրջները նյութական փաստեր են ամենալայն տնտեսական կապերի գոյության մասին:


Բնակավայրերի ստեղծման, զարգացման և կառուցանալատման բնույթը մեծապես կախում է ունեցել Սյունիքի տեղիտորիայով անցնող ճանապարհներից: այդ հարցի պարզաբանման համար նախ տեսենք, թե ի՞նչպիսի գրավոր ճանապարհներ են եղել այնտեղ:

Սյունիքի տեղիտորիայով անցել են հիմնականում երեք, առևտրական տեսակետից բավականաչափ կարևոր ճանապարհներ: Հարավից անցնում էր Արաքսի ափամերձ ճանապարհը, որով երկիրը կապվում էր միջազգային կարևորագույն նշանակություն ունեցող ճանապարհների հետ և անմիջականորեն նախիջևանի, Թավրիզի և Պարտավի հետ: Երկրի հյուսիսային կողմով անցել է Դվին—Պարտավ ճանապարհը, որի ճյուղերից մեկը Շարուրի դաշտավայրից այժմյան Նորաշենի և Արենու (Արփա) վրայով, Արփա գետի աջափնյա սարահարթով բարձրացել է Սուլեմա գետի հովիտը և ապա Վայոց ձորի (Սելիմի) լեռնանցքը, որտեղից Արգիճի գետի հովիտով իջել լճափ. Կոթ քաղաքավանի մոտ միացել է Երևանի վրայով, Հրազդանի հովիտներով ու Գեղամա լճի արևմտյան ափով եկող մյուս ճյուղին. այնուհետև ընթացել լճի հարավային ափով մինչև հարավ-արևմտյան անկյունը և Վասակաշենի մոտ ճյուղավորվել Փառիսոսի լեռնանցքով դեպի Գանձակ և Թարթուրի հովիտով Պարտավ: Սա ևս կապված է եղել Առաջավոր Ասիայի մյուս ճանապարհների հետ: Բայց նրա միջազգային նշանակությունը կապված էր Պարտավի հետ, որը արաբական տիրապետության վարչական կենտրոնն էր Անդրկովկասում, Աղվանքի մայրաքաղաքը և միաժամանակ միջազգային խոշոր առևտրի կենտրոն, որ առևտուր կատարելու համար եկել են ամենաբազմազան երկրներից և

⁷ А. Ерицов, „Исторический очерк торговых путей сообщения в древнем Закавказье“, „Сборник светений о Кавказе“, том I, Тифлис, 1871 стр. 52.

⁸ Բ. Խ. Հակոբյան, «Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության», էջ 191.—Բ. Առախյան, «Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դ. դ., Երևան, 1958, էջ 89.—Ս. Մեացակյան, «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը», էջ 13:

⁹ Հ. Մանանդյան, «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940, էջ 8—9.—Նույնի «Հին Հայաստանի գրավոր ճանապարհները», Երևան, 1936, էջ 191:



Սելիմի բարավանատունը

անգամ Իրաքից ու Հնդկաստանից¹⁰։ Մոնղոլական տիրապետության ժամանակներում Սելիմի բարավանատան թանկարժեք վերականգնումը վկայում է ճանապարհի նշանակության մասին նաև արարական տիրապետությունից հետո։ Շատ ավելի վաղ ժամանակներում այդ ճանապարհի կարևոր նշանակության մասին են խոսում նաև Սուլեմա նշանավոր բերդի և մանավանդ բարավանատան գոյությունը դեռևս Դ—Ե դարերում¹¹։

Երրորդ ճանապարհը, որն իր նշանակությունը դիմում է առաջին երկուսին, անցնում է երկրի միջնամասով, Նախիջևանից Պարտավ ուղղությամբ։ Ծառապուրի (այժմ Ծառբուլ) վրայով այն բարձրանում է Սիսիանի (Բիշանակի) լեռնանցք, որտեղից իջնում է Որոտանի հովիտը և ապա անցնում Եռաբլուր և Տեղի սարահարթերով։ Այս ճանապարհի որոշ հատվածներ բարակույտերի և կարճ սյուների ձևով ուղենիշներ են ունեցել ձմռանը ձյան միջով մարդկանց երթևեկը դուրսանելու համար. դրանցից մի քանիսը առ այսօր

պահպանվել են¹²։ Սուլեմա բարավանատանը չզիջող ճարտարապետական արժեք ունեցող Ցալջի (Հարժիբի) բարավանատան կառուցումը նույնպես ցույց է տալիս այս ճանապարհի առևտրական նշանակությունը սոնդոնների տիրապետության ժամանակ։

Բացի դրանից, երկրի հյուսիսային շրջաններից մինչև հարավային ծայրակետը միացնող մի գլխավոր ճանապարհ է եղել, որն առանձին հատվածներով համընկել է տարանցիկ ճանապարհներին։ Այն Սևանա լճի ավազանից Վայոց ձորի լեռնանցքով իջել է Արփայի ավազան, թեքվել Դվին գնացող ճանապարհից և գետի հոսանքով ընթացել է վեր մինչև Որոտանի (Քոչքեկի) լեռնանցքը, այնտեղից իջել է Որոտանի ավազան, միացել Նախիջևանից Պարտավ գնացող ճանապարհին և Եռաբլուր սարահարթից հետո բաժանվել նրանից, ուղղվելով դեպի Չաղեձոր (Գորիս) և Թասի լեռնանցքով Արծվանիկ ու Կա-

¹⁰ Н. А. Кораулов, «Сведения арапских писателей о Кавказе, Армении и Адарбейджане. I Ал-Истахрий», «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXIX, 1901, стр. 9, 25.

¹¹ Հեղինակային կոլեկտիվ, «Սովետական Հայաստանի տեսարան վայրերը», Երևան, 1959, էջ 163—164։—

Ս. Օրբելեան, «Պատմություն նահանգին Սիրական», Թիֆլիս, 1911, էջ 263։—Զ. Նիվադարյան, «Ազդերևույթ շրջանի կուլտուրայի հուշարձանները», Երևան, 1955, էջ 75։

¹² Հեղինակային կոլեկտիվ, նշված աշխատությունը, էջ 184։—Մ. Հաբուրյունյան, «Միջնադարյան Հայաստանի բարավանատներն ու կամուրջները», Երևան, 1960, էջ 26—27։—Ս. Բաբխուրյան, «Դրվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, Երևան, 1960, էջ 81։

պան, այնտեղից, Ոխշի գետի հոսանքով վեր, մինչև Տաշտունի (Գիպաբլուի) լեռնանցքը, ապա Մեղրագետի ափով իջել է ցած, մինչև Մեղրի և Արաքսի ափամերձ ճանապարհը:

Այս հիմնական ճանապարհներից բացի, եղել են բազմաթիվ երկրորդական ճանապարհներ, որոնք կապել են երկրի այս կամ այն մասերն իրար հետ¹³:

Հետևելով գլխավոր ճանապարհների ընթացքին, նկատում ենք, որ բոլոր ավաններն ու քաղաքները գտնվում են այս ճանապարհների վրա կամ նրանց շատ մոտ գտնվող տեղանքում: Եվ ահա փաստական մի իրադրություն, որն արդյունք է երկրի տնտեսական վիճակի, մանավանդ արտադրական հարաբերությունների:

Դվին—Պարտավ ճանապարհի հյուսիսային ճյուղի վրա նշանավոր բնակավայրեր են եղել Բերդկունքը¹⁴, Նորատուս նավահանգիստը, Գեղաբունին (Գեղարքունի) կամ Գավառը (հետագայում Նոր-Բայազետ, այժմ Կամու) Կոթի մոտ ճանապարհի հյուսիսային և հարավային ճյուղերը միացել են: Հարավային ճյուղի վրա աչքի են ընկել Արփան կամ Աոփան (այժմ Արենի), Նոնգիսը (այժմ Ալափազ) և այլն: Ծանապարհի մնացած հատվածում հայտնի են Մաքենիսը կամ Ազատ քաղաքը, Վասակաշենն ու Սոթը կամ Սոդը (Զոդ): Ուշ միջնադարում նշանավոր է եղել նաև մելիքանիստ Մեծ Մազրա բնակավայրը:

Դվին—Պարտավ ճանապարհի վրա մեզ հայտնի հանգրվաններ են հանդիսացել նաև հյուսիսային ճյուղի վրա Երևանի և այժմյան Աթարբեկյան գյուղի քարավանատները, հարավային ճյուղի վրա Աղավնաձորի, Լեռնանցք (Աղբենտ) գյուղի և Սուլեմա քարավանատները, ճանապարհի մնացած հատվածի վրա՝ Զոդի լեռնանցքի և այժմյան Դաշբենտ գյուղի քարավանատները:

Նախիջևան—Պարտավ ճանապարհի վրա աչքի են ընկել Շաղատը, Անգեղակոթը, Սի-

սիանը, Ույծը, Աղուղին, ճանապարհից փոքր ինչ հեռու գտնվող Վաղադինը, Որոտանը, Ձագեձորը (Գորիս), Տեղը (Տեղից հետո ճանապարհը Շապուկի (Ջաբուղի) կամբընով ուղղվել է Արցախ—Պարտավ:

Նախիջևան—Պարտավ ճանապարհի վրա եղած քարավանատներից հայտնի են, բացի Նախիջևան քաղաքում եղածներից, Սիսիանի լեռնանցքի և Յայջիի (Հարժիբի) քարավանատները:

Արաքսի ափամերձ ճանապարհի վրա, հատկապես ուշ միջնադարում, զարգացել են Կարճևանն ու Մեղրին:

Հյուսիսից հարավ ընթացող ճանապարհի վրա նշանավոր են եղել Սոդ կայանը, Ակունքը (Բազարայ), Շաքին, Ձագեձորը, Կապանը, Տաշտունը և Մեղրին: Գեղարքունիքից մինչև Մեղրի ձիով վեց օրվա ճանապարհ է եղել, մինչև Բաղաբերդ՝ հինգ, մինչև Տաթև՝ չորս¹⁵: Այս ճանապարհների վրա եղել են զբոսավորապես միաթռիչք բազմաթիվ կամուրջներ, որոնցից մի քանիսը, օրինակ Սեդեղաձորինը, դեռ կանգուն են: Նրանց կառուցումը պատվավոր գործ համարվելով, մեծ մասամբ կառուցվել են ունևոր մարդկանց կողմից և այդ մասին թողնվել շինարարական արձանագրություններ խաչադձանների վրա:

Նախիբի ավանների ու քաղաքների մասին պատմական շնչին հիշատակություններից բացի ոչ մի նյութ չկա: աննշան ավերակներ որոշ չափով կարող են լրացնել այդ տեղեկությունները: Դժբախտաբար պեղումներ և ուսումնասիրություններ այդ ուղղությամբ գրեթե չեն կատարվել: Որոշ նյութ է տալիս հնատիպ գյուղերի մնացորդների ուսումնասիրությունը, քանի որ քաղաքների ու ավանների աշխատավորական թաղերը գյուղատիպ շենքերով են կառուցապատվել¹⁶:

(Շարունակելի)

¹³ Ս. Լիսիցյանի տեղեկությունների համաձայն, լեռնանցքների ստորին մասերում երկու կողմից եղել են սրբարաններ, ուր մարդիկ աղոթելիս են եղել հաջող ճամբորդության համար, որովհետև հատկապես ձմռանը երթեկը շատ դժվար է եղել և մարդիկ միայն քարավաններով են անցել (տե՛ս Ս. Դ. Лисецян, «Святини у перевалов», «Советская этнография», 1932, № 4—5):

¹⁴ Հնագետ Հ. Նղիադարյանի կարծիքով, այդ բնակավայրը, որն այժմ «Կարմիր խաբեբա» է կոչվում, Բերդկունքը չէ. վերջինս, նրա ասելով, գտնվում է Դվին—Պարտավ ճանապարհի հարավային ճյուղի վրա, Աղավնաձոր գյուղի մոտ:

¹⁵ Մեսրոպ Եպիսկոպոս Սմբատեանց, «Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի», Վաղարշապատ, 1895, էջ 424:

¹⁶ Սյունիքի գյուղերի մասին տե՛ս մեր հետևյալ աշխատությունները. ա) «Հայկական ժողովրդական ճարտարապետությունը Սևանա լճի ավազանում», Հայկական ՍՍՏ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1962, № 1. «Գլխատան ճարտարապետական կոմպլեքսը Նոնգիսում» և Աղիգրեկի վիլլա շրջաններում», «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1963, № 3. գ) «Սիսիանի, Գորիսի ու Ղափանի շրջանների ժողովրդական ճարտարապետության կառուցվածքները», Հայկական ՍՍՏ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1963, № 11:

ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

Երգ Աւետեաց, Մենդեան և Թլփատութեան:
Մեղեղիք Մենդեան և Յարութեան:
(Զեռագիրն ամբողջութեամբ գրված է հայերեն, բացի երկու տաղերից, որոնք գրված են հայատառ տաճկերեն):

Թ. 51բ.— Տաղ առ Սուրբ Աստուածածինն:
Թ. 52ա.— Այլ տաղ Աստուածածնայ թուրքի բառով:

(Վերոհիշյալ տաղերից, երգերից և մեղեղիներից բացի, կան նաև հետևյալ տաղերը, գրված հետևյալ հեղինակների կողմից):

Թ. 15ա.— Աւետիս Մենդեան ի Յոհաննէս արքեպիսկոպոսէ Սեբաստացոյ ասացեալ:

Թ. 41բ.— Այլ տաղ Սուրբ Աստուածածնի ասացեալ ի Կարապետ դպրէ:

Թ. 14ա.— Աւետիս Մենդեան Քրիստոսի. ասացեալ ի Յակոբ դպրէ Ղահրամանեան Սեբաստացոյ որպէս Ուլ գերարփին:

Թ. 19բ.— Տաղ Յարութեան ի Յակովբայ դպրէ Սեբաստացոյ Ղահրամանեան:

Թ. 22բ.— Տաղ Յարութեան ի Յակովբ դպրէ Ղահրամանեան Սեբաստացոյ ի գոյն Գոչէրին:

Թ. 29բ.— Տաղ Յարութեան ի Յակովբ դպրէ Ղահրամանեան, երգի որպէս Ուլ գերարփին:

Թ. 35բ.— Առ մայրն երանութեան զուարճախառն աղերսիւ ի Յակոբ դպրէ Սեբաստացոյ Ղահրամանեան, որ ասի Տաղ էր ի գոնովն (ՌՄՂ-ին=1841 թ.):

Յորդորակ տաղիս ի Յակոբ դպրէ:

Թ. 43բ.— Երգ աղերսախառն առ մայրն Յիսուսի, ի Յակովբ վարժէ Ղահրամանեան, վասն ախտիցն մարմնական և բուժելոց հիւանդութեանց:

Թ. 46ա.— Տաղ Սուրբ Աստուածածնայ Յակովբ վարժէ Ղահրամանեան ի գոյն Յեթնի:

Թ. 57ա.— Տաղ Խաչի և աղերս առ նա ի Յակովբ դպրէ Ղահրամանեան Սեբաստացոյ զունով Կերպարանին ասացեալ յաւորս Երեման Խաչին (ՌՄՂ-ին=1841 թ.):

Յորդորակ տաղիս ի Յակովբ դպրէ:

Թ. 68ա.— Առ Մանկունս Քառասնից ի Յակոբ դպրէ բանս այս (տունք 33):

(Նմուշի համար ստորև տրվում է Հակոբ դպրի մի տաղն ու մի երգը):

Թ. 22բ.— Տաղ Յարութեան ի Յակոբ դպրէ Ղահրամանեան Սեբաստացոյ ի գոյն Գոչէրին:

Երկինք երկրա՝ այսօր ցընծաՅ,
Եկեղեցիս փառօք՝ պանծայ,
Զի յարութեամբ՝ զառհաւատեալ,
Եցոյց մեզ Տէր՝ Յիսուս արքայ:

Բարունաբար՝ ձայնիւ երգեԱ,
Սրօքէականըն՝ բարբառեա,
Երգես օրհնութեանըն նուագեա,
Թէ Տէրն յերկնից՝ յարեա ահա:

Գոչէր լուսափայլ՝ հրեշտակ,
Տեսեամբն ահեղ՝ և փայլունակ,
Պատմէր առնելն՝ անապակ,
Հասեալ լուրն այն՝ ի կողմն բառեալ:

Ի լըսելիսըդ՝ բում մատո
Ի բաց վանեա զտրտմութիւն քո,
Քանզի յարեա՝ Աստուածըն քո,
Ի վեր հայիլ՝ զալըս դարձո:

Զէ հառաջօք ինչ սա տեսեամբ,
Որ արդ զնեա դու զարմացմամբ,
Այլ սոսկալի իւրոյ մահուամբ,
Յարեա այսօր սաստիկ հընչմամբ:

(Ինչպես երևում է, հինգ տների առաջին և վերջին տառերը վերևից ներքև կարդացվում են «Երգիչ Յակոբ»):

Թ. 43բ.— Երգ աղերսախառն առ Մայրն Յիսուսի. ի Յակովբ վարժէ Ղահրամանեան, վասն ախտիցն մարմնական և բուժելոց հիւանդութեանց:

Յիսուսի Մայր՝ դու Վարդագեղ,
Ամէնօրհնեալ՝ և հրաշագեղ,
Սակս Որդոյդ անուանն ահեղ,
Տուր ինձ անբուժ վիրացըս դեղ:

Անկասելի՝ ակն Ապաստան,
Դեղոց ծաղկանց՝ ես բուրաստան.
Որք մեծ յուսով՝ ի քեզ անկան,
Յոլով յաղտից՝ աղատ զըտան:

Կամիս ի կեանս՝ հոյլք Բոպէից,
Մախթիլ ցաւոցս՝ դեղ ամենից.
Ի ծաղկախիթ՝ բուրաստանից,
Մաքրել բուժիչ՝ ի շար ախտից:

Ուստի գտար դու՝ ժրաջան,
Բուժիչ ճարտար՝ յերկրիս տաժան.
Զերկունըս Մօրն՝ լըվղըրան,
Բարձեր քոյով՝ Սուրբ ծննդեան:

Վիրօք եօթամբբ՝ Զարշարեցեալ,
Վէրս յաշխարհէս՝ համայն բարձրեալ.
Ազգ մարդկային՝ ի քեզ անկեալ,
Առ գթած Մայրդ՝ ապաւինեալ:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № 8 և 9-ից, 1965 թվականի № 1-ից:

Բարեխօսել՝ առ էնն Որդի,
Բառնալ ըզցաւրս աշխարհի.
Ձանկեալս մեղօք՝ յախտ ցաւալի,
Ողջացուցենս՝ վաղվաղակի:

(Ինչպես երևում է, վեց տներին առաջին տողերի առաջին տառը, ինչպես նաև առաջին տողերի վերջին բառի առաջին տառը վերևից ներքև կարդացվում է «Յակոբ վառժէ»):

№ 236

ՏԱՂԱՐԱՆ

Քերթեր՝ 56:— Պրակներ՝ 7, յուրաքանչյուրը 8-ական թերթից:— Մեծալոյսներ՝ 18×11×0,5 սմ.:— Նյութը՝ սպիտակ բարակ թուղթ:— Կազմը՝ շունի:— Պաշտպանակներ՝ շունի:— Վիճակը՝ բավարար, սակայն պրակները մեկը մյուսից անջատվել են:— Գրութային միասլուն:— Դատարկ թղթեր՝ 1ա—3ա, 8բ, 12ա, 41ա:— Տողեր՝ անկանոն, 16—24:— Գծումներ՝ ճշումով:— Գիրք՝ նոտագիր:— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի այբուբենի երկու աղյուսակ (թ. թ. 3բ և 41բ) և մի հատ ամբողջ էջի ծավալով նկար (թ. 12բ), որ ներկայացնում է քառասուն մանուկները, Կան երկու զարդագիր (թ. թ. 4ա և 13ա) և հինգ թռչնագիր (թ. թ. 19ա, 31ա, 37ա և 42ա): Ձեռագիրն ունի երեք գլխազարդ (թ. թ. 4ա, 13ա և 42ա) և վեց վերջնազարդ: Թ. 29բ-ում կա Սիմեոն ծերունու և Հիսուսի նկարը, իսկ թ. 56բ-ում՝ Մարիամ Աստվածածնի և Հիսուսի նկարը:— Գրիչը՝ Հակոբ դպիր Ղահրամանյան Սեբաստացի:— Պատվիրատուն՝ անհայտ:— Մաղկողը՝ շատ հավանաբար նույնինքն Հակոբ դպիր:— Ժամանակը՝ 1854 թ.:— Վայրը՝ Սեբաստիա, Ղահրամանյան վարժարան:— Մանրություն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Ամերիկայից՝ Տիկին Երվանդուհի Ասատուրյանի կողմից, 1964 թվականի հունվար ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3բ.— Ձայս բան Յակոբ դպրէ ոգեալ,
ի ձեռս մանկանց դպրոց տուեալ:
Առ ի սբօսնուլ զայս արարեալ,
Որ և անուամբ վիճակ հոշեալ:
Բայց ըզսոցայն չարն և բարին,
Միայն գաղտնեաց գիտողին

յայտնեալ:

(36 տուն ոտանավոր, այբուբենի տառերով սկսվող):

Թ. 9ա.— Ներբողումն առ Աստուածընկալ Սուրբ Նշանն, որ ի վանս Սեբաստիոյ: (11 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Ղազարոս դպիր»):

Թ. 10ա.— Բան մախթողական առ Փրկիչն իմ Յիսուս Քրիստոս: (11 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբ դպրէ է»):

Թ. 11ա.— Առ Հոգին Սուրբ բան մախթանաց: (11 տուն ոտանավոր):

Թ. 13ա.— Առ Մանկունս Քառասնից ի Յակոբ Դպրէ է բանս այս (տունը 33): (33 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Առ Մանկունս Քառասնից ի Յակոբ դպրէ բանս»):

Թ. 17ա.— Տունը ըստ թուոց ամացն Յիսուսի, որ շրջեցաւ ի մէջ աշխարհի:

Թ. 18ա.— Բան ի Յակոբ Դպրէ Ղահրամանեան Սեբաստացոյ յորդորական մեր ազգին վերայ: (10 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբ դպրէ է»):

Թ. 19ա—23ա.— (50 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են):

«Նշան բեմական,
Խաչ տէրունական,
Լեւ մեզ օգնական,
Մինչ ի յախտեան»:

Թ. 23բ.— (11 տուն ոտանավոր):

Թ. 25ա.— ՌՅԳ: Երգ ի վերայ նոր տարոյս Հայոց որ յաւուր նաւասարդի 1: Ոգեալ Յակոբ վառժէ Ղահրամանեան Սեբաստացոյ գունով Յեթնէնի: (13 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբէն է նոր ամս»):

Թ. 27ա.— Բան ի դէմս նոր աղանդաւորացոյ բրուդոտանց, ի Յակովբայ դպրէ Սեբաստացոյ Ղահրամանեան: (31 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբէ է բանս այս ի դիմաց աղանդաւորաց»):

Թ. 30ա.— Մոլար քարոզիչի մը գրութեանը դէմ սակաւ ինչ բան...

Թ. 31ա.— Բան վասն առման եկեղեցւոյն Լուսաւորչին մերոյ և անկման ի ձեռն տաճկաց երկնանման խորանացն, վասն անմիաբանութեան մերոյ որ ի քաղաքն Սեբաստիոյ, ի Յակոբ Դպրէ Ղահրամանեան: (20 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Ղաւարուք ով ազգ Արամեան», որ ներկայացնում է ոտանավորի առաջին տողը միեւնոյն ժամանակ):

Թ. 33ա.— Եւս նորին. վասն էակաց և առաքինութեանց գլխաւորաց: Հարց...

Թ. 37ա.— Բան խրատական ի դէպրս նորաբոյս մանկանց եկեղեցւոյն Հայաստանեաց ի դիմաց այբուբենից տառից չափեալ տոբը յօրինեալ, ի Ղահրամանեան Յակոբ դպրէ Սեբաստացոյ: (36 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են այբուբենը):

Ք. 40ա.— Սակաւ ինչ բան աղերսանաց առ Փրկիչն իմ:

Ք. թ. 42ա—51բ.— Արձակ դրված աղոթք, 36 գլուխ, որի յուրաքանչյուր գլուխն սկսում է այբուբենի տառերով:

Ք. 52ա.— Բան խրատական՝ առ եղբարս վարժարան. և աղերս առ հոգին Սուրբ Աստուած:

Ք. 52բ.— Ի օրհասակի աղօթից ժամուն երգեն մանքունք վարժարանի դաս առ դաս քաղցր եղանակաւ:

Ք. 53ա.— Հարցմունք և պատասխանիք ինչի վերայ հարկաւորաց վասն դեռաւորոյ մանկանց Սեբաստիոյ, ի Յակովբ Դպրէ Ղահրամանեան... նախ այսպէս...

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 17բ.— Արդ աղաչեմ յիշել զանուն նուաստիս.

Հիւսող բանիս Ղահրամանեան Յակովբիս: Ի 3-րն յունվարի 1843, որ ի Սեբաստիայ քաղաքն մեծ, ի վարժարանն Ղահրամանեան Յակովբ դպրի...

Ք. 18բ.— Գրեալ ի վարժարանն Ղահրամանեան ի Յակովբ դպրէ...ի 1843:

Ք. 26բ.— Սակաւ այս բանս որ եղան, Յակովբ վարժէ գրեցան:

Ք. 36բ.— Գրեալ ի վարժարանն Ղահրամանեան Յակովբ վարժչի Սեբաստիոյ, ի 1854:

№ 237

ԲԱՌԱՐԱՆ

(Արաբերեն)

Քերբեր՝ 300:— Պրակներ՝ անկանոն և անհամաչափ:— Մեծութուն՝ $23,2 \times 17 \times 4,7$ սմ.:— Նյութը՝ դեղնած և խոնացած դիմացկուն, ողորկ թուղթ:— Կազմը՝ կաշեկազմ ստվարաթուղթ, որի երկու երեսներն վրա ճնշումով զարդեր են նկարված: Ձեռագիրը գրված է հաստ և դիմացկուն ստվարաթղթից շինված մի սրճագույն տուփի մեջ, որի չափերն են $26,2 \times 19,1 \times 6,3$ սմ.: Վրան գրված է 14 թիվը: Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ բավարար, սակայն որոշ թերթեր հետ ու առաջ են ընկել: Տեղ-տեղ պակասավոր:— Գրությունը՝ միասուն:— Դատարկ քղերը՝ 83ա և 103բ:— Տաղերը՝ անհամաչափ, 2—18:— Գծումները՝ առանց ճշման:— Գիրը՝ արաբական նասիխ տառեր:— Զարդագրություն՝ չունի: Տեղ-տեղ որոշ բառեր և տառեր գրված են կարմիր գույնով, ըստ երեսուրթին ընդգծելու համար:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ ժԸ—ԺԹ դարեր:— Վայրը՝ հավանաբար Եգիպտոս:— Մանրանկարները՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեի Առաջնորդարանից՝ Վեհափառ Հայրապետի միջոցով 1963 թվականի նոյեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Կազմի առաջին երեսի կոնակի վրա գրված է. (արաբերեն) 22 դրուշ (հայերեն) թիւ 14—1954:

№ 238

ԱԻՆՏԱՐԱՆ

Քերբեր՝ 362 (361+թ. 87ա):— Պրակներ՝ 31, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները.— Լ՝ 4, Ը, ԺԳ և ԻԳ՝ 11, ԻԹ՝ 14 թերթից:— Մեծություն՝ $20,1 \times 16 \times 8$ սմ.:— Նյութը՝ դեղնած, դիմացկուն, ողորկ, հաստ թուղթ:— Կազմը՝ կաշեկառ ստվարաթուղթ, ժամանակին ունեցել է երկու բռնիչ և առաջին երեսի վրա մի մեծ խաչ, հավանաբար մետաղյա, սակայն հետագայում ընկել են: Ձեռագիրը գրված է հաստ և դիմացկուն ստվարաթղթից շինված սրճագույն տուփի մեջ, որի չափերն են $22,7 \times 17,5 \times 10,2$ սմ.: Վրան գրված է 11 թիվը:— Պահպանակներ՝ սկզբում և վերջում մեկական թերթ դեղնած մագաղաթ, լեղուն՝ լատիներեն, տեքստը՝ Ամենաբան, ժամանակը՝ հավանաբար ԺԳ—ԺԻ դարեր, գրությունը՝ երեք սյունակ (սկզբնական լատիներեն զբաղիքը եղել է երկսյուն, որով պահպանվել է միայն մեկուկես թերթ: 4-րդ սյունակի միայն ծայրը երևում է): Գլխատառերը գրված են կարմիր կամ կապույտ զարդագրերով:— Վիճակը՝ բավարար, Զարդործ մի ձեռք տեղ-տեղ սրիշով կտրատել է որոշ թերթեր և զարդանկարներ:— Գրությունը՝ երկսյուն:— Դատարկ քղերը՝ 1, 12—14, 357—361:— Տաղերը՝ 21:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ բուրգիկ:— Զարդագրություն՝ զբաղիքը սկզբում ունի տասը թերթ (թ.թ. 2բ—11ա) համարաբարանների համար խորաններ, որտեղ սակայն գրությունն ու ցանկերը չեն գրված: Ձեռագրում կան նաև բավական սիրուն շորս այլ խորաններ (թ.թ. 18ա, 105ա, 171ա և 281ա), նույն թերթերում շորս մեծ լուսանցազարդեր, թռչնազարդ և զարդագրեր: Ձեռագիրն ունի նաև բազմաթիվ թռչուններ, ծաղիկներ, լուսանցազարդեր, թռչնազարդ և զարդագրեր: Առանցից բացի կա նաև մի զարդագիր մարդկային դիմագծով (թ. 171ա), Ամենուրեք օգտագործված են միայն կարմիր ու կապույտ գույները:— Գրիչը՝ Մանասե:— Պատվիրատուն՝ անհայտ:— Մաղկոդը՝ անհայտ:— Ժամանակը՝ ԺԵ—ԺԶ դարեր:— Վայրը՝ անհայտ:— Մանրանկարները՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեի Առաջնորդարանից՝ Վեհափառ Հայրապետի միջոցով 1963 թվականի նոյեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 356բ.— Մեղա՛յ Տէր, մեղա՛յ, Մանասէի ձայնիւ գոչեմ, ընկալ զիս, մարդասէր, ընդ երանելեայցն, որոց թողան և ծածկեցան յանցանքն, աղաչեմ:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 1ա.— Թիւ 11 (նույնը և թ. 2ա-ում):

Ք. 361ա.— Նայ եղիցի մեզ պահապան:

Բարեխօսել՝ առ էնն Որդի,
Բառնալ ըզցաւրս աշխարհի.
Զանկեալս մեղօք՝ յախտ ցաւալի,
Ողջացուցես՝ վաղվաղակի:

(Ինչպէս երևում է, վեց տներին առաջին տողերի առաջին տառը, ինչպէս նաև առաջին տողերի վերջին բառի առաջին տառը վերևից ներքև կարդացվում է «Յակոբ վարժէ»):

№ 236

ՏԱՂԱՐԱՆ

Քերթեր՝ 56:— Պրակներ՝ 7, յուրաքանչյուրը 8-ական թերթից:— Մեծաբայունը՝ $18 \times 11 \times 0,5$ սմ.:— Նյութը՝ սպիտակ բարակ թուղթ:— Կազմը՝ շունի— Պանդանակներ՝ շունի— Վիճակը՝ բավարար, սակայն պրակները մեկը մյուսից անջատվել են:— Գրությունը՝ միասուն:— Դատարկ թղթեր՝ 1ա—3ա, 8բ, 12ա, 41ա:— Տողեր՝ անկանոն, 16—24:— Գծումներ՝ ճշշումով:— Գիրը՝ նոսրգիր:— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի այբուբենի երկու աղյուսակ (թ. թ. 3բ և 41բ) և մի հատ ամբողջ էջի ծավալով նկար (թ. 12բ), որ ներկայացնում է քառասուն մանուկները, Կան երկու զարդագիր (թ. թ. 4ա և 13ա) և հինգ թռչնագիր (թ. թ. 19ա, 31ա, 37ա և 42ա): Զեռագիրն ունի երեք գլխազարդ (թ. թ. 4ա, 13ա և 42ա) և վեց վերջնազարդ: Թ. 29բ-ում կա Սիմեոն ծերունու և Հիսուսի նկարը, իսկ թ. 56բ-ում՝ Մարիամ Աստվածածնի և Հիսուսի նկարը:— Գրիչը՝ Հակոբ դպիր Ղահրամանյան Սեբաստացի:— Պատվիրատուն՝ անհայտ:— Մաղկոդը՝ շատ հավանաբար նույնինքն Հակոբ դպիր:— Ժամանակը՝ 1854 թ.:— Վայրը՝ Սեբաստիա, Ղահրամանյան վարժարան:— Մանրությունը՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Ամերիկաբնակ Տիկին Երվանդուհի Ասատուրյանի կողմից: 1964 թվականի հունվար ամսին:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3բ.— Զայս բան Յակոբ դպրէ ոգեալ,
ի ձեռս մանկանց դպրոց տունալ:
Առ ի սբօսնուլ զայս արարեալ,
Որ և անուամբ վիճակ հոշեալ:
Բայց ըզսոցայն շարն և բարին,
Միայն գաղտնեաց գիտողին

յայտնեալ:

(36 տուն ոտանավոր, այբուբենի տառերով սկսվող):

Թ. 9ա.— Ներբողումն առ Աստուածընկալ Սուրբ Նշանն, որ ի վանս Սեբաստիոյ: (11 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Ղազարոս դպիր»):

Թ. 10ա.— Բան մախթողական առ Փրկիչն իմ Յիսուս Քրիստոս: (11 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբ դպրէ է»):

Թ. 11ա.— Առ Հոգին Սուրբ բան մախթանաց: (11 տուն ոտանավոր):

Թ. 13ա.— Առ Մանկունս Քառասնից ի Յակոբ Դպրէ է բանս այս (տունը 33): (33 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Առ Մանկունս Քառասնից ի Յակոբ դպրէ բանս»):

Թ. 17ա.— Տունը ըստ թուոց ամացն Յիսուսի, որ շրջեցաւ ի մէջ աշխարհի:

Թ. 18ա.— Բան ի Յակոբ Դպրէ Ղահրամանեան Սեբաստացոյ յորդորական մեր ազգին վերայ: (10 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբ դպրէ է»):

Թ. 19ա—23ա.— (50 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են):

«Նշան բեհական,
Խաչ տէրունական,
Լեռ մեզ օգնական,
Մինչ ի յայիսեան»:

Թ. 23բ.— (11 տուն ոտանավոր):

Թ. 25ա.— ՌՅԳ, Երգ ի վերայ նոր տարոյս Հայոց որ յաւուր Նաւասարդի 1: Ոգեալ Յակովբ վարժէ Ղահրամանեան Սեբաստացոյ գունով Յեթնէնի: (13 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբէն է նոր ամս»):

Թ. 27ա.— Բան ի դէմս նոր աղանդաւորացի բրուդոտանց, ի Յակովբայ դպրէ Սեբաստացոյ Ղահրամանեան: (31 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Յակոբէ է բանս այս ի դիմաց աղանդաւորաց»):

Թ. 30ա.— Մոլար քարոզիչի մը գրովթեանը դէմ սակաւ ինչ բան...

Թ. 31ա.— Բան վասն անման եկեղեցւոյն Լուսաւորչին մերոյ և անկման ի ձեռն տաճկաց երկնաման խորանացն, վասն անմիաբանութեան մերոյ որ ի քաղաքն Սեբաստիոյ, ի Յակոբ Դպրէ Ղահրամանեան: (20 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Լուսաւորւմ յազգ Արամեան», որ ներկայացնում է ոտանավորի առաջին տողը միեւնոյն ժամանակ):

Թ. 33ա.— Եւս նորին. վասն էական և առաքինութեանց զխաւորաց: Հարց...

Թ. 37ա.— Բան խրատական ի դէպքս նորարոյս մանկանց Եկեղեցւոյն Հայաստանեաց ի դիմաց այբուբենից տառից չափեալ ոտիւք յօրինեալ, ի Ղահրամանեան Յակոբ դպրէ Սեբաստացոյ: (36 տուն ոտանավոր, որի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են այբուբենը):

Թ. 40ա.— Սակաւ ինչ բան աղերսանաց առ Փրկիչն իմ:

Թ. Բ. 42ա—51բ.— Արձակ գրված աղոթք, 36 գլուխ, որի յուրաքանչյուր գլուխն սկսում է այբուբենի տառերով:

Թ. 52ա.— Բան խրատական՝ առ եղբարս վարժարան. և աղերս առ հոգին Սուրբ Աստուծո:

Թ. 52բ.— Ի օրհասակի աղօթից ժամուն երգեն մանքունք վարժարանի դաս առ դաս բաղցր եղանակաւ:

Թ. 53ա.— Հարցմունք և պատասխանիք ինչ ի վերայ հարկաւորաց վասն դեռաբոյս մանկանց Սեբաստիոյ, ի Յակովբ Դպրէ Ղահրամանեան... նախ այսպէս...

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 17բ.— Արդ աղաչեմ լիշել զանուն նուաստիս.

Հիւսող բանիս Ղահրամանեան Յակովբիս: Ի 3-րն յունվարի 1843, որ ի Սեբաստիայ բաղաքն մեծ, ի վարժարանն Ղահրամանեան Յակոբ դպրի...

Թ. 18բ.— Գրեալ ի վարժարանն Ղահրամանեան ի Յակոբ դպրէ...ի 1843:

Թ. 26բ.— Սակաւ այս բանս որ եղան,

Յակովբ վարժչէ գրեցան:

Թ. 36բ.— Գրեալ ի վարժարանն Ղահրամանեան Յակովբ վարժչի Սեբաստիոյ, ի 1854:

№ 237

ԲԱՌԱՐԱՆ

(Արաբերեն)

Թերթերը՝ 300:— Պրակները՝ անկանոն և անհամաչափ:— Մեծությունը՝ $23,2 \times 17 \times 4,7$ սմ.:— Նյութը՝ զեղնած և խոնացած դիմացկուն, ողորկ թուղթ:— Կազմը՝ կաշեկազմ ստվարաթուղթ, որի երկու երեսներն իրա ճնշումով զարդեր են նկարված: Ձեռագիրը գրված է հաստ և դիմացկուն ստվարաթղթից շինված մի սրճագույն տուփի մեջ, որի չափերն են $26,2 \times 19,1 \times 6,3$ սմ.: Վրան գրված է 14 թիվը: Պաճապանակներ՝ չունի:— Վիճակը՝ բավարար, սակայն որոշ թերթեր հետ ու առաջ են ընկել: Տեղ-տեղ պակասափոր:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ քրքրեր՝ 83ա և 103բ:— Տողերը՝ անհամաչափ, 2—18:— Գծումները՝ առանց ճնշման:— Գիրը՝ արաբական նասխի տառեր:— Զարդագրություն՝ չունի: Տեղ-տեղ որոշ բուռեր և տառեր գրված են կարմիր գույնով, ըստ երևույթին ընդգծելու համար:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ ԺԸ—ԺԹ դարեր:— Վայրը՝ հավանաբար եգիպտոս:— Մանրությունը՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեի Առաջնորդարանից Վեհափառ Հայրապետի միջոցով 1963 թվականի նոյեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻԹՅՈՒՆ

Կազմի առաջին երեսի կոնակի վրա գրված է: (արաբերեն) 22 դրուշ (հայերեն) թիւ 14—1954:

№ 238

ԱՌԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 362 (361+Բ. 87ա):— Պրակները՝ 31, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները:— Ը՝ 4, Ը՝ ԺԳ և ԻԳ՝ 11, ԻԲ՝ 14 թերթից:— Մեծությունը՝ $20,1 \times 16 \times 8$ սմ.:— Նյութը՝ զեղնած, դիմացկուն, ողորկ, հաստ թուղթ:— Կազմը՝ կաշեկազմ ստվարաթուղթ: Ժամանակին ունեցել է երկու բռնիչ և առաջին երեսի վրա մի մեծ խաչ, հավանաբար մետաղյա, սակայն հետագայում ընկել են: Ձեռագիրը գրված է հաստ և դիմացկուն ստվարաթղթից շինված սրճագույն տուփի մեջ, որի չափերն են $22,7 \times 17,5 \times 10,2$ սմ.: Վրան գրված է 11 թիվը:— Պաճապանակներ՝ սկզբում և վերջում մեկական թերթ զեղնած մազաթ, լեզուն՝ լատիներեն, տեքստը՝ Ավետարան, ժամանակը՝ հավանաբար ԺԳ—ԺԹ դարեր, գրություններ՝ երեք սյունակ (սկզբնական լատիներեն գրագիրը եղել է երկսյուն, որով պահպանվել է միայն մեկուկես թերթը: 4-րդ սյունակի միայն ծայրը երևում է): Գլխատառերը գրված են կարմիր կամ կապույտ զարդագրերով:— Վիճակը՝ բավարար, Չարագործ մի ձեռք տեղ-տեղ սրիշով կտրատել է որոշ թերթեր և զարդանկարներ:— Գրությունը՝ երկսյուն:— Դատարկ քրքրեր՝ 1, 12—14, 357—361:— Տողերը՝ 21:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ բուրգրի:— Զարդագրություն՝ զրազիրը սկզբում ունի տասը թերթ (Բ.Բ. 2բ—11ա) համարաբանների համար խորաններ, որտեղ սակայն գրությունն ու ցանկերը չեն գրված: Ձեռագրում կան նաև բալթական սիրուն շորս այլ խորաններ (Բ.Բ. 18ա, 105ա, 171ա և 281ա), նույն թերթերում շորս մեծ լուսանցազարդեր, թունագրեր և զարդագրեր: Ձեռագիրն ունի նաև բազմաթիվ թաղանթներ, ծաղիկներ, լուսանցազարդեր, թունագրեր և զարդագրեր: Սրանցից բացի կա նաև մի զարդագիր մարդկային դիմագծով (Բ. 171ա): Ամենուրեք օգտագործված են միայն կարմիր ու կապույտ գույները:— Գրիչը՝ Մանասե:— Պատվիրատուն՝ անհայտ:— Մաղկոդը՝ անհայտ:— Ժամանակը՝ ԺԸ—ԺԶ դարեր:— Վայրը՝ անհայտ:— Մանրությունը՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեի Առաջնորդարանից Վեհափառ Հայրապետի միջոցով 1963 թվականի նոյեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 356բ.— Մեղա՛յ Տէր, մեղա՛յ, Մանասէ՛ի ձայնիւ գոչեմ, ընկալ զիս, մարդասէր, ընդ երանելեայցն, որոց թողան և ծածկեցան յանցանքն, աղաչեմ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Թիւ 11 (նույնը և Բ. 2ա-ում):

Թ. 361ա.— Նայ եղիցի մեզ պահապան:

№ 239

ԱՌԵՏԱՐԱՆ

(Հաբեշերեն)

Թերթերը՝ 69:— Պրակները՝ 8, յուրաքանչյուրը 8-ական թերթից, ի բաց առյալ 8 պրակը 10 թերթից և Ը պրակը՝ թերթից:— Մեծուրյունը՝ 18,8×15,4×4 սմ:— Նյութը՝ դեղնած և խունացած հաստ ու կոշտ մազաղաթ:— Կազմը՝ հաստ տախտակ, 0,7—0,9 սմ. լայնքով, առջևում և վերջում, որոնք թելով ամրացված են ձեռագրի պրակների հետ: Ձեռագիրը դրված է հաստ և դիմացկուն ստվարաթղթից շինված սրճագույն մի տուփի մեջ, որի շափերն են 21,7×16,9×5,7 սմ:— Վրան գրված է 13 թիվը:— Պաճապանները՝ սկզբից շորս թերթ դեղնած և խունացած հաստ, կոշտ մազաղաթ:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ երկսյուն:— Դատարկ քրքրեր՝ 1—4:— Տղերը՝ անհամաչափ, 12—17 տող:— Գծումները՝ ճշշումով:— Գիրը՝ հաբեշերեն:— Զարդագրություն՝ չունի, միայն, որոշ վերնագրեր և գլխատուներ կարմիր թանաքով են գրված:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ հավանաբար ԺԴ—ԺԵ դարեր:— Վայրը՝ շատ հավանաբար Եթովպիա:— Մանրությունը՝ հաբեշերեն սուրճ ձեռագիրը շատ հավանաբար Ադդիս-Աբեբայի բնակիչ մի հայ ազգային 1954 թվականին նվիրել է եգիպտահայոց առաջնորդ Ս. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանին, որ հետը տարել է Եգիպտոս և նվիրել Կահիրեի առաջնորդարանի Թորգոմյան մատենադարանին: Ապա սույն ձեռագիրը Կահիրեի առաջնորդարանից նվիրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատան, Վեհափառ Հայրապետի միջոցով, 1963 թվականի նոյեմբեր ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռագիրը Ավետարան է:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թվում է, թե թ. 69-ում եղած գրությունը ձեռագրի հիշատակարանն է, որ կարճ չեղավ վերծանել:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Թիւ 13, 1954:

Թ. 4ա.— (Գրված է բոլորգիր մեծատառերով):

Աննման մօրս Տիկին Վարդուհի Սիրունյանի, ծնեալ Ապաճեան, բաղքը և անմոռաց յիշատակին ներկայ հապէշական մազաղաթեայ ձեռագիրս կը նուիրեմ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի Թորգոմեան մատենադարանին:

Գահիրէ, 1954, յունիս 10:

Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեան Կազմի առաջին երեսի կոնակում կացված է մի ծրար, որի մեջ կա նամակի մի թուղթ: Մի երեսում կա իտալերեն մակագրություն:

(Ապա ձեռագիր հայերեն գրված է հետևյալը):

Մամբրէ արքազանին:

(Սույն թուղթը ցույց է տալիս, որ ձեռագիրը Ս. Մամբրե արքազանին է ուղարկված Եթովպիո Դեսիյն ավանից, որ գտնվում է Ադդիս-Աբեբայից շուրջ 250 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք):

Վերոհիշյալ թղթի հակառակ կողմում կա 35 տողանոց հաբեշերեն մի գրություն, որ հավանաբար վերաբերում է սույն գրչագիր Ավետարանի պատմության:

Կազմի երկրորդ երեսի կոնակում գրված է հայերեն՝ «Թիւ 13»:

Կազմի արտաքին երկու երեսների վրա հաբեշերեն գրված է մեկ-երկու բառ:

№ 240

ԱՌԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 330:— Պրակները՝ 28, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ ԻԶ՝ 10, Ա, Զ, ԺԲ, ԺԳ, ԺԴ և ԻԷ՝ 11-ական, Ա և ԻԱ՝ 14-ական թերթից:— Մեծուրյունը՝ 18,3×12,2×5,5 սմ:— Նյութը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն ողորկ թուղթ:— Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ, կոնակը և անկյունները կաշու: Կազմի առջևի մասը պոկվել է, իսկ հետևի մասը ընկել է: Առջևի մասի վրա ճշշումով մի փոքր խաչ է նկարվել: Կոնակի կաշու մի մասը պոկվել, իսկ վրան ոսկեգույն գրվել է «NEW TESTAMENT—A—11—1635»: Պաճապանները՝ սկզբից շատ հասարակ սպիտակ թուղթ, իսկ վերջից 11 թուղթ:— Վիճակը՝ բավարար, տեղ-տեղ ցեցակներ, պակաս թերթեր շատ կան, որոնք հետագայում ամբողջացվել են: Ձեռագիրը հետագայում վերանորոգվել է, սակայն որոշ թերթեր հետ ու առաջ են կազմվել:— Գրությունը՝ երկսյուն:— Դատարկ քրքրեր՝ Թ. Թ. 1ա—8ա, 9բ, 10բ, 11ա, 12բ, 13ա, 14բ—16ա, 107ա, 165ա, 252բ—254ա, 317ա, 318ա, 318բ, 319բ—330բ:— Տղերը՝ 21:— Գծումները՝ ճշշումով:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրություն՝ ձեռագրի ունի բավական սիրուն զարդագրություն: Կան վեց հատ ամբողջական էջի մեծությամբ նկարներ, 3-ը շատ սիրուն՝ Թ. Թ. 16բ, 317բ և 319ա, իսկ մնացյալ 3-ն էլ հասարակ՝ Թ. Թ. 107բ, 165բ և 254բ, որոնք նկարված են հետագայում: Ձեռագիրն ունի բազմաթիվ սիրուն (և հասարակ, որոնք հետագայում են նկարված, պակասած թերթերը ամբողջացնելու համար) խորաններ և կիսախորաններ, ծառեր և ծաղիկներ, թռչուններ և կենդանիներ, խաչեր և զմբեթներ, համաբարբառներ և լուսանցազարդեր, զարդագրեր և թռչնագրեր: Ձեռագիրն ունի նաև հասարակ մի հատ զազանագիր (Թ. 166ա) և մի հատ էլ միացյալ մարդագիր և զազանագիր (Թ. 108ա): Բոլոր սույն հասարակ նկարներն ալիւպցիլ են հետագայում ձեռագիրը վերանորոգելու ժամանակ:— Գրիչը և ծաղկողը՝ Ստեփանոս Բահանյան Առաջինի:— Պատվիրատուն՝ Վանա կամ անապատի Մոսփանոս վարդապետ:— Ժամանակը՝ 1635 թ.:— Վայրը՝ Սպահան:— Մանրությունը՝ սույն ձեռագիրը ստացված է նվիր Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարդապետից Վեհափառ Հայրապետի ձեռամբ, 1963 թվականի դեկտեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 315բ.— Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս, ամէն: Գրեցաւ թվին ՌՁԴ (1635):

Փառք անսկիզբն, անեղ, աներբ, իսկականին Հոգւոյդ բում էակցին անճառ բըղխմանն հայրենի մի բնութեանդ աստուածային, մի տէրութեանդ և միշտ էին, կատարեալդ երից անձին, կատարողի արարածի, փառք, պատիւ և զօրութիւն և բարձրագոյն իշխանութիւն, յանցեալն յալժմոյս ապագային, և անըսպառ յաւիտեանին: Ամէն (կապգիր):

Ք. 316ա.— Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զաշխատող Սուրբ Աւետարանիս Ստեփանոս անարժան էրէցս ջուղայեցի, որ բազում աշխատութեամբ զարդարեցի զսա, ոսկով և լաջվարդով, և առաքեցի զսա ի յերկիրն Վասպուրական, ի քաղաքն Վան, մօտ ի վարդապետն Ստեփանոս, ի յանապատն իմ, զի ստացէ զսա, և նա տունեալ զգին սորա Սն (55) դուռ, և զկնքահայրն իմ, որ տարաւ զսա, ոչ է տունեալ զսա, ի նա, այլ առեալ զսա և մտեալ ի նա և գնացեալ ի Դատվան, զի տարեալ վաճառեցէ ի յերկիրն Հոռոմոց աւելի գնով, և յարեաւ հողմ ի ծովոյն ի վերայ նաւին, և նոքա տարեալ նաւն ի յԱրտամետ, և ելեալ ի նաւէն և գնացեալ ի յԱր(ք. 316բ) տամետ գեօղն, զի ննջեցեան և զվաղն երթիցեն, և առաւօտն ելեալ տեսին, զի նաւն ընկըղմեալ էր ի մէջ ծովոյն, և զաւուրս հինգ բազում աշխատութեամբ և ջանօք հանեալ ի ցամաք, և տեսին, զի ամենայն ինչ ապականեալ և զՍուրբ Աւետարանս ի նոցա մէջն անարատ մնացեալ, և զմիայն կողմն էր ապականեալ և զգիր և զծաղիկս այս է, զոր տեսայք եղբայրք, և զարձեալ բերին Սպահան մօտ առ իս, և ես առեալ քակեցի և

կրկին կապն նորոգեցի, և առեալ բերի զսա ի Յամադան, և տեսեալ զսա բարեմիտ, աստուածասէր Ասլանն փափականօք ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողացն իւրոց, հօրն Մխիթարին, մօրն Խանաղէ, և զկենակցին Ղարիպին:

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք, որք հանդիպիք ի սմա, յիշեցէք ի յաղօթս ձեր զԱսլանն և զմիւս կենակիցն իւր Մարիամն, և զդուստրն իւր Ար.... (այստեղից հաջորդ թերթը ընկել է և հիշատակարանն ընդհատվել է):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի առաջին երեսի կոնակում կա տպագիր մի թուղթ, որի վրա գրված է).

Armenian Holy Church of Nazareth,

2 Armenian Street, Calcutta.

Library & record room.

Presented by . . .

Reference No. 11

Register Folio No, 1

Date . . .

Ք. 1ա.— (Կա եկեղեցու ձվածե անդերեն կնիքը, որի վրա գրված է հետևյալը).

Armenian Church, Calcutta.

ՌՁԴ—1635 Մ. եպ. (Մեսրոպ Եպիսկոպոս) 1—8—1928, Կալկաթայ:

Ք. 7ա.— (Կա եկեղեցու գրադարանի ձվածե անդերեն կնիքը, որի վրա գրված է հետևյալը).

Armenian Church Library,

No. 2 Armenian Street, Calcutta.

(Գրադարանի սույն կնիքը կրկնվում է նաև հետևյալ թերթերում՝ 11ա, 16ա, 165 ա և 318բ):

Ք. 15ա.— Եւ արդ աղաչեմ, գրիչ, գրիչ:

Ք. 212բ.— Ես համազանցի Տէր Յուսէփի որդի Մամվէլ աչն եղբամբ:

Ք. 315բ.— 1635 թին Փրկին 1635:

(Շարունակելի)